





75

Printed in Turkey

12004





ՀԱՏԸՆՏԻՐ

ՊԵՏՄՈՒԹԻՒՆԻ ՎԱՐՈՒՑ

ՕՍՄԱՆՆԵՐՆ ԹԵԳԼԻՈՐԱՅ

ԵՒ

ՎԼԳՐԱՅ



2-36.

905-ԱԿ

պ

ՀԱՏԸՆՏԻՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻ ՎԱՐՈՒՑ

ՕՍՄԱՆԵԱՆ ԹԵԳԵՒՈՐԸՅ

ԵՒ

ՎԼԶՐԸՅ

ՏՊԱԳՐԾԱԼ ԾԱՌԻՒՄ

ՄԵՆԱՊԱՏԻ ՍԻՒԼԷՄԱՆ ՓԱՇՏԵՒ

ՄԵԾԻ ԴԵՍՊԱՆԻՆ ՕՍՄԱՆԵԱՆՑ Ի ՓԱՐՒՉ

1229

9234-57



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1848

9(56)



MAHMOUD II.  
*Empereur des Turcs*



## Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

ՍԵ ազգին ընտիր կատարելութեանցը մէկը ճանչցուած է ամէն ժամանակ իր խոհական վարմունքը՝ որով ոչ մեծութեամբ կը մտնայ իր ջախը, և ոչ նեղութեամբ կը վճատի, այլ դո՛ս սրտով և արթուն չափաւորութեամբ կը նայի որ հաւատարիմ մնայ այն սրբազան պարտքերուն որ ունի առ Բնութեան, առ տէրութիւնը և առ ընկերս։ Աւ ահա առ նախանձելի կատարելութեամբն է որ սիրելի եղած է ընդհանրապէս ամէն ատեն իր տերանցը, թէ ազգայնոց և թէ օտարաց, և մասնաւոր կերպով մը (յոմանեան տէրութեան)։

Բայց մեր ազգին առ մեծագոր տէրութեանս



աւելի ալ սա տարիներս սիրելի ըլլալուն պատ-  
ճառ ան կ'երեւնայ մեզի՝ որ յայտնապէս կը տես-  
նէ տէրութիւնը թէ իրեն սա հպատակներն ալ  
կարգէ զուրս ջանք մը սկսեր են ցուցնել որ  
ուսմանց և արուեստից և քաղաքական ու մար-  
դաւարական գիտութեանց ետևէ ըլլալով, իրենք  
ալ իրենց կողմանէ զործակից ըլլան երկրին ծաղ-  
կելուն ու երջանկութեանը, և ձեռքերնէն եկած  
ծառայութեանցը մէջ հաւատարիմ և իմաստուն  
զանուերով՝ թէ ազգին և թէ տէրութեան հաս-  
տատութիւն ըլլան: Ա՛րչափ ուրախութիւն է  
մեզի տեսնելը որ լաւ հասկըցած է սա բանս  
հիմնական մեր Ա՛հմատ Մաքայն ալ ոչ միայն  
իր առանձին և բնական բարեսէր և բազմա-  
հմուտ և մտադիր ինամօքը որով անխտիր ամե-  
նայն հպատակացը երջանկութիւնը կը հոգայ,  
այլ նաև այն խոհեմազարդ և ազնիւ Փաշանե-  
րուն վիայութեամբը՝ որ սա տարիներս Ալբո-  
պայի կողմերը ճամբորդութիւն ընելով առիթ-  
ունեցան անձամբ տեսնելու թէ ինչպէս մեր  
հայոց ազգը նաև հեռաւոր երկիրներ իր զա-  
կրները կը տանի, զգուշութեամբ կը դաստիա-

բակէ կը կրթէ , գիտութեանց և արուեստից՝ լեզուներու և քաղաքականութեան տեղեակ կ'ընէ ու նորէն իրենց հայրենիքը կը դարձնէ . և աս բանիս վրայնոյն Սէհափառ (Սահաւորը շատ անգամ բանիւ և գործով իր հաճութիւնը յայտներ է :

Ըստ տեղեկութիւնները իրեն սուող մեծապատիւ Աշխաններէն մէկն ալ Սիւլէյման Փաշան է , որ ( )ամանեան Գոնէն դեսպանութեան պաշտօնիւ Փարիզ երթալու ժամանակ կը հանդիպեցաւ Սէնեփիկ մեր վանքը , և իր ազնուական և ուսումնասէր ու բարեսէր սրբտին զգացմունքները շատ խելացի ու խրախուսական խօսքերով յայտնելէն 'ի զատ , ինքնայոժար կամօք յանձնեց մեզի որ իր ծախքովը փոքրիկ գրուածք մը հրատարակենք աշխարհաբառ՝ մեր ազգին օգտակար ու զուարճալի : Սէնք ալ պարտուպատշաճ շնորհակալութեամբ ընդունեցանք իր վեհանախան հրամանը և ընծան , և անով ահա հրատարակեցինք աս գրքոյկը , որ ( )ամանցւոյ ազգին անուանի մարդկանցը հատընտիր վարքերն է համառօտ ոճով պատմուած :

Իրաւ է որ ( )ամանեան ազգին մէջի երեւելի ան-  
 ձանց թիւը՝ սովորաբար կարծուածէն շատ աւել-  
 լի է ու մեծահասոր գրքերու նիւթ կրնայ ըլ-  
 լալ, բայց առ այժմ՝ այնպիսի գործ մը չարագրե-  
 լը մեր վախճանէն ու դիտաւորութենէն դուրս  
 երեւնալով, մենք հոս միայն ան (Վ)ազաւորներուն  
 ու ( )ամանցի վէզիւրներուն վարքերը գրինք՝ որոնց  
 տեղեկութիւնը աւելի հարկաւոր և օգտակար  
 ճանչցանք մեր ազգին, ինչպէս էր նաև Քարե-  
 րարին կամքը, որուն բարեսրտութեանը անմահ  
 յիշատակ կը փափաքինք որ ըլլայ աս մեր փոքրիկ  
 աշխատանքն ալ :





طبعی نبی وحی احسان و اعطا و اولو جہدہ  
اجرایہ و مشش اولد قلندن مساکر مزبورک  
رہبانی طرفلندن شیر مششار الیہ ختمیرینک  
اشرع الیہ نبی اعلان و اشاعہ ایچون  
اشبو محکمہ شرح و ترقیم المثلدر

در شہر و نیک

میلادینہ  
۱۸۶۸


طرف سلطنت کسنیه دن فرانسه سفارت  
جلیده سید پارس شهریه تشریف بیوریلان  
مشیر معالی سیر دولت و سلیمان رفت پاشا  
حضرتی منصف اولد قلدی شمه بهینه  
مشیر یاری اقتصامی اوزره و ندیک شهرنده  
مختاریان نام منکتره حین عریختلرندره اند  
خیره اولوق اوزره اشبو کتاب لطافت صید  
طبع و نشر اولمسنی تنسیب برلج مصارفات







# ԹԱԳԱՒՈՐՔ



## ՍՈՒՂ, ԳԵՆ ՕՍՄԵՆ Ե.

ՄԵԾԱՄԵԾ մարդկանց մէջ ուրիշներէն աւելի զարմանալի կ'ըլլան իրաւամբ անոնք որ մեծ ժողովրդեան կամ ազգի մը գլուխ և հզօր տէրութեան մը հիմնադիր ու թագաւոր կ'ըլլան : Ասոնց մէկն է ահա նաև սուրբան ( )աման , որուն անունովը կոչուեցաւ ( )ամանեան մեծազօր տէրութիւնը , և որուն ցեղէն է հինգհարիւր տարուընէ 'ի վեր նաև հիմնական թագաւորող ազգատոհմը :

( )աման գեղեցիկ մարդ մըն էր լայն ընթուիներով , միջնազոյն մազերով , սև մորուօք , քիթը սուր , մարմնոյն զոյնն ալ ցօրենի գունով . անոր համար ալ Վարա ( )աման կը կանչէին զինքը : Արքայութեանը ու ահաւոր տեսքին նայելով եղան որ իր մեծնապուն գուշակութիւն ըրին առաջուց . որոնցմէ մէկն ալ եղաւ Ապտալ տէրվիլը

որ մեծ բազէ մը տեսաւ ( )ամանին վրայ թեւերը  
 փռած, ու անկէ գուշակեց որ օր մը թագաւորի  
 պիտի: Այսօր համար ( )աման ալ երբոր թագա-  
 ւորեց, իր մարդարեւին վանք մը շինեց, ու կ'ըսեն  
 թէ, անկէց սկսաւ տէրոյի շնորհուն կարգը:

( )ամանին հօրը անունն էր Արդօղրոււ. աս  
 մարդը Աուտինայի՝ այսինքն՝ Վէօթահայի կողմ-  
 մերը իր քաջութեամբը պզտի իշխանութիւն մը  
 ձեռք ձգեր էր: ( )աման ուրիշներուն բարի գու-  
 շակութիւններովը սիրտ առած՝ կը ջանար օր իր  
 հօրմէն առած սահմանը ընդարձակէ, ու քաջու-  
 թեամբ առած տեղերուն բնակչաց սիրտը՝ ար-  
 դարութեամբ կ'որսար, հրամակելով անոնց վրայ  
 դրած իշխաններուն՝ որ տաճկաց ու քրիստոնէից  
 միակերպ իրաւունք ընեն: Այսօր առաջ երթալը  
 տեսնելով Ալայէտտին (Ն, Գ) անկայի թագաւորը  
 իշխանութեան նշաններ խրկեց իրեն. ուրիշ նշան-  
 ներու հետ թուղ մըն ալ, որ ոսկի գլխով ձողի մը  
 ծայրէ կախուած ձիու սուլ էր, թագաւորներուն  
 հին ատենէ՛ ի վեր սովորութեանը պէս: Այս-  
 օր Ալայէտտին մեռաւ, ու տէրութիւնը իրեն  
 իշխաններուն բաժնուեցաւ, ան ատեն ( )աման  
 ալ ինքնազուխ թագաւոր եղաւ, ու Անիէ-հիւր  
 ըսուած քաղաքը իր աթուր դրաւ: Միւֆթի մըն  
 ալ դրաւ հոն, որ է դէնպէտ, ու հրամակեց որ ուր-  
 բաթ օրերը խողպէին մէջ, որ տաճկներուն  
 դաւանութիւնը ու թագաւորին համար ըրած ա-  
 ղօթքնին է, իր անունն ալ յիշուի: Իսկ իր առջի

Իշխանութեան տեղերը՝ ( ) ըխան անունով որ-  
 դոյն ու ազգականացը բաժնեց : ( ) ըխան շատ  
 օգնեց իր հօրը Թաղաւորութեանը սահմանը տա-  
 բաժելու . Թաթարները վաւրնտեց , Ատրէնուս  
 բերդը առաւ , ու իր հօրը հիւանդութեանը պատ-  
 ճառաւ՝ ինքը բոլոր զօրքը հետը առած՝ դիմեց  
 Պուրայի վրայ : Վաղաքապետը երբոր տեսաւ  
 որ բանը գէշ է , խոտացաւ քաղաքը իրեն տալ՝  
 Թէ որ իրենց խնայէ ու Թողու որ երթան ազատ :  
 Մասնկալ ( ) ըխան առաւ ան անուանի մայրաքա-  
 ղաքը Վիւթանացոց , որ եղաւ տաճկըներուն  
 հին Թաղաւորանիստ քաղաքը : ( ) տման մեռնելէն  
 առաջ տեսաւ աս մեծ յաղթութիւնը , ու խրա-  
 տելով իր որդին որ արդարութեամբ ու քաղցրու-  
 Թեամբ Թաղաւորէ՝ մեռաւ 1326ին , եօթա-  
 նասուն տարուան , ու Թաղաւորութիւնը քշեց  
 քսանընթաց տարի :

Իր գերեզմանը տաճկըներուն ուխտատեղի է ,  
 ու Թէպէտ գերեզմանին արծաթ գմբէթը Պուր-  
 այի մեծ կրակին այրելէն ետքը՝ հասարակ  
 պատէ շինեցին , այսու ամենայնիւ Ալամիւշբիւմ-  
 պէթ կը կոչուի տեղին անունը : Իր դքոշակը ու  
 Թուրը Թաղաւորներուն գանձատունը կը պա-  
 հուի , ու անոր պատկերն է՝ որ ծովակալի դքո-  
 շակին ծայրը կը տեսնուի ինչուան հիմա :

## ՍՈՒԼԴԱՆ ՕՐԽԱՆ

ՍՈՒԼԴԱՆ ( ) թխան երկայնահասակ մարդ մըն էր, թխուկներ լայն, ճակատը մեծ, ընթուխները սև, ու մազերը դեղինի կը զարնէր. ասոր հայրն էր ( ) տման Մ, որուն մեռնելէն ետև ինքը տեղը անցաւ 1326ին, և իրեն մեծ եղբայրն ալ որ Մ լայէտտին փաշայ կ'ըսուէր՝ իրեն վեզիր ըրաւ, ու ինքը արտաքին պատերազմաց հետ ըլլալով, եղբայրը Մ լայէտտին տերու թխանը ծագկեցընելու ետևէ եղաւ: ( ) թխան ստակ ալ կուխեց իր անուանովը. և որովհետև իրմէ առաջ տանձկաց զօրքը գրեթէ բոլոր ձիաւոր էին, ինքը հետևակ զօրք ալ հաստատեց: Բայց երբոր զօրացը մէջ անկարգու թխաններ սկսան մոմնել, անատեն ուրիշ գունդ մը հաստատեց՝ որ բոլորն ալ քրիստոնէից տաճկըցած տղաքներն էին, ու զանոնք էնի վերի անուանեց որ Մ, որ գունդ ըսել է.


ու պարսպորդ կենաց վտանգներէն զիրենք ապահովելու համար, իրենց վրայ պարտք դրաւ որ պատերազմէ ազատ եղած ատեննին երկիր բանելու ու արուեստներու սրարապին. անոր համար ալ իրենց ուձիկը օրը մէկ փողէն աւելի չէր տար. բայց երթալով աւելցաւ աս իրենց ուձիկը մինչև եօթը փող: Առաջ ասոնց թիւը տարուէ տարի հազարական հոգի կ'աւելնար, զերի ընկած քրիստոնէից տղոցմէն առնելով. բայց ետքերը երբօր իրենց ձեռքին տակը եղած քրիստոնէից տղոցմէն ալ առնուլ սկսան, թիւերնին խիստ շատցաւ: Իրենց զրօշակը կարմիր էր՝ վըրան լուսին ու Վառնի թուրը, որ Սահմէտի չորս յաջորդներէն մէկն էր: Այս զօրքերը կարգաւորելէն ետքը՝ Վիկիոյ վրայ յարձակեցաւ, որ ան ատեն Յունաց ձեռքն էր: Վաղաքացիները սովէնեղուած, անճնատուր եղան. ( ) իման խաղաղութեամբ քաղաքը մտնելով, ան հռչակաւոր եկեղեցին՝ որուն մէջ երկու տիեզերական Վիկիոյ ժողովքները եղեր էին՝ մշկիթ դարձուց. ետքը անոր մօտերը զպրոց ու աղքատանոց ալ կանգնեց, որուն մէջ երբեմն ինքն ալ կը ծառայէր կ'ըսեն: Ատքը իր Սիւլէյման օրդին՝ Վիկիոյ քաղաքապետ դնելով, և ուրիշ տեղերու ալ պատերազմով տիրելէն ետև՝ սկսաւ իր թագաւորական քաղաքը Պուրսան զարդարել:

Յունաց Վոստանդին Վանտակուզէնու կայսեր հետ ալ խնամուլ թիւն ըրաւ՝ (d) Կոզորա աղջիկը

առնելով, որուն համար Եւսիիւտար փառաւոր հարկիրներ եղան : Ըստ ինասնութիւնը դուռ մը բացաւ ( ) իսանին՝ որ Յունաց Աւրոտայի մասին մէջ ունեցած երկիրները մանկ : ու երբոր քսան տարիէն ետե խոտլութիւն ելաւ Յունաց մէջ, ( ) իսանին որդին Սիւլէյման փաշա, որ Բայէտօի նէն ետե վէզիր էր եղեր, ըստերով ու զօրքով ասդին անցաւ ու շէմէնլիք բերդը, Ալիսօլու քաղաքը և ուրիշ տեղուանք ալ առաւ, ու հոն տաճիկներ բնակեցուց : Բայց Սիւլէյման երկար ատեն չկրցաւ վայելել իր յաղթութիւնը. երկու տարիէն ետքը ձիւն իյնալով մեռաւ : Սուլթան ( ) իսան իր որդւոյն մահուանը վրայ սաստիկ ցաւելով, երեսունըհինգ տարի թագաւորելէն ետքը մեռաւ եօթանասունըհինգ տարեկան :







## ՄՈՒՆԻԿԱՆ ՄՈՒՐԱՏ Ը.

Ընթացողը ( ) ըխանայ պղտիկ որդին էր , որ Սիւլէյման իր մեծ եղբայրը մեռած ըլլալով՝ հօրը մահուանէն ետքը ինքը անցաւ անոր տեղը 1361ին , ու եղբօրը քաջութեամբ առած սահմանները ալ աւելի ընդարձակեց : Վնչուան ան տներ ստորութիւն էր որ տաճկաց զօրքին հետ կ'երթար Պուրսայի դատաւորն ալ . բայց Սուրատ անոր տեղը զատ դատաւոր մը զօրքին վրայ դրաւ , որ անոր համար քաթի սոսէր կամ ռամիօրէն քաթի սոսէր կոչուեցաւ : Սուրատ տաճկաց քաջ թագաւորներուն մէկը եղաւ . Վտիրնէ ու Փիլիպպէ ամուր քաղաքները առնելու ատեն այնչափ գերի առին զօրքը՝ որ հարիւր քսանը հինգ ստրկի կը ծախուէր մէկ գերին . անոր համար գերիներուն արժէքին հինգ մասին մէկը տուրք կ'առնէր անոնցմէ . անկէ մնաց իսթէնձ անունը , որ հինգ ըսել է :



Մուրատ ամենևին կարդալ գրել չէր գիտէր, ա-  
նոր համար իր թշնամիներուն յաղթելէն ետքը  
հաշտութեան համար դաշնագիր ընելու ատե-  
նը՝ կնիքի տեղ ձեռքը թանաքի մէջ թաթիած  
թղթին վրայ կը տպէր . դաշն ըսուածը ան-  
է, որ ետքը վարպետ գրագիրները աղուորցուցին,  
իրենց ատենուան թագաւորին ու անոր հօրը ա-  
նունը մէջը խառնելով փակադրի պէս :

Ուրահ Պուղտանի մէջ ալ շատ բերդեր ու քաղ-  
քքներ առաւ Մուրատ, ու ան ատենէն է որ  
Պուղտախան Պուղտան ալ կոչուեցաւ, որովհետեւ  
ան ատեն հոն տիրող իշխանին անունը Պողտան  
էր, այսինքն Նստուածատուր :

Մուրատ ուրիշ շատ քաղքներ ալ առաւ, ու  
երեսունութթը յաղթութիւն կանգնեց : Իր  
մեծ ուժը ու թեւթիկունքը Խայրէտաին փաշան  
էր, որ քսանըթթը տարուրնէ՝ ի վեր իրեն կ'օգ-  
նէր խորհրդով ու բազկաւ, իր հօրը ( ) իսանին  
ալ նոյնպէս ծառայեր էր երեսունըհինգ տարի,  
շատ տարի ալ ( ) սնանին որ իր սպասն էր . անանկ  
որ հարիւր տարուան ծերութեան ատենն ալ իր  
խեղքէն թշնամիները կը սարսափէին : Աստի եր-  
բոր Խայրէտաին մեռաւ, թշնամեաց զլիաւո-  
րը՝ որ էր Նայրէտաին Վարաւանի թագաւորը  
Մուրատին փեսան, իր աներոջը դէմ պատերազմ  
բացաւ, ու Վանխայի մօտ երկու կողմէն շատ զօր-  
քով բանակեցան : Մուրատ անանկ վարպետ  
կերպով շարեց իր զօրքը, որ տաճկներուն օրի-


նակ եղաւ անկէ ետքը ամէն պատերազմի մէջ ա-  
նանկ շարելու . ինքը բանակին մէջտեղն էր, ե-  
նիւէրինները առջևէն, որդին աջ թևին զօրավար,  
ձախ թևին ու ետևին ալ ուրիշ երևելի զօրա-  
վարները : Սաստիկ զարնուելէն ու շատ մեծ  
ջարդ ընելէն ետև պաշարեցին Վ անխաբաղաբը :  
Այլատիտին խոնարհեցաւ, իրկեց իր կինը՝ որ էր  
Սուրատին աղջիկը՝ որ հաշտութիւն ընէ : Սու-  
րատ ընդունեցաւ աղջկանը ազաւանքը, ու հրա-  
ման տուաւ որ դայ թագաւորը իր ձեռքը պահէ,  
ու ամէն առած տեղումքը նորէն իրեն բաշխեց :

Սրբիերն ալ ռի ունէին Սուրատին դէմ, ու  
երբոր տեսան որ պատերազմներէ յոգնած էր, ու  
Ռուղարաց հետ ալ դեռ պատերազմի մէջ էր,  
սիրտ առին, ու իրենց հետ միաբանելով իրենց նիւ  
զակակիցներն ալ՝ Պոննացիները, Անաուուները,  
Լէհերը ու Սաճառները, պատերազմ բացին, ու  
Պոսուլա դաշտը՝ Պոննայի հարաւակողմը դիմացէ  
դիմաց կեցան : Հետևեալ օրը սկսաւ պատերազմը .  
հոն տեղը ստացաւ Պայէզիտ Սուրատայ որդին  
Երրորդը մահանունը, իր կայծակի պէս թշնա-  
մեաց զօրքը զարնելուն համար : Ետք օրինակին  
հետևեցան ամէն զօրքն ալ, անանկ որ արխնլուայ  
ըրին դաշտը, ու Երթնիցա դետը՝ որ դաշտին մէ-  
ջէն կ'անցնէր՝ արեան գոյն դարձաւ : Սրբիերը ու  
Ժով յաղթելէն յոյսերնին կտրեցին . իրենց մէջէն  
մէկը Սիրշ Բոսպիլովիչ անունով մեռած ընկած  
դիակոյտներուն վրայէն վազեց եկաւ ենիւէրի-

ներուն ձայն տալով որ թագաւորին հետ խօսք մը  
ունիմք. թագաւորն ալ նշան տուաւ որ թողուն  
զինքը : Ս'իբջ թագաւորին ոտքը սրապնելու սկս  
ծռելու ատենը , թուրը փորը խոթեց . թիկնա-  
սրահները վրայ վազեցին , ինքը անոնցմէ շատն ալ  
զարկաւ մեռուց , բայց ետքը ետքը անոնց բարինս  
թեննէն յաղթուեցաւ . իր մարմինը կտոր կտոր  
ըրին , ու զէնքն ու զրահները՝ իրն ալ ու իր ձիունն  
ալ կ'ըսեն թէ Աստատնդնուսօլայց զինարանին  
մէջ սրահուած է մինչև հիմն :

Իսկ Ս'ուրաս թէ և ծանր վիրաւորուած էր ,  
բայց զեռ չմեռած՝ սպառերազմին յաղթուածեա  
նը աւետիար ըեց , ու Սրբֆերուն Ազար թա  
գաւորը գերի իր ոտքը բերած տեսաւ , ու ետքը  
աչուրները գոցեց : Այս թանասունըմէկ տարեկան  
մեռաւ՝ երեսուն տարի թագաւորելէն ետքը . մար  
մինը թաղեցին Պուրաս մեծ մզկիթին մէջ՝ որ  
ինքը շիներ էր , որովհետև իր կրօնքին նախան-  
ձաւոր էր , ու առանց աղօթքի բանի մը ձեռք  
չէր զարնէր :





## ՍՈՒՂԳՒՆ ՊԵՅԼՕՒՏ Ե.

ՊԵՅԼՕՒՏ Սուրառ առաջինին որդին էր որ 1389ին անցնելով իր հօրը աթուր քաջութեամբն ու խելքովը ընդարձակեց օսմանեան տերութիւնը: Եւ ից մէջ շատ յաղթութիւններ ընելէն ետքը միտքը դրաւ հունաստանի կղզիներն ու Արտանդնուպօլիսն ալ ձեռք ձգելու. ուստի վաթսուննաւով Վիտս կամ Սագըղ կղզին անցնելով, բոլոր երկիրը այրեց աւերեց: Վանապէս (Սյուսից), Վուէ զարներուն, Սլահներուն, Պոնապիներուն ու Սաճառներուն երկիրը շատ զօրք խաւրելով, ամէն տեղ աւրըշտրկեց: Պայեղիտ այսչափ յաղթութիւններով ինքն իրմէ դուրս ելած՝ սկսաւ անհոգ ըլլալ իր կառավարութեանը մէջ. ու տաճկաց օրէնքին հակառակ՝ ինքզինքը խումի տրւաւ: Բայց ետքը երբոր տեսաւ որ բոլոր իշխաններն ու ժողովուրդն ալ իրեն հետեւելով անօրէնութիւնները կը շատնային, սկսաւ սաստիկ սրատիժ սպառնալ յանցաւորներուն: ( )ը մը ութ-

սուն դատաւոր մէկէն այրել ուզեց՝ անոնց անիրաւութեանը ու կաշառք առնելուն համար . իր ծաղրածուն զխնացը ելաւ , ու խնդրեց որ զինքը դեսպան զրկէ Արատանդնուպօլիս . Պայէզիտ երբոր պատճառը հարցուց , ծաղրածուն պատասխան տուաւ . Որպէս զի Հունաց կայսրէն ութսուն հատ խնաստուն արեղայ բերեմ , որ անտգէտ դատաւորներուն տեղը դնենք : Թագաւորը հասկըցաւ միտքը՝ որ անոնց կաշառք առնելուն ու անիրաւութիւն ընելուն պատճառը կարգաւորեալ թշակ չունենալէն էր , ու սահմանեց որ ամէն դատաստանէն հարիւրին երկուքը դատաւորին արուի : Տեքն ալ անկեց ետև բորորս զին խումը դաղրեցուց . և որպէս զի Ժողովրդեան ալ բարի օրինակ տայ , Պուրսայի մէջ երկու մզկիթ շինեց , և Նզիպատտի ամիրապետէն խընդրելով՝ ինքը եղաւ առջի անգամ Սուլթան անուներ առնողը :

Մաճառներուն Թագաւորը Օ իկմունտ՝ հաշտութիւն ընելու համար դեսպան զրկեց Պայէզիտին . բայց երբոր Պայէզիտ յանձն չառաւ հաշտուելու , Օ իկմունտ Վաղդիսացոց և Ուլահներուն հետ մէկ եղած՝ պատերազմի ելաւ : Ընչի բերան Վաղդիսացիք մեծ ջարդ տուին ենիւլերիններուն , ու զանոնք փախուցին ինչուան իրենց մօտիկ բլուրը . բայց երբոր բլուրին անդիի կողմը Տաճկաց սոսկալի բանակը տեսան , վախնալով եւ քաշուեցան , ու Մաճառներուն Թագաւորն

ալ Արատանդնուպօլիս փախաւ : Պայէզիտին  
 աչքն ալ շատոնց ան քաղաքին վրայ էր , ուստի  
 նորէն զրկեց իր վէզերը Լևի փաշան որ մինչև քա  
 ղաքին դուռը հասնելով Յունաց Յովհաննէս  
 կայսրը նեղը խոթեց , ու քաղաքին մէջ մնկի թ մը  
 ու տաճկի ատեան կանգնել տուաւ . քիչ ատենէն  
 ալ բոլոր Յունաստանի ու Սուայու տիրեց Պայէ  
 զիտ : Բայց պէտք եղաւ որ շուտով Լևիս դառ  
 նաց , որովհետև Սէնկթիմուր (Թաթարաց խա  
 նը սկսեր էր անոր երկիրները աւրըշարկել , ու  
 Սերաստիա քաղաքին ալ տիրեր էր : Աւստի շու  
 տով պատերազմի պատրաստուեցան երկու կողմէն  
 ալ բիւրաւոր զօրքերով : Պայէզիտի բանակին  
 մեծ մասը թնամեաց կողմն անցաւ , շատն ալ  
 ջարդուեցան , ինքն ալ փախչելու ատեն՝ ձիուն հետ  
 գլորեցաւ , (Թաթարաց ձեռքը գերի ընկաւ : Լու  
 ջի բերան Սէնկթիմուր շատ սրատիւ ըրաւ իրեն ,  
 ու իրէք փառաւոր վրաններ տուաւ՝ որ հանգիստ  
 բնակի . բայց երբոր խնացաւ որ տաճկըները  
 գետնի տակէն ճամբայ բացեր են՝ զանիկայ ազա  
 տելու համար , հրամմեց որ գիշերը ոտքին շղթայ  
 զարնեն , ու աղէկ պահպանութիւն ընեն վրան :  
 Եւ որովհետև խուցին դուռը երկաթ վանդակ էր ,  
 անկէց ըսուեցաւ թէ Սէնկթիմուր զՊայէզիտը  
 վանդակի մէջ զրեր է : Եւսպէտով Պայէզիտը գե  
 ղութեան մէջ քառասունչորս տարեկան մեռաւ  
 1403ին , ու Սէնկթիմուրին հրամանաւը Պուրաս  
 քաղաքին մէջ թաղուեցաւ :



## ՍՈՒԼԴԱՆ ՄԷՆԷՄԻՍ ԵՒ

ՍՈՒԼԴԱՆ ՄԷՆԷՄԻՍ 1413ին թագաւորեց . ու անանկ ազուոր մարդ մըն էր որ անոր համար իր մականունը Չէլէպի կոչուեցաւ . բայց իր արդարութիւնը , առատաձեռնութիւնը ու անուշ բնութիւնը ալ աւելի սիրելի բրին գինքը , ոչ միայն իր ազգին՝ այլ և իր քրիստոնեայ հայատակներուն : Իր խաղաղասիրութիւնը ան աստիճանի կը հասնէր , որ եւրոպական տէրութեանց դեսպանները ընդունելու ատենն ըսաւ անոնց որ զրեն իրենց թագաւորներուն , թէ ինքը ամենուն հետ խաղաղութիւն կ'ուզէ ընել , ու ամենէն խաղաղութիւն կը խնդրէ . իսկ խուլութիւն հանողին դատաստանը՝ Բստուած խաղաղութեան ընէ : Բայց որչափ խաղաղասէր էր , կարծես որ այնչափ աւելի սրատերազմ եղաւ իր օրը , որոնց զլիաւորները էին Վարամանի իշխանին հետ , Ա կենտիկեցւոց հետ , Ահացւոց , Սաճառներուն , թագաւորներուն հետ : Բստնցմէ՛ի զստնաւ իր ազգէն ալ նոր աղանդաւորներ իրեն դէմ ելան , որոնց



դէմ շատ պատերազմեցաւ ինչուան որ յաղթեց :  
 Բայց ատենէն սաստիկ պատերազմ իրեն դէմ  
 Տիւզմէ Սուղաֆայինը եղաւ :

Սէհէմմէտին մեծ եղբայրը Սուղաֆա՛  
 Վաղատիայի մօտ պատերազմի մը մէջ անցայտ  
 եղեր էր, ոմանք կ'ըսեն թէ մեռեր էր, ուրիշնե-  
 րը թէ փախեր էր : Ըս Տիւզմէ Սուղաֆա  
 ըսածնիս դուքս ելաւ՝ ըսելով թէ ինքը ան Սու-  
 դաֆան էր՝ Պայէզիտի մեծ որդին, հօրը ա-  
 թուին օրինաւոր ժառանգ . ու կան պատմիչներ  
 ալ որ իրաւ ան էր կ'ըսեն : Իրաւ ըլլայ՝ սուտ ըլ-  
 լայ, ասոր հետ միացան շատերը, ու մեծերէն ալ  
 ոմանք : Սէհէմմէտ անոր դէմ ելաւ ու Սեւա-  
 նիկի մօտ յաղթեց ու ցրուեց անոր զօրքը : Սու-  
 դաֆան Սեւանիկ փախաւ, որովհետեւ ան ատե-  
 նը Սեւանիկ հօտմըներուն ձեռքն էր, ու ան ա-  
 տենի կայսրն ալ Սանուէլ շատ բարեկամ էր  
 Սէհէմմէտին : Իրաւ տաճկաց թագաւորը անոր  
 օգնութեամբը ժառանգեր էր իրեն հայրենի ա-  
 թուր, բայց ինքն ալ թագաւորածին պէս անոր  
 տուեր էր Սեւանիկ (Սեւաղիային ու Վար-  
 մարային բերդերը, ու անլոյծ դաշն բարեկամու-  
 թեան դրեր էին մէկմէկու հետ . անոր համար  
 Սէհէմմէտ ուզեց կայսրէն իր թշնամին : Վը-  
 ժուարին էր չէ ըսելը . բայց խեղացի թագաւո-  
 րի մը ծանր չիզար պարտք եղած խօսքը ըսել, թէ և  
 իրեն կամայը դէմ ըլլայ : Այսորը անուշութեամբ  
 իրեն խնայուց որ հաւատարմութեան դէմ էր սու-

ինքն աստիճանած մարդը մատնել. բայց երգու-  
մով խօսք տուա՝ որ չթողու Մուսղաֆան ա-  
զատ : Մէհէմմէտ հաւանեցաւ կայսեր լտածին ,  
ու մանաւանդ ինքը կը խրկէր Մուսղաֆային  
ասորուստը :

Եւ յաղթութենէս ետքը շատ տարի չանցաւ՝  
Մէհէմմէտ ձիով Լատիրնէ դառնալու ատենը կա-  
թուածով մը ձիէն վար ընկաւ : Եւ ինչ զինքը Լա-  
տիրնէ տարին . ու երբոր մեռնելու վրայ էր , կան-  
չեց իր հաւատարիմ վէզիրը Պայէզիտ , որ շատ քաջ  
մարդ էր , ու իր աջ բազուկը եղեր էր պատերազմ  
ներու մէջ . անոր յանձնեց իր որդին Մուրատը՝  
որ զինքը թագաւորեցրնէ : Բայց որովհետեւ  
Մուրատ Բմասխայի փաշա էր , մտածեց Պայէ-  
զիտ որ թագաւորին մեռնելը ծածկէ՝ ինչուան  
որ խնացրնեն Մուրատին որ դայ թագաւորէ :  
Եւ որ համար կ'ուզէր զօրացը կէսը Բսիա խրկել  
նոր թագաւորին կողմը զօրացրնելու համար .  
բայց ենիշերիները , ինչուան որ թագաւորը  
չտեսնէնք՝ չէնք երթար ըսին : Այդը ընկա-  
Պայէզիտ , բայց ճարպիկ բժշկի մը խորհրդովը  
նստուց մեռելը հազուեցուցած մութ պատու-  
հանի մը ետեւ , ու հաւատարիմ ծառաներուն  
մէկը մեռելին ետեւը կեցած՝ մուշտակին տա-  
կէն թևը կը շարժէր բարեւ տալու պէս : Անի-  
չէրիներուն ալ անանկ հասկըցուց որ թագաւորին  
առողջութեանը վրաս էր օգտեսնելը , բժիշկները  
արգիլէր էին . ասանկով ենիշերիները զոհ ե-

ղան ու թագաւորին երկար կեանք մտղթերով  
 երան դնացին Միսիա : Վատասուն օրէն դարձաւ  
 սուրհանդակը որ Միսիա գնացեր էր , ու Սու-  
 րատին Պուրսա հասնելը ու թագաւորելը ու  
 Սէհէմմէտին մահը մէկտեղ խնայուեցաւ : Մի  
 թագաւորներուն մահը ծածուկ պահելու սովոր  
 ու թիւնը ան ատենէն մնաւ , ու երկայն ժամա-  
 նակ քշեց՝ շատ անգամ յաջորդին հեռու գտնուե-  
 լուն սրատնաւուր , որպէս զի մինչև որ դայ՝ խոռ-  
 վու թիւն մը չէլէ . բայց ետքը երբոր սովորու-  
 թիւն եղաւ թագաւորին ժառանգ որդին պա-  
 լատը գոցած պահել , առջի սովորու թիւնը վեր-  
 ցուեցաւ :

Սէհէմմէտ երևելի շինուածներ թողուց ,  
 որոնցմէ մէկն էր Նաիրնէի մեծ մզկիթը՝ Սու-  
 ճամի ըսուած , ու Պուրսայի Նշիլ խմարէթ մզկի-  
 թը , որուն գմբէթները ու մինարէները առաջուց  
 կանաչագոյն շինիներով սրատած ըլլալուն համար  
 Նշիլ կոչուեցաւ : Մի մզկիթին քովը Սէհէմմէ-  
 տին հոյակապ շիրիմ մը շինեցին , ուր որ մեռնե-  
 լէն ետև մարմինը Նաիրնէէն մեծ հանդիսով ու  
 շատ զօրքերով բերեր էին : Վատասունուիրեք  
 տարուան էր Սէհէմմէտ երբոր մեռաւ . ու թը  
 տարի միայն թագաւորեց : Իր մեծ պարծանքնե-  
 լուն մէկն ալ , որ միանգամայն իր Նէլէպի անուա-  
 նը արժանի ախորժակ ունենալը կը ցուցնէ , ան  
 է որ՝ իր օրը սկսաւ տաճկրներուն մէջ գիտու-  
 թիւնը ծաղկիլ , ու զիրք զրոյներ երան :

9234-57



## ՍՈՒԼԴԱՆ ՄՈՒՐԱՏ Բ.

ՍՈՒԼԴԱՆ ՄՈՒՐԱՏ Բ. 18 տարուան էր երբ որ իր հօրը ՄԷՏԷՄԻՔՏԻՆ տեղը անցաւ 1421 ին :  
Այժիպ տաճկի թաղաւորաց մէջ երևելի աշխարհակախերէն մէկը եղած է . ըրած պատերազմներն ու յաղթութիւնները անբաւ են . բայց ասոնց մէջ ալ երևելիները Ասատանդնու պօլոց ու Վեսաղունիկի սրատերազմներն ըլլալով կ'արժէ որ հաս տեղս անոնց վրայ քիչ մը աւելի տեղեկութիւն տանք : Մուլղան ՄՈՒՐԱՏ թաղաւոր եղաւ չեղաւ՝ Յունաց Սանուէլ կայսրը դեսպան զրկեց իրեն , պահանջելով անոր երկու եղբարքը՝ պատանդի տեղ , ինչպէս որ սուլղան ՄԷՏԷՄԻՔՏ ապսպրեր էր . միանգամայն կը սպառնար՝ որ եթէ իրեն աս կամքը չկատարէ , ան աւտեն ինքն ալ Տիւղմէ Մուսղափան Պայէզիաի որդին կ'արձրկէ որ երթայ իրեն վրէժը առնու .

Մուրատ առ բանա յանձն չառնելուն , Յունաց  
կայսրը իր սարանացածը ըրաւ . և իրաւցընէ  
Մուսղաֆան Նինէյտ անունով անզգամի մը  
հետ Մուրատին և իրեն տէրութեանը շատ նե-  
ղութիւն հասցընելէն ետև , վերջապէս յաղթուե-  
ցաւ ու անոր ձեռքը գերի ընկաւ : Բայց սուլզան  
Մուրատին առ բանիս համար սիրտը սցրած ըլ-  
լալով , քսան հազար զօրքով Առատանդուսպօլիս  
անցաւ , և բոլոր քաղաքին մօտ եղած երկիրները  
աւերջարկելով ու մարդիկը գերեւով , եկաւ քաղա-  
քը սաշարեց . և զօրքը գրգռելու համար ըսաւ  
Թէ բոլոր քաղաքը ձեզի աւար ըլլայ : Վաղբին  
մէջ մարդ չէր մնացած , և ամէնքը սարխապնե-  
լուն վրայ վաղէր Թշնամեաց հետ կը կուռէին .  
ինչուան նաև կանայքն ու տղաքը :

Բայց իրիկուան դէմ լուր հասաւ Մուրատին  
Թէ իր սղտի եղբայրը Թաղաւորել կ'ուզէ Վի-  
կիոյ մէջ . ուստի մէկէն սաշարումը Թողուց ու  
Վիկիա դարձաւ , և հոն իր եղբայրը բռնեց ու  
կախել տուաւ :

Սեփաղանիկեցիք ( ) աննցուց յարձակումնը  
ներէն ձանձրացած , իրենց քաղաքը Վենետիկեցուց  
ծախեր էին : Մուրատ առ բանիս տաստիկ բար-  
կացած , զրկեց համզա պէյը՝ որ քաղաքացիները  
նեղը խոթելով նուաձէ , խոտատնալով որ եթէ  
անձնատուր ըլլան՝ իրենց չլնասեր : Բայց ետքը  
տեսնելով որ առ խոտամունքը անօգուտ եղաւ ,  
զօրացը սիրտ տուաւ , ու խոտացաւ որ բաց ՚ի

քաղաքին գեանէն ամէն բան իրենց թողու : Այսու ամենայնիւ շատ դժուարութեամբ կրցաւ առնուլ ան քաղաքը . որովհետեւ բնակիչները սարխապներուն վրայ ժողովուած՝ վեր ելլել ուզողները քարերով կը հալածէին : Սոսկալի տեսարան էր , երբոր ան զազանի պէս զօրքը քաղաքին մէջը յարձըկեցան ու ամէն բան այրելով թալլելով , մարդիկն ալ բոլոր գերի կը տանէին : Արջապէս Սուրատ տեսնելով որ բոլոր քաղաքը աւերակ դարձեր է , հրամմեց որ գնուած գերիները դարձեալ հոն տեղը բնակին : Այլեղեցիներէն շատը արդէն փուլցեր էին , մնացածներն ալ մղկիթ ու բաղնիք դարձուցին :

Սուրան Սուրատ Ուլահներուն , Սրֆերուն ու Սաճառներուն հետ ալ շատ պատերազմներ ընելէն ետքը , վերջապէս անոնց հետ հաշտութիւն ընելով իր Սէհէմէտ որդին իր տեղը դրաւ ու ինքը Սազնեսիա քաջուեցաւ : Բայց երբոր լսեց թէ հաշտութիւն ընողները երգմունքը ոտքի տակ առնելով՝ իրեն երկիրները սկսեր են կոխել , անհամար զօրքով նորէն պատերազմի պատրաստուեցաւ . ու մեծ ջարդ ընելէն ետքը՝ իր զօրքը Սաճառներուն Ալաոխալա թագաւորին գլուխն ալ կտրեցին , ու թագաւորին բերին . ան ալ Պուրսայի քաղաքապետին զրկեց , իրեն ըրած յաղթութեանը նշան : Այնկէց ետեւ Սուայի վրայ յարձըկելով , Սորնթոս քաղաքը այրեց , ու բոլոր երկիրը իրեն հարկատու ըրաւ : Այնկէց Ալաանիա



անցաւ հարիւր հազար զօրքով՝ Կսկէնտէր անու-  
նով իշխանին վրայ . բայց երբոր զանիկայ չկրցաւ  
ձեռք ձգել, տրտմութեամբ Նաիրնէ դարձաւ ու  
հոն տեղը կաթուածէ զարնուելով՝ մեռաւ 49  
տարուան, 30 տարի թագաւորելէն ետեւ :



## ՍՈՒՎԳՐԱՆ ՄԵՆՏԻՄՄԵՆՏ Բ.

( ) ՍՄԱՆԵԱՆՑ Թագաւորներուն մէջ քիչ եղաւ ասոր պէս զօրաւոր ու միտքը դրածը առաջ տանող : Իր կերպարանքը ահաւոր էր , հասակը հըսկայածեւ , դէմքը համեմատ , քիթը երկայն , աչուրները խիստ : Թագաւորեց 1451ին , ու անօրէն միտքը դրաւ Աստամանդուպօլիսը առնելու : Պզտի կայծ մը մեծ կրակներ կը բռնկեցնէ . ( ) ըխան Սէհէմէտին ազգականներէն մէկը՝ իր Թշնամին՝ Պօլսոյ մէջ արգիլած էր , որուն Սէհէմէտ ռոճիկ խոստացեր էր զրկել : Ըն առնի կայսրը Աստամանդին Պաղէօրոյ իրեն դեսպան զրկեց որ խոստանքը կատարէ , և սպառնալիք ալ բրաւ որ՝ եթէ ռոճիկը չլճարես ( ) ըխանը կ'արձրկեմ : Թագաւորը յանձն առաւ՝ Վատիրնէ հասնելուն պէս զրկել ռոճիկը , բայց միտքը սպահեց աս բանը :



Ըն առեանէն սկսաւ Պօղազ իշխին բերանը Լը-  
 բոպայի կողմը ամրացրնել, հազար որմնադիր  
 ժողովեց՝ Պօղազբէսէն կամ Ռումէլի հիսարը Ը  
 սուած բերդը շինելու : Այսորը սկսաւ մտածել,  
 գեսարան զրկեց սիրտը առնելու, ու շէնքը դադ-  
 րեցրնելու . բայց կրակը առած էր, Սէհէմմէտ  
 պատասխանեց որ իմ երկրիս մէջ տէր եմ բերդ  
 շինելու, ու սկսաւ պատրաստուիլ Առատանդնու-  
 պօլիսը պաշարելու : Սէժ թնդանօթ մը շինել  
 տուաւ, որուն բերանը տասուերկու քիչ էր, ու  
 ուսմբը մզոն մը հեռուն կը ձգէր : Յիսուն զոյգ  
 եղներով սկսաւ փոխադրել թնդանօթը Լախը-  
 նէէն Պօլիս, ամէն կողմերէ զօրք հանեց Պօլսոյ  
 վրայ, ու եկաւ հասաւ ինքն ալ Լըյրի գափուին  
 դիմնայր ինջաւ : Հրամսեց քաղաքը պաշարել 250  
 հազար զօրքով, մեծ թնդանօթն ալ սուրբ Ռու-  
 մանտի գրանն առջին տեղաւորել տուաւ, ուստի  
 անկէց ետքը ան դուռը թօփ գափու ըսուեցաւ :  
 Ռըրիշ թնդանօթներն ալ ու մեքենաները ամէն  
 դին շարեց, ծովէն ալ 420 նաւ զրկեց, որոնց  
 սուաջնորդ էր Պալթա անուշտով Բուլղար մը . ու  
 նոր համար նաւերուն կեցած տեղի մօտիկ գեղը  
 Պալթա լինանը կոչուեցաւ :

Թէպէտ Յոյներն ալ ներսէն դրսէն պատրաստ  
 տու թիւն կը տեսնային, ու յոյսերնին Ղենուլա-  
 ցոց օգնութեանը վրայ դրէր էին, բայց տաճկը  
 ներուն պատրաստութիւնը քսան անգամ աւելի  
 էր : Սէհէմմէտին մեծ վախը ան էր որ Յոյն-

րը ահագին շղթայ մը ձգեր էին Կոստանդնու-  
 պօլսէն մինչև 'ի Վալաթիա ծովուն երեսը, ու  
 անկարելի էր նաւով ներս մտնելը : Ղենուլայէն  
 օգնութիւն գալու ատենն ալ նաւամարտ մը բռն-  
 կեցաւ . ու թէպէտ ինքը ամէն հնարք բանեցուց  
 Ղենուլացոց նաւերը արգիլելու, մինչև ձիովը  
 հանդերձ ծովուն մէջը ցատքելով իր զօրացը հետ,  
 բայց աս իր կարգէ դուրս սրտոտութիւնն ալ չօգ-  
 տեց, Յոյները շղթան թուլցուցին, Ղենուլացիքը  
 ներս մտուցին : Ըստ փորձը՝ որ իր մեծ վնասովը  
 րբաւ՝ իրեն խելք սորվեցուց . տեսնելով որ ծո-  
 վուն վրայ ձիավարելը չյաջողեցաւ՝ նաւերը ցա-  
 մաքի վրայ քալեցնելու ձեռք զարկաւ : Պէշիք-  
 թաշէն ինչուան Պօլսոյ նաւահանգիստը Վա-  
 լաթիայի ետևէն երկու ժամ ճամբայ՝ լեռ-  
 ներու ու ձորերու վրայէն հաստ տախտակներէ  
 կամուրջ շինեց, ու ճարպով օծելէն ետքը՝ որ նա-  
 ւերը սահին վրայէն, եօթանասունէն աւելի խոշոր  
 նաւեր մէկ գիշերուան մէջ փողերով թմբուկներով  
 քալեցուց : Ըստուանց կանուխ Յոյները ափշեցան  
 մնացին, երբոր տեսան որ նաւերը ցամաքէն ծո-  
 վը իրենց նաւահանգստին մէջը կը թափէին :  
 Թէպէտ Ղենուլացիք ուզեցին կրակ տալ նաւե-  
 րուն, ու հարիւր յիսուն խտալացի զօրք նաւով մը  
 մօտեցան անոնց, բայց թնդանօթ մը իրենց խոր-  
 հուրդն ալ նաւն ալ գիրենք ալ ծովուն տակը ին-  
 ջեցուց, ու հազիւ իրենց զօրավարը Յուստի-  
 նեան լողալով սպրեցաւ :

Ասանկով քաղաքը ծովէն ալ սրաշարեւէն ետեւ ,  
 դեսպան դրկեց կայսեր , խոստանալով հաշտու-  
 թիւն ընել՝ թէ որ յանձն առնու հպատակիլ :  
 Այսորը սրատասխանեց՝ թէ բոլոր ընտանեօքս ու  
 հպատակներովս կը մեռնիմ , քաղաքս չեմ տար :  
 Այս ատեն Սէհէմմէտ կանչեց բոլոր զօրքը , ու  
 ըսաւ . Պարխագներէն ու տներէն զատ ամէն  
 բան ձեզի , ձեզ նայիմ՝ քաղաքը պիտի ստնէք :  
 Վիչ քաղաք եղած է , որոնց առուսմը ասանկ զար-  
 հուրելի տեսարան մը եղած ըլլայ . գոռում գո-  
 չում , փող , թմբուկ , քարերուն կարկտի պէս  
 թափիլը , հրացաններուն կրակը , թնդանօթնե-  
 րուն որոտումը , արիւնին վազուածքը , ողբը , լա-  
 ցը , ամէնքը մէկտեղ խառնուած , դատաստանի  
 օր ըրին ան օրը . փոշիին ու վառօդին մուխը  
 միայն ան խեղճ ու սիրտ չդիմանալու տեսարանը  
 կը ծածկէր : Այսորը յուսահատած՝ իր մահը  
 փնտրուելով , մտաւ Տաճկերներուն մէջ . ու շա-  
 տերը ջարդելէն ետքը , թեւերը վար ընկած՝ սկստ  
 խեղճ ձայնով մը կանչել . Սէկ քրիստոնէ մը չկայ  
 որ իս զարնէ մեռցընէ : Այսօքը դեռ չմընցուցած  
 երկու ենիչերի առջևէն ու ետևէն զարկին լմըն-  
 ցուցին իրեն հետ Յունաց կայսերութիւնը . ու  
 Սէհէմմէտ 1453ին , մայիսի 29ին մտաւ մե-  
 ռէններուն դիակոյտին վրայէն Առատանդնուպօլիս  
 քաղաքը ու շիտակ սրբուհոյն Սոփիայի եկեղե-  
 ցին ինջաւ կէսօրուան նամագը կատարեց :

Աս պատերազմը միայն բաւական է ցուցընելու

Սէհէմմէտին ինչ մարդ ըլլալը , առանց պատմելու իր ուրիշ Սըրֆերուն , Ղանաուուներուն , Ուլահներուն , Սաճաուներուն , Պանայուց , Ղէնուլուց , Սէնէտիկուց , և ուրիշ ազգաց դէմը լաճ պատերազմներն ու յաղթութիւնները : Բաւոր Յունաստանի տիրեց , Արմէթու առաւ , Սուա հարկատու ըրաւ , Սինուլ ու Տրապիզոն ալ առնելով բոլորովին Յունաց իշխանութիւնը ու Ամինենեան կայսերաց ցեղը ջնջեց , ու բոլոր Ասպադովիկայի տիրեց : Աւերջապէս եօթը մեծամեծ տէրութիւններ , ու երկու հարիւրէն եւելքազաքներ պատերազմով առաւ . մինչև Սէնէտիկուց ու Աստիովի տէրութեան մէջ ալ ոտքը դրաւ , որով Աւրոպայի տէրութիւններն ալ սկսան վախնալ . անոր համար իր մահանուները սուեցաւ Փաթիհ , այսինքն է Ղախարհակալ : Բայց իր անդթութեանը չափ չկար , երդումն ալ չէր պահէր , ու իրեն անձնատուր եղողներուն ալ չէր խնայէր : Բէֆէքազաքը առնելու ատեն մեր ազգին անակղ կտրիճներն ալ խաբէութեամբ թրէ անցուց : Սէհէմմէտ աղէկ հասկըցեր էր՝ որ յաջողութեան հոգին զաղանիքն է , միտքը մէկու մը չէր յայտնէր . կ'ըսէր որ՝ եթէ մօրուքիս մէկ մասը միտքս խմանայ , կը խլեմ՝ կրակը կը ձգեմ : Օրբ կը ժողվէր , բանակ կը հանէր , և ուր յարձրիւ իլը չէր գիտցուէր : Ղրանի 1481ին ալ շատ զօրքերով Վասիլուտար անցաւ , մէկը չէր գիտէր ուր գիտէր : Վասիլուտարէն ճամբայ ելած

ատենը քիչ մը տկար էր, Էտքը ծանրացաւ հիւանդութիւնը, ու մեռաւ Եղնիմիտի մօտ դաշտի մը մէջ 52 տարուան, 30 տարի թաղաւորելէն Էտքը: Իր մարմինը թաղեցին Պօլիս իր հիմնած մզկիթին մէջ:

Երեսարհակալութեան բաղձանքը աշխարհքներ կործանել տուաւ իրեն. բայց ինքը բնութեամբ աշխարհաշէն մարդ էր: Ինքը շինեց Սարմարայի բերդերը ու Եթի դուլէի ամրոցը. ինքը շինեց Սարայ Պուսնուի արքունիքը, որուն շրջապատն է չորս մղոն, ու Էօթը դուռ ունի. շինեց նաև Եյուպի մզկիթը, ուր որ իրենց մարգարէին դրօշակիրը Եյուպի Եյուպ թաղուած էր. ու իր անուշտոյր Սուլթան Սէհէմէտ ճամիախի ըսուած մզկիթին ալ հիմը ինք դրաւ, ուր որ թաղուեցաւ: Երոնցմէ զատ, աղքատանոց, գրքատուն, խան, աղբիւրներ, բաղնիքներ և ուրիշ մզկիթներ ալ շինելով զարդարեց նորէն Սոստանդնուպօլիս քաղաքը, որ առնելու ատենը աւերակ դարձուցեր էր:

Եւ որովհետև 40 հազարի չափ մարդ ջարդեց հոն, 60 հազարի չափ ալ գերի ըրաւ, փախչողներուն ալ թիւ չկար, քաղաքը անապատ դարձեր էր. անոր համար ուրիշ երկիրներէ գաղթականներ բերաւ բնակեցուց հոն, որոնց մէջը մեր ազգէն ալ շատ անուորներ կային: Հովակիմ Եպիսկոպոս Պուրսայի առաջնորդն ալ Պատրիարդ դրաւ, որուն յաջորդութիւն է որ կը տուէ մինչև հիմա:

Ուսմանն հողմաննէ ալ հանձարը սրակաս չէր, բայց  
 գիտութիւնները զինուց թշնամի են, խաղաղու-  
 թիւն կը սիրեն : Այսու ամենայնիւ դպրոցներ  
 շինեց, ու իմաստունները կը յարգէր՝ որ ազգէ ալ  
 ըլլային . կ'ըսեն թէ լեզուներ ալ գիտցած ըլլայ :  
 Գալրոցներուն մէջը ուսմանն կարգ ալ դրաւ, ու  
 վարժապետներուն ալ առատ վարձք սահմանեց .  
 անոր համար իր օրը մատենագիրներ շատ ելած  
 են Տաճկըներէն : ( ) րէնքներ ալ դրաւ, որ մինչև  
 հիմա կը պահուին, ու գրքին անունը կ'ըսուի Վա-  
 նուննամէի սուլդան Մէհմէտ :







## ՍՈՒԼԴԱՆ ՊԱՅԼԵՅԻՑ Բ.

ՍՈՒԼԴԱՆ Պայէզիտ դէմքով իր հօրը սոււ  
դան Մէհէմէտին շատ կը նմանէր, իսկ բարքով  
կրնանք ըսել բոլորովին հակառակ . իր վարքին  
մէջ կը տեսնենք որ առանց վերջին հարկաւորու  
թեան պատերազմ չէր ընէր : Հօրը մեռած  
ժամանակը ինքը Մնասիա գտնուելուն համար,  
որպէս զի խոտուածին մը չէլէ, իր վէզիրը սոււ  
դան Մէհէմէտի դիակը կառքի մը մէջ նստեցը  
նելով այնպէս մը ձեւացուց, իբրև թէ հիւան  
դու թեան համար Լուսիլուտարէն Առստանդնուպօ  
լիս կը դառնայ՝ բաղնիք մտնելու համար : Ուստի  
աս կերպով ինչուան որ մարմինը Պօլիս հասաւ՝  
Պայէզիտն ալ Ա օրէն հոն հասնելով, մեծ  
ուրախութեամբ զինքը ընդունեցան, ու առջի  
գործքը իր հայրը թողելն եղաւ :

Իրեն մեծ թնամին եղաւ իր Նիմեղբայրը, որ



չատ խոտիւթեանց և սրատերազմներու սրատճառ  
 ըլլալէն ետքը՝ փախաւ անցաւ Լաբոսյա, առաջ  
 Պաղղիոյ Թագաւորին քովը, ետքը Բքեքսանդր  
 Օ սրապին, որ ուզեց զանկիայ իր եղբօրը սուլ-  
 դան Պայէղիտին հետ հաշտեցնել։ Պայէղիտ  
 այնչափ կակըղցաւ որ ինչուան Թռչակ ալ կապեց  
 եղբօրը․ բայց իրեն զրկած դեսպանը որ մը Թու-  
 նաւոր ածելիով ածիլելու ատեն Ղեմին փողը քիչ  
 մը վիրաւորեց․ ան վերքէն վախճանեցաւ։

Սուլդան Պայէղիտ շատ սրատերազմներով  
 նուաճեց նաև Լաբիստոսի սուլդանը որ Ղեմին  
 գրգռոյն ու օգնականը ըլլալով, Տաճկին քանի մը  
 երկիրներուն ալ տիրեր էր։ Վմանապէս Սաճաւ-  
 ներուն ու Լեհերուն հետ շատ անգամ կռու-  
 տեցաւ, երբեմն երբեմն ալ յաղթուելով։ Բայց  
 իրեն սրատերազմներուն մէջ ամենէն երևելին  
 Սենետկեցոց հետ ըրած սրատերազմը եղաւ։

Լաբոսական տէրութիւնները Տաճկին ասանկ  
 մեծնալը տեսնելով, կը ջանային որ անոր հետ  
 բարեկամանան։ Սենետկեցիք ալ աս բանիս փա-  
 փաքելով, դեսպան գրկեցին․ բայց ուրիշ տէրու-  
 Թեանց Թնամութեամբը սուլդան Պայէղիտ ա-  
 նոնց հետ արդէն աւրուեր էր։ Աւստի վեր ՚ի  
 վերոյ հաշտութիւն մը ընելով՝ դաճաագիրն ալ  
 լատիներէն գրել տուաւ, միտքը դնելով Թէ ուրիշ  
 լեզուով զրած դաջինքը կրնայ առանց խղճի ա-  
 ըլլալ։ Բնկեց ետքը զօրաւոր նաւատորմիզով մը  
 Լյնէսրախթի կղզին սաշարեց․ Սենետկեցոց

կորմանն, ալ 150 նաւու ծովակալ գրուեցաւ Արի մանի իշխանը . սրատերազմը Սեթանի առջևը սկսաւ : Սէնեակեցւոցմէ Սորեաան ու Ղարան Ղարմենիտ զօրավարները մեռնելով, Արիմանին ալ անձնատուր եղաւ : Սուլդան Պայեղիտ Սչնէսրախթի կղզին ստնելով, Արմնթոսի ծովէդէրքը բերդ շինել տուաւ . անկէց անցաւ, Ստայու մեծ մնախն ու Սեթան քաղաքին ալ տիրեց : Յատնքէն ալ Իսկէնատը փաշան զրկեց, որ ինչուան Յիրուլի, Ստիննէ և Սիչէնցա քաղաքները հասաւ, բոլոր երկիրը աւրըշտրկելով ու թաւլելով, և Սէնեակեցիքը ստասիկ նեղը խոթեց : Իսցց անոնք վերջապէս Սաճաւնեբուն, Պաղղիացւոց ու Սորանիացւոց հետ միացան Ղարխակ զաղտին քանի մը կղզիներն Տաճկաց ձեռքէն ազատեցին :

Ըն առնները 1509ին Ատտանդնուսօլիս սաստիկ շարժ ըլլալով, 109 միկիթ, 1030 տուն, Լատիգուլէի բերդը ու արքունեաց սրարխապները բռնորովին փլուց : Ալլիաօլուին բերդերը կործանեցան . ծովն ալ բարձրանալով, Պօլսոց ու Պալթիոյ սրարխապներէն ներս սկսաւ թափիլ, ու բոլոր քաղաքը ջրով ծածկուեցաւ : Սուլդան Պայեղիտ վախէն ելաւ Ստիրննէ փախաւ . և մէկէն խորհուրդ ընելով իր մեծերուն հետ՝ 8000 հոգի սահմանեց՝ որ երկու ամսուան մէջ աւերակները նորէն շինեցին : Պայեղիտ արդէն ձերացած ըլլալով, սա թշուառութիւններն ալ ըս-

տուժմէ իրեն պատիժ սեպելով, Սաճառներուն, Սեհերուն ու Սենեակեցոց հետ ալ խաղաղութիւն ըրաւ : Բայց արտաքին պատերազմները դադրելուն պէս, սկսան ներքին խռովութիւնները իրեն որդւոցը մէջ :

Պայէզիտ իր Մհաթ որդւոյն վրայ աւելի սէր ունենալով կ'ուզէր որ իր տեղը թագաւորէ . բայց բոլոր զօրքին աւելի սիրելի եղեր էր իր Սէլիմ որդին՝ վաւրուուն ու պատերազմասէր ըլլալուն համար : Ուստի ուզելով Սէլիմ որ թագաւորական քաղքին մօտ ըլլայ, վարպետութեամբ հօրմէն խնդրեց որ իրեն Աբրուպայի մասին մէջ կուսակալութիւն մը տայ : Պայէզիտ միտքը ի մանալով, ուզածը չկատարեց . անիկայ ալ հօրը կտրին դէմ ելաւ Վէֆէ անցաւ . և խել մը աւտենէն ետև թուղթ գրեց անկէց իր հօրը, խընդրելով որ Ատիրնէ գայ հօրը ձեռքը համբուրելու, որովհետև 25 տարի է որ հայրս չեմ տեսած կ'ըսէր : Արբոր Պայէզիտ առ բանիս չհաւանեցաւ, Սէլիմ հետը գունդ մը զօրք առած՝ Ատիրնէի մօտեցաւ : Բնի փաշա վէզիրը՝ որ Մհաթի կողմն էր՝ անոր գունդը ցրուեց, ու զինքն ալ ինչուան Արիմ փախուց : Բայց որովհետև ենիչէրինները բոլոր Սէլիմին կողմն էին, սկսան Պայէզիտէն պահանջել որ Սէլիմը իր տեղը դնէ : Պայէզիտ ալ ուզեց չուզեց անոնց հաւանեցաւ . ուստի շուտով դեսպան զրկեցին որ դառնայ գայ : Արբոր Արստանդնուպօլիս հասաւ, մեծ հանդիսով ընդու-

նեցան զինքը (Թ)տի գափուի դանէն . ետքը բոլոր  
 Ժողովուրդը գրգռելով, սկսան կանչել Թէ (Թ)աւ  
 գաւորնիս ծեր ու հիւանդոտ ըլլալուն համար՝  
 կ'ուզենք որ Սէլիմը Թագաւորէ . Պայէզիտ ալ  
 ստիպուեցաւ անոնց ուղածը ընելու . բոլոր քաղա-  
 քը ուրախու Թեան ձայնով լեցուեցաւ . մէկէն ա-  
 ոխն տարին Սէլիմը, հօրը ձեռքը սպազնել տուին,  
 ու նստեցուցին Թագաւորական աթոռը :

Պայէզիտ ալ քսան օրի շափ անմխիթար կեր-  
 սով Պօլիս՝ կենալէն ետեւ, խնդրեց իր զաւ-  
 կէն որ Տիմեթիքա երթայ . որպէս զի ուր որ  
 ծնէր էր՝ հոն տեղը մեռնի : Հաւանեցաւ Սէլիմ,  
 ու ինչուան Լյափրնէ Գափուսու ըսուած տեղը  
 հետը գնաց . բայց դեռ հայրինիքը չհասած՝ իր հը-  
 րեայ բժիշկը զինքը Թուճաւորեց : Ա՛րսէն Թէ  
 Պայէզիտ խնցաւ որ աս բանս Սէլիմին ուզելովն  
 է . ուստի ան Թուճաւոր գաւաթը խմելէն ետեւ,  
 սիրտը այրած կէս մը օրհնենք կէս մը անկէճք տա-  
 լով իր որդւոյն, մեռաւ 1512ին, 30 տարի Թագա-  
 ւորելէն ետեւ : Արքայ լեց Սէլիմ իր հօրը մահը,  
 ինքն անձամբ ելաւ գնաց, ու մեծ հանդիսով  
 մարմինը Արստանդնուպօլիս բերելով՝ հօրը շինած  
 մզկիթին մէջ Թաղեց, որ իր անուամբը Սուլթան  
 Պայէզիտ կ'ըսուի, ու եօթը օր վրան սուգ բըռ-  
 նեց :

Սուլթան Պայէզիտ բնու Թեամբ դէր ու մա-  
 ղասային էր . զգեստի ու զարդարանքի կողմանէ  
 շատ չափաւոր : Աստղաբաշխու Թեան ու օրհնագի-

տութեան ալ շատ հմուտ էր . ուրիշ արուեստներն  
 ու գիտութիւնները շատ կը սիրէր ու կը ծաղկե-  
 ցընէր : Իրեն երեւելի շինուածքներուն մէջ անուա-  
 նի են Սուլդան Պայէզիտ ըսուած մզկիթը , ու  
 քովի աղքատանոցն ու դպրոցը՝ որ ինը տարուան  
 մէջ շինել տուաւ . ( ) ամանձրգի մօտ Մէխ գետին  
 վրայ շինած կամուրջը 19 կամարով . Սարուխան  
 գաւառին մէջ Վետուն գետին վրայ շինածը նոյն  
 պէս 19 կամարով . նաննապէս Սազարիէ գետին  
 վրայինը 14 կամարով : Իրեն ժամանակը 50,000  
 թռչակաւոր զօրք կային , 12,000 ենիչէրի , և  
 70 նաւ ալ միշտ սպարաւստ կը գտնուէր . ըսել է  
 որ Պայէզիտ աղէկ գիտցաւ զօրքը խաղաղութեան  
 համար գործածել . ու թէ որ սպառերազմ ալ հար-  
 կաւորեցաւ ընելու , խաղաղութիւնը ապահով-  
 ցընելու համար ըրաւ :



## ՍՈՒՎԳՐՆԵ ՍԷՎԵՍՒ Ը

ՔԱՌԱՍՈՒՆԸՏԻՆՔ տարեկան էր Սելիմ  
Թագաւորելու ատենը, ու 1512ին Թագաւորեց :  
Բարձրահասակ մարդ մըն էր, աչուրները խոշոր,  
կարմիր երեսով, կտր դէմքով : Արջափ որ իր հայ-  
րը Պայէզիտ Բ խաղաղասէր էր, այնչափ ինքը  
պատերազմասէր եղաւ . անանկ ալ բարկասիրտ էր  
որ իր վէզիլները ամսէն աւելի չէին դիմանար,  
մահը ամէն օր աչուրնուն առջին էր, կտակնին  
ծոցերնին կը կրէին . անանկ որ առակ եղաւ՝ մեռ-  
նիս ըսելու տեղը, Սելիմին վէզիլ ըլլաւ ըսել :  
Ըստ համար ալ իր մահանունը Ալաուզ կոչուե-  
ցաւ :

Իր կեանքը պատերազմով անցուց, ու խորհրդ-  
դականներուն մէջէն անոնց կը հաւանէր ու կը վար-  
ձատրէր՝ որոնք որ զինքը պատերազմի կը յորդո-  
րէին . խաղաղութիւն ուզողը կը պատժուէր :



Մտոր համար թշնամիքն ալ արական շեղան, թէ  
 ընտանիներէն և թէ օտարներէն : Աղբարքն ու  
 եղբօրորդիքը՝ որը խաբէութեամբ, որը պատե-  
 ըազմով, ամէնքն ալ սպաննեց : Մէջերնին եօթը  
 տարեկան անմեղ տղան ալ, որ օտքը ինկած կ'ա-  
 զաչէր՝ խոտանալով ինչուան իր մահը ծառայել  
 թագաւորին, չկրցաւ անոր սիրտը շարժել :

Իր պատերազմներուն ամենէն մեծը եղաւ  
 Պարսից Իսմայէլ շահին հետ ըրած պատերազ-  
 մը . զօրքը յոգնած ու ձանձրացած՝ ետ կ'ուզէին  
 դառնալ, ինքը բռնի զիրենք առաջ կը քշէր : Օջը-  
 քերը յորդորելու կերպն ալ գիտէր, ան ատենը  
 արևը խաւարեցաւ, ու որովհետև Պարսիկները  
 ատենով արև կը պաշտէին, Մէլիմ թշնամիներ-  
 նուս աստուածը իրենցմէ երես դարձուց ըսելով՝  
 զօրացը սիրտ կուտար : Տարիւր քսան հազար զօր-  
 քով հասաւ Իսմայէլին վրայ, ջարդեց՝ ջարդուե-  
 ցաւ, Իսմայէլի կիներն ալ գերի բռնեց : Իսմայէլն ալ  
 կը բռնուէր, թէ որ իր Միրզա Մուի թիկնապահը  
 անոր հագուստները հագած՝ թշնամիները չխա-  
 բէր, ես եմ Իսմայէլը ըսելով : Մտանկով Մէլիմ  
 հասաւ մտաւ Մտրպատական աշխարհին մայ-  
 ըաքաղաքը՝ Վալրէժ, որ մեր Այոսրով թագաւո-  
 ըին գեղեցիկակերտ շինածն էր : Ու թէպէտ  
 մէկ երկու տարիէն ետքը Իսմայէլ շահը նորէն  
 փորձ մը ընել ուզեց, բայց նորէն յայլթուեցաւ  
 ու կորսնցուց նաև Աղեսիա, Մծբին, Ախուէ,  
 Ալիկերտ, և ուրիշ քաղաքներ ալ :



Ըս թագաւորս եղաւ առջինը որ տաճկընէրուն ծովու վրայ զօրութիւնը աւելցուց, մեծ նաւաւրան շինեց ու հարիւրաւոր նաւեր ծովը իջեցուց, զինեց, նաւատորմիդ կազմեց. անանկ որ եւրոպական տէրութիւնները սկսան վախնալ:

Այլիմ Նգիպտոսի թագաւորին հետ ալ երկար ատեն պատերազմէին ետքը, Մէքքէ ու Մէտինէ ու բոլոր Նգիպտոս առաւ, որով ժառանգեց ամիրապետութեան պատիւն ալ՝ որ Մահմետի ցեղին պահուած էր: Աստի շատցուց ընծաներն ալ, որ իրմէ առջի թագաւորները կը զրկէին Մէքքէ. զրկելու կերպն ալ հանդիսաւոր կերպով սկսաւ ընել, Նգիպտոսի թագաւորներուն սովորութեանը պէս՝ ուղտի վրայ բեռցրնելով, որ ուղտին անունն ալ արաբերէն Մըհմէլ կ'ըսուի:

Ըստ յաի յաղթութիւններէն ետքը, Ատիր նէէն Պօլիս երթալու ատենը ուռեցք մը ունեցաւ կոնրկին վրայ, հարկաւորեցաւ որ դեղ մը ինջնայ. ուռեցքը մեծցաւ, բոլոր մարմնոյն վրայ տարածեցաւ, բժիշկները յոյսերնին կտրեցին: Ըսանկով հոն տեղը մեռաւ Աւուզ սուլդան Մէլիմը. ութ տարի քչեց իր թագաւորութիւնը, բայց քիչ տարուան մէջ շատ պատերազմներ ըրաւ. իր բնական զործունէութիւնը թշնամիներուն դէմ բանեցուց:

Իր ազանդին խիստ նախանձայոյզ էր. պարսկական ազանդաւորները ջնջեց պատերազմով իր

տէրութենէն : Մուզէր Յոյներն ալ ջնջել, ու  
ամէն քրիստոնէաները տաճկըցնել, ու իրենց  
եկեղեցիները մզկիթ դարձնել, ու ուլ որ հաւատ-  
քը չուրանայ՝ թրէ անցնել : Բայց երբոր իր  
դէնպետին խորհուրդ հարցուց, անիկայ թէպէտ  
սրատասխան տուաւ որ Աստուծոյ հաճոյական  
բան էր մտածածը, բայց սարսափելով ընելու  
անգթութենէն՝ Յունաց պատրիարքին ծածուկ  
խնացուց՝ որ քիչ մը ժամանակ ուզէ, ու իրեն  
խրատ տուաւ ինչ ճամբայ պէտք էր բռնել : Պատ-  
րիարքը բոլոր իր գղերովը գնաց Ատիրնէ թա-  
գաւորին դիմացը ելաւ, ու Պօլիս առնող Ֆա-  
թիհ սուլդան Սէհէմմէտին Ֆէրմանը առջին  
դրաւ, որով կը խոստանար Յոյներուն՝ որ ամե-  
նէին քրիստոնէից եկեղեցիներուն ու կրօնքին  
ու տօներուն չղրպի : Ինչ ալ աւելցուց որ քրիս-  
տոնէից տուած խարաճը՝ իրենց հաւատքը սր-  
հելու համար է, ինչպէս՝ Սուրանին մէջն ալ կայ :  
Երէնիւնիւններն ալ որ տեսեր էին Աոստանդնու-  
պօլսոյ առումը, վկայեցին աս սրայմաններուն իրաւ-  
ըլլալը : Սէլիմ թէպէտ իրաւունք տուաւ իրենց,  
բայց Պօլսոյ մէջ եղած եկեղեցիները փոխեց  
մզկիթ ըրաւ, անոնց տեղը փայտաշէն եկեղեցի-  
ներ ունենան ըսաւ, չիպլեր անոնց մեր մզկիթ-  
ներէն փառաւոր եկեղեցիներ ունենալ :



## ՍՈՒԼԴԱՆՆԵ ՍԻՒԼԵՅՅՈՒՆՆԵ Ը.

Ընթացած ժամանակներս, որ 1520ին իր հօրը սուլ-  
դանն Ալիքանն տեղը անցաւ, իրեն ժամանակի  
և բոլոր աշխարհիս երևելի ժողովուրդներէն մէ-  
կը եղած է, իրեն ըրած անբաւ պատերազմնե-  
րովն ու մեծամեծ յաղթութիւններովը: Ար-  
նանք ըսել թէ իրեն վարքն ու կեանքը ուրիշ բան  
չէր՝ բայց եթէ անընդհատ ու շարունակեալ պա-  
տերազմ մը: Բայց սա ալ կայ որ պատերազմի  
ատեն որչափ որ անողորբելի ու խիստ կ'երևնար  
իր թշնամեաց դէմ, այնչափ ալ ուրիշ ժամանակ-  
ները իր ժողովրդեանը հանդատութիւնն ու խա-  
ղաղութիւնը կը փնտրուէր: Այնոր համար երբոր  
մեծամեծ յաղթութիւններէ ետքը յողմած  
զաղբած զօրքովը քաղաքը կը դառնար, մէկէն  
քաղաքական հանդէսներով քաջերուն արդիւնքը

կը պատկէր, մեռածներուն ընտանիքը կը մխիթարէր, և բոլոր ժողովուրդը ուրախացընելով՝ նոր նոր յաղթութիւններու կը պատրաստէր: Իրեն ժողովրդեան վրայ ունեցած սէրը ու անոնց հանդատութիւնը ուղէլը աս բանէս ալ յայտնի է որ պատերազմներէ քիչ մը ատեն հանգիստ գտած միջոցը՝ օրէնքներն ու սովորութիւնները բարեկարգելու կը գործածէր: Եւ բանիս համար շինած է նաև տաճկաց օրինաց գիրքը, որուն համար իրեն անունը Վանունի ըսուեցաւ, որ ( )րէնսդիր ըսել է:

Կերպարանքով ահաւոր ու պատկառելի մարդ մըն էր, երեսը սևադոյն, ճակատը բարձր, ընքուխները սև, ու ինքն ալ ծանրաբարոյ: Երած յաղթութիւններէն կ'երևնայ թէ ինքը վեր 'ի վերոյ խորհրդով պատերազմի ձեռք չէր զարնէր, ձեռք զարկածը կ'ուղէր առաջ տանիլ, վտանգէ մը չվախնալով՝ փորձանքէ մը չվհատելով: Եւ տանկով այնչափ թշնամիներ նուաձեց, այնչափ պատերազմներու յաղթեց, այնչափ երկիրներ իր ձեռքին տակը առնելով՝ տերութիւնը ընդարձակեց: Իրեն մեծագործութիւններէն կ'երևնայ իրեն աշխարհաշինութեան հողին, որով շէնցուց զարդարեց իր թագաւորական քաղաքը նոր նոր դպրոցներով, բաղնիքներով ու մզկիթներով, ուրոնց մէջ ամենէն անուանին է Սուլէյմանիէ ըսուածը, որ սրբոյն Սոփիայ եկեղեցիէն ետև՝ Արստանդնուպօլսոյ փառաւոր շէնքն է:

Իսկ իրեն խելքն ու կառավարութեան զլուխը յայտնի կ'երևնայ իր դրած օրէնքներէն ու ըրած բարեկարգութիւններէն, որով թէ տաճկաց և թէ հպատակ ազգերուն համար շատ արդար օրէնքներ կը դնէ, խաղաղութեան ու սրատերաց մի սրայմանները կը սահմանէ, ու թէ Երկիրը և թէ բնակիչները ամենայն բռնաւորութենէ կ'սպաստուցին :

Սուլթան Սուլէյման դիտութեանց և ուսմանց ծաղկելուն ալ շատ փոյթ ունեցաւ, մանաւանդ բանաստեղծութեան . այնպէս որ իրեն ժամանակը 150 բանաստեղծ կային, որոնց աշխոյժը իր առատաձեռնութեամբ կը վառէր : Սուլթան Սուլէյման աշխարհակալ թագաւորներէն մէկը եղաւ . այնպէս որ միայն ամենէն մեծ յաղթութիւնները 13 հատ կը սեպուին . բայց մենք ասոնցմէ մէկ քանին միայն յիշենք :

Մաճառները ( ) տննցւոյ հարկատրահանք նախատալից մահուամբ մեռուցեր էին . Սուլէյման շատ զօրքով ճանբայ ելաւ, և իրմէ առաջ իրկէց Միջագետքի Սաարազ բերդին վրայ . որ գնաց ստակալի ջարդ ընելով բերդը առաւ : Սուլէյման ինը օրուան մէջ Սաւա դեռին վրայ 4800 զրկաչափ երկայնութեամբ կամուրջ մը շինել տուաւ, ու անկէ անցնելով եկաւ սրաշարէց Պէլլիստոքաղաքը : Այլ որովհետեւ քաղաքապետը փախեր էր, քաղաքը զիրաւ առնուեցաւ, և բնակիչներն ալ անձնատուր եղան . որոնցմէ շա-

տը որ Վուլղարը էին՝ Պօլխա քշուեցան։ Վստնցմէ զատ քաղաքներ ու բերդեր ալ առնելով՝ դարձաւ եկաւ իր թագաւորական քաղաքը։ Վս սրատե-  
րազմէն զատ Սիւլէյմանն այլ և այլ սրատճառաւ  
շատ ուրիշ սրատերազմներ ալ ըրաւ Սաճառաց  
հետ, ու հինգ տարիէն անոնց Պուտա ու Վիշթ  
քաղաքներն ալ առաւ։

Սուլղան Սիւլէյմանն իրեն սրապուն Սուլղան  
Վէհէմմէտին նախատինքը վերցընելու համար,  
որ ամէն տեղերու տիրած ըլլալով՝ չէր կրցած  
հոռոտի ասպետները նուաճել, միտքը զրաւ որ  
անոնց վրայ ալ սրատերազմի ելլէ։ Վայց նախ  
անոնց գլխաւորին որ Վաղխատրոս կը կոչուէր՝  
թուղթ գրեց, ըսելով որ եթէ քաղաքը խաղա-  
զութեամբ իրեն տայ՝ ամենեւին իրեն և իրեն-  
ներուն կենացը ու ընչիցը չփնասեր։ Վայց երբոր  
անիկայ մտիկ չըրաւ, 300 նաւով խրկեց Սուս-  
դաֆա փաշա վէղիրը, ինքն ալ 400 հազար  
զօրքով դէպ ՚ի փոքր Վսխա ճամբայ ելաւ, ու ե-  
կաւ հոռոտ սրաշարեց։ Վրեք ամիս տևեց սրա-  
շարումը. տաճկիւնները զրսէն սրարխապները կը  
փորէին, անոնք ներսէն նոր սրարխապ կը հիւսէին,  
և միանգամայն ներս մտնողները կը ջարդէին. ու  
նանկ որ քաղքին խրամները մեռելներով լեցուե-  
ցան։ Սիւլէյմանն տեսնելով որ իր զօրքէն 100,000  
մարդ կորսընցուցեր է, սրատերազմը դադրեցուց  
ու նորէն զրեց ըսելով թէ քաղաքը իրեն տան, և  
իրենք ելլեն ուր որ կ'ուզեն երթան. ասպա թէ ոչ,



բռնու թեամբ որ առնեմ, ամենեին բանի մը չեմ  
խնայեր կ'ըսեր: Աս ըսելով՝ նորէն սաստկացուց  
սրտերազմը. մնգիստրօսը, սաստկաները ու բո-  
լոր քաղաքացիք սաստիկ նեղն ընկած, վերջապէս  
որոշեցին որ քաղաքը տան. բայց սրայման զնե-  
լով որ թողու բնակչացը ազատ ելլելու երթարու:  
Սիւլէյման յանձն առաւ ու փառաւոր յաղթա-  
նակով Առստանդնուսօլիս դարձաւ, ու իր քրոջը  
Հարսանեաց Հանդէսը կատարեց:

Սուլդան Սիւլէյմանին ըրած երևելի սրտե-  
րազմներէն մէկն ալ Սէննայի սրտերազմն է: Ս-  
րուհեաւ կայսրը Մաճառաց բանի մը երկիր-  
ները յափշտակեր էր, որոնք Տաճկաց սրաշտպա-  
նու թեան տակն էին, Սիւլէյման սաստիկ կատ-  
ղեցաւ աս բանիս, ու անբաւ զօրքով զնաց Սէն-  
նա քաղաքը սրաշարեց: Տասնըվեց Հազար զօրք  
միայն կային քաղաքին մէջ, բայց տաճկներուն  
վախը այնպէս զիրենք առեր էր որ յուսահա-  
տած երկայն ստեն դէմ կեցան թշնամեաց բռնու-  
թեանը: Մանաւանդ երբոր կը տեսնէին թէ զի-  
րենք սրաշարողներն ալ ձմեռուան ցրտէն ու կերա-  
կրոյ սրահսութենէն կը տանջուին՝ աւելի սիրտ  
կ'առնուին: Աւ թէպէտ շատ անգամ զօրացը սիրտ  
կուտար Սիւլէյման, և մեծամեծ պարգևներ  
կը խոստանար ամենէն առաջ սրաբալին վրայ ել-  
լողին, բայց մէկուն քաջութիւնն ալ բանի չէր դար-  
ան հայրենեաց սիրովը ու թշնամեոյն վախովը  
վառուած սակաւաթիւ բնակչացը դէմ. այնպէս



որ վերջը սուլդանն Սիւլէյմանն ալ յուսահատած՝  
պաշարումը վերցուց, ու Սոստանդնուպօլիս դար-  
ձաւ: Հոն շատ մեծ հանդիսով կատարեց իրեն  
իրէք որդւոցը թլիստութեան հանդէսը, որ  
քանն օր տեւց ամէն տեսակ խաղարկութիւն-  
ներով, լուսաւորութիւններով ու փառաւոր հաց-  
կերոց թ'ներով:

Սուլդանն Սիւլէյմանն աս քաջութիւններէն  
զատ, շատ անգամ ալ սրատերազմեցաւ Պարսից,  
Սէնետիեցոց, Ս'աճառաց, Ր'ստրիացոց հետ.  
ու գրեթէ ամէն անգամ իր թ'նամիները սարսա-  
փեցուցած՝ իր քաղաքը կը դառնար: Ր'այց որով-  
հետեւ տերութիւնը շատ ընդարձակած էր, անոր  
համար մէկ թ'նամեոյն հետ սրատերազմելու ա-  
տեն՝ ուրիշ կողմէն մէկալնոնք ոտք կ'ելլէին. ուս-  
տի հազիւ երբէք բոլորովին խաղաղութեան ժա-  
մանակ մը կ'ըլլար. մանաւանդ երբոր իրեն որդիքն  
ալ սիսան թագաւորութեան աչք անկէլ. որոնք  
մէկը մէկալին վրայ նախանձելով, իրարու թը-  
շուսուութեանը սրտաճառ եղան: Ր'սով եղաւ որ  
սուլդանն Սիւլէյմանն ալ իր արդարասեր մտքէն  
խտորեւելով, իրենն Սէլիմ որդւոյն և քանի մը իշ-  
խանաց չար խորամանկութեամբը՝ իրեն երկու  
որդիքը Սուտղաֆանն ու Պայէզիտը սպաննել  
տուաւ: Ր'այց ետքը իմանալով անոնց անմեղու-  
թիւնը, ու իրեն յաջորդ ըլլալու որդւոյն Սէլի-  
մին անկարգ վարքը, շատ ցաւեցաւ: Ր'անի մը  
տարիէն ետեւ երբոր նորէն Ս'աճառաց վրայ

գայեր էր՝ Օ րինի անունով բռնաւորի մը ձեռ-  
 քէն Վիկէթ վար բերդը առնելու, յաղթուած իւ-  
 նը զմնցած՝ 74 տարեկան մեռաւ 1566ին, քա-  
 ռասունը կօթը տարի թագաւորէէն ետքը :



ՍՈՒՎԳՐԱՆ ՍԷՆՏՈՒՐ Բ.

Ըստ Հայրն էր Սուլէյման Բ, որ Սաճառնէրուն Սիկէթփար քաղքին առանձն առնելը՝ իր հիւանդութեամբը մեռաւ, ու ետեւէն 1566ին թագաւորեց իր որդին Սէլիմ Բ: Ըս թագաւորս զինեւեր մարդ մըն էր. ու թէպէտ Սահմատին օրէնքն էր, ու իր Հայրն ալ Սուլէյման ապրուստներ էր որ զինի չիմէ, բայց ինքը ոչ միայն կը խմէր, հասա իր երկու իշխանները՝ որ անգամ մը իրեն միտքը ձգեցին հօրը հրամանը՝ մեռցնել տուաւ: Ըս զինեւիրութեան ախար զինքը գրգռեց որ Մալլուս կղզին առնէ, որովհետեւ ան կղզին զինխալը ինքն իրմէ դուրս կ'ելլէր:

Մալլուս Վենետիկեացոց ձեռքն էր ան առնելը. Սէլիմ զեսարան զրկեց իրենց՝ ու զելլալ կղզին, ուրովհետեւ առաջուց անիկայ Վալիպատուսի փառանքուն էր, ու անոր եկամուտը Սէքքէ կ'երթար:

Սենեակեցւոց իշխանները դէմ կեցան աս բանիս, բայց անուշութեամբ . իսկ ժողովուրդը երբոր աս բանս խնայաւ, ընչ մնաց որ դեպքանները մեռցնէր պիտոր, հազիւ փախան քաղաքէն :

Տաճկները իրեք հարիւր վաթսուն նաւով ելան դարնան Առստանդնուպօլսէն, հասան Ախլրոս ու ամենէն առաջ՝ Ախիոսիա քաղաքը սրաշարեցին : Աթօթը շաբաթէն առին քաղաքը, ութը օր ջարդ ու յախչտակութիւն ըրին, քսան հազար մարդ ջարդեցին, երկու հազար հոգի գերի բռնեցին, ու դարձան Պօլիս . քառսուն նաւ միայն Սուս դափա փաշային հետ մնաց՝ Ֆամակոսթա քաղաքը պաշարելու համար : Բայց Սենեակեցիք ձգքերով անոնց նաւերը՝ զօրք ու կերակուր հասուցին քաղաքին : Տաճկները միւս դարնան նորէն ութսուն նաւ հասուցին Ախլրոս : Սենեակեցիք քաջութեամբ դէմ կեցան, բայց քաջութիւնը սովին չկրցաւ յաղթել . պաշարնին հատաւ, հարկ եղաւ որ անձնատուր ըլլան : Պրակատին վէնետ կեցի քաղաքապետը դաշինք դրաւ որ իր քաղաքացիներովը ազատ ելլէ երթայ, ու իրեք օրուան մէջ սարպուեցաւ քաղաքը :

Բայց տաճկներուն զօրավարը Սուսդափա ուղեր էր որ Պրակատինին մէկ ընկերը սպասանդ ըլլայ իր քովը . Պրակատին յանձն չտաւ, խիտ սպառախան մը տալով . Սուսդափան ալ բռնեց Պրակատինը իր ընկերներովը, ընկերները սպաննել տուաւ, ու Պրակատինին ականջները ու

քիթը կտրեց, ու շատ տանջանքներ ալ տալէն  
 ետքը՝ զանիկայ սպաննեց, փախչողներուն վրայ  
 ալ հասաւ, խել մը մարդ ջարդեց ու գերի բռնեց :  
 Բայց տարի մը ետքը Վ Էնետիկեցիք Սպանիացոց  
 հետ մէկ եղած ոխերնին հանեցին տաճկըներէն  
 Վյնեպախթի քաղքին առջևը՝ աղէկ ջարդ մը տա-  
 լով անոնց : Ընոր համար շինեցին Պատուա քա-  
 ղաքին մէջ սրբուհոյն : Յուստիանեոց եկեղե-  
 ցին անոր տօնին օրը ան յաղթութիւնը ընելուն  
 համար, Վ Էնետիկ ալ սրբոյն : Յովհաննու ու Պօ-  
 դոսի եկեղեցւոյն մէջ փառաւոր մատուռ մը շինե-  
 ցին նոյն սրբուհոյն :

Բայտու ամենայնիւ Սելիմ՝ չյուսահատեցաւ,  
 նորէն զօրք ժողովել ու նաւեր շինել տուաւ, անոնց  
 վրայ զօրավար դրաւ Վրլըճ Բլին՝ որ շատ  
 կտրիճ մարդ էր : Վ Էնետիկեցիք աս սպարաաստու-  
 թիւնը տեսնելով վախցան ու հաշտութիւն ու-  
 զեցին ընել, խոստանալով բոլոր Վիպրոսի սրատե-  
 րազմին ծախքը տալ, ու Տարմայիայի և Բարա-  
 նիայի մէջ ալ տաճկըներուն սահմանը ընդար-  
 ձակել առջինին պէս :


Ըն միջոցին մէջ նաև թուրքեր առաւ Վրլըճ  
 Բլի, ու անիկայ ալ Բլէրիի ու Տրապօլիսի հետ  
 ( )անանցոց դաւառը եղաւ : Տաճկըներուն ասանկ  
 զօրանալը տեսնելով Սարտաբայի տէրութիւննե-  
 րը, մէկմէկու ետևէ, դեսպան կը խրկէին անոնց  
 բարեկամութիւնն ու դաշնակցութիւնը խնդրե-  
 լով :

Ընդհանուր յաղթութիւններէն ետքը Սէլիմ մէկ քանի բնական զիպուածները չար գուշակութիւն սեպելով՝ վախնալ սկսաւ, փոխանակ վախնալու իր ախտերէն՝ որ իր կեանքը կարճեցուցին: Ընդ որերն ալ բաղնիք երթալը բռնեց, հոն սահեցաւ ընկաւ. վերուցին տարին անկողինը, ու տաաուերկու օրէն մեռաւ՝ ութը տարի թագաւորելէն ետքը:

Սուլդան Սէլիմ միջահասակ մարդ մըն էր և ուժով, քիթը տափակ, ճակատը բայն, աչքը կապուտ, մօրուքը դեղին և վիպը թանձր: Կտրուէի մեծ մզկիթը Սէլիմիէ ըսուած՝ որուն գմբէթին մեծութիւնը Ընդ Սոփիայինէն երկու զրկաչափ աւելի մեծ է, սա թագաւորին ժամանակը շինուեցաւ: Բայց իր օրը եղած թէ շէնքերուն և թէ յաղթութիւններուն մէջ ինքը խիստ քիչ մասն ունի, արդիւնքը իր իշխաններունն էր՝ որոնց մեծ մասը բրիտանաց ազգերէ տաճկացած էին:







## ՍՈՒԼԴԱՆ ՄՈՒՐԵՏ Գ.

ՍՈՒԼԴԱՆ Սուրատ Սելիմ Երկրորդին որդին էր ու 1575ին քսանըութը տարուան իր հօրը տեղը անցաւ . Թաղաւորելէն օր մը առաջ իր հինգ եղբարքը խղզեւ տուաւ որ խռովութիւն մը չհանեն :

Ինքը միջահասակ մարդ մըն էր , հաստ ընքուներով , կարմիր մօրուքով , վախտ մարմնով ու տժգոյն դէմքով . որովհետեւ օսմանեան տէրութեան անուճը ամէն տեղ տարածուած էր ու ամենուն վախ կը ձգէր , անոր համար Թաղաւոր եղաւ չեղաւ՝ ամէն եւրոպական տէրութիւններէն դեսպաններ եկող եկողի էին , ինչուան Պարսից Ղահմասայ խանն ալ մարդ զրկեց չնորհաւորելու զինքը ու տաճկաց նիղակակցութիւնը ուզելու : Վրանի որ դեռ Պարսից դեսպանը Պալիա էր , Ղահմասայ մեռաւ ու անոր որդւոցը մէջ



մեծ խոռոչում ինչն ընկաւ թագաւորութեան համար : ( ) ամանցիք աս բանս աղէկ առիթ սեպեցին , ու Արտակատու և Հայաստանի մէջ Պարսից ունեցած երկիրներուն շատին տիրեցին : Ըստ սուտերագրմաներուս մէջ շատ քաջութիւններով մեծամեծ յաղթութիւններ ըրին Սինանու ( ) աման փաշաները , որոնք շատ գովութեամբ ու սրտուով փառաւորեց թագաւորը :

Սուրբան Սուրատ 1383ին շատ մեծ հանդիսով կատարեց իրեն Սէհէմմէտ օրդույն թլփատութեան հանդէսը , որուն ստորագրութեան կրնայ իմացուիլ ան աստենի օսմանեան թագաւորութեան ճոխութիւնը : Ըմբողջ տարի մը տեւեց աս հանդիսին սրտրաստութիւնը . թագաւորական ցեղին և բոլոր մեծամեծաց ու դեսարանաց հաւնար մասնաւոր ապարանքներ շինուեցան ձիարձակարանին մէջ : Յունիսի առջի օրը թագաւորն ու իր տղան Սպրահիմի պալատը գնացին . տղան վերէն ՚ի վար կարմիր դիպակ հագեր էր՝ հինգ մատնաչափ թանձրութեամբ ոսկիով բանած , գլուխը երկու փետուր խոթած բոլոր անդամանդներով , ականջը մեծ յակինթ մը , մատը աղուօր զմբուխտ մատնի , և մէկալ ձեռքը բոլոր գոհարներով սրտած դաշոյն մը : Ընոնց ետեւէն կուգային բոլոր թագաւորին հարէմը . անոնց ալ ետեւէն սպասաւորներ՝ որ տեսակ տեսակ շաքարէ շինած գազաններ ու կենդանիներ կը բերէին . ետքը բոլոր մեծամեծները առօք փառօք կուգային :


Վնէն օր անբաւ խաղեր ու զբօսանքներ ըլլալէն ետե՛ գիշերն ալ բոլոր լուսաւորութիւն ու հրաբուետասիւն խաղեր կ'ըլլային . հանդիսին տաներորդ օրէն սկսեալ 150 տեսակ արուեստաւորներ, մանաւոր զգեստներով ու արարողութիւններով թափօր կատարած, թագաւորին զիմնցէն անցան . ինչպէս ետքը ամէն դպրոցի սղաք ալ :

Վնէն աւելի տեւց աս հանդէսը, և աւելի ալ կ'երկրննար՝ թէ որ եսիչերիներուն ու ձիաւորներուն մէջ խռովութիւններ չելլէր : Վսոր սրատճառը մեծերուն չտիազանց շահասիրութիւնն եղաւ, որ ժողովուրդը կեղեքելով ու զօրքին ռոճիկը կտրելով՝ իրենց հարստութիւնը կը շատցընէին : Աւատի եսիչերիները կատարած՝ ուղեցին օր վէզիրը ձգուի, ու համարակալը զլիսատուի . աս բանիս համար Արատանդնուպօլսոց մէջ ալ կրակը, բռնութիւնն ու զօրաց անկարգութիւնը սրակաս չէր . ժանտախտն ալ մէկ կողմննէ աստիկ ջարդ կ'ընէր, անանկ օր միայն Վատիրնէ գափուսիէն օրը 300 մեռել կը հանէին :

Մնան փաշան օր ան ատեն վէզիր էր, տեսնելով որ զօրքին ուզածը ընելով՝ անոնց կատարութիւնն ու յանդգնութիւնը կ'աւելնար, թագաւորին խորհուրդ տուաւ որ Սաճառաց վրաց խաւրէ զանոնք, որովհետեւ ինքն ալ Վերմանացոց թշնամի էր : Վսանկով ան կատարած ու գաղան գարձած զօրքը ելան յրուեցան ան երկիրները, ու ջարդ ընելով ու կողոպտելով շատ երկիրներ

ձեռք ձգեցին : Մանուսանդ որ ան օրերը Մահ-  
մէտի գրօշակն ալ որ Վասնակոս կը ստահուէր՝  
Վոստանդնուսօլիս բերուեցաւ , ու անկէջ առին  
տարին Պէլիբատ՝ ուր որ էր մեծ բանակը : Բայց  
սրտերնին շատ կտորեցաւ՝ Երբոր լսեցին որ Թա-  
գաւորը հիւանդ է , ու Սինան փաշան Պօլիս  
սլիտի դառնայ : Եւ իրաւ , սուլթան Մուբատ իր  
ազջիկը կարգելէն ետքը՝ սրտցաւութեան հիւան-  
դութիւն մը ունեցաւ , և քիչ ատենէն նոյն ցաւէն  
մեռաւ 20 տարի Թագաւորելէն ետքը 1595ին :

Ինքը աւելի խաղաղասէր մարդ մըն էր , և  
զրեթէ միշտ խաղի ու զուարճութեան հետ ըլ-  
լալով՝ քաջութեան անուն մը չթողուց . միայն ի-  
րեն նախորդաց քաջութեամբը ստացած իշխա-  
նութիւնն ու տերութիւնը իր շքեղութեամբն ու  
փառաւոր հանդէսներովը ամենուն աւելի սպա-  
կառելի ըրաւ : Նոյն խակ իրեն զուարճութիւն  
սիրելը , իր Ժողովրդեան երջանակութեան սրա-  
ճառ եղաւ . բայց աւելի հատուտուն երջան-  
կութիւն կ'ըլլար անոնց , թէ որ կառավարու-  
թեամբ վրայ աւելի արթնութիւն ունենար , ու  
խեղացի մարդիկ իրեն օգնական ըլլային :





## ՍՈՒՎԳՐԱՆ ԱՏՄԷՏ Ա.

ԱՏՄԷՏ 1606ին թագաւորեց . տասնըչորս տարուան էր թագաւորելու ատենը . այսչափ պզտիկ տարուօք թագաւոր մը չէր եղած իրմէ առաջ . անանկ որ նոյն տարին ծաղկէն բռնուէր , ու քիչ մնաց որ պիտի մեռնէր : ԱՏՄԷՏ թագաւորելու ատենը իր Սուղաֆա եղբայրը չքսպաննեց իր նախորդներուն պէս , ասկէց 'ի զատ երկու տարի չանցած երկու զաւակ ունեցեր էր , մէկալ կողմանէ ալ Պարսից , Վերմանացոց ու Ղախայի փաշաներուն հետ սրատերազմի մէջ էր , այսու ամենայնիւ զարմանք բան մըն է որ ինչպէս ենիչերիները տրտունջ ունենալով իրենց վարձքին քիչու թեանը համար , տասնուվեց տարեկան թագաւորէն սարսափած՝ լռեցին , ու իրենք իրենցմէ յանցաւորները մատնեցին որ սպաննել տայ , Վերմանայ թէ դէմքին վրայ ահաւու

բութիւն մը կար՝ որ ամենուն ակնածելի կ'ընէր զինքը : Աւստի երբոր Պարսից Վատի խանը Պօլիս դեսպան եկաւ՝ ղիմացը ելած ատենը ուրիշ խօսք չկրցաւ խօսելու, բայց միայն աս՝ թէ Շահարաս մեր թագաւորը քու ծառայ է. ու թագաւորը իր պալատին առջևէն անցնելու ատենը, ձիուն ոտքին տակը 400 զրկաչափ տեղ ճանճիէս փռել տուաւ : Այնչափ ալ որսի ելած ատենը Ատիրնէ, իր իշխանները պալատին դրսի դռնէն ինչուան թագաւորին սենեկին դուռնոր տպած ոսկի ու արծաթ դրամ ցանեցին, որ ետքը հոն գտնուողները առնող առնողի եղան : Իրեն վեզիրը Վուշուճի Սուրատ տեսնելով որ ամէն կողմանէ վտանգ կար, Վերմանացոց հետ ուղեց հաշտութիւն ընել, ու յիսուն տարուան հարկատուութենէն խալըսեցան Վերմանացիք, ու ան ատենէն սկսան տաճկերները իրենց հաւասար ճանչնալ Եւրոպայի թագաւորները, որ առաջ ծառայ ու հարկատու կը կանչէին իրենց : Ինչ ատենը Մհմետ իր ամէն զօրութիւնը Միսիայի կողմը դարձուց, ու կէս մը զօրութեամբ կէս մը հնարքով յաղթեց իր թշնամիներուն : Թէպէտ ինքը չէր երթար պատերազմի, բայց զխտէր մարդ ճանչնալ ու բանեցրնել. երբեմն ալ ինքը անոնց հրաման կը ղրկէր ինչ որ պէտք էր ընել : Իսոնց մէջ ամենէն երևելին էր Սուրատ. բայց աս մարդը որչափ որ քաջ ու խելացի էր, այնչափ անգութ անողորմ էր : Ինմեղ տղայ մը, հայրը

ապրտամբներուն նուագարան զարնող ըլլալուն հասնար, հրամիւնց որ սարսնեն. մէկու մը սիրտը չքաշեց, բոլոր ենիւէրիններն ալ խղճացին խեղճ՝ տղուն վրայ. ան ատենը ինքը դանախը առաւ, տղուն գլուխը գետինը դրած՝ գառան պէս մորթեց: Ասանկ գաղանաբարոյ մարդ մը ինչ չէր կրնար ընել իր իշխանակիցներուն՝ անանկ զօրութիւն ունենալով ձեռքը. բայց Աճմէտ կը ջանար անոր ձեռքէն ապրեցընել իր իշխանները: Ասանկով Սուրատը օգտակար կ'ընէր տէրութեան՝ վնասները խափանելով: Այբմէքձի զատէ Աճմէտ իշխանը, որ դէնպէսն ալ արժանի կը սեպէր վէզիրութեան, սուտգրուց ըլլալուն համար միայն՝ իրեն վէզիր չըրաւ. — Օ արմանալի օրէնքներ աւելցուց, որ ետքը Սիւէզինզատէ Ալին ժողովեց ու մէկ գիրք մը ըրաւ, որ բաւական է աս թագաւորիս յիշատակը անմահ ընելու:

Ընքերու ալ սէր ունէր. Աճմէտիւ ըսուած մկկիթը ինքը շինել տուաւ Աթմէյտանիին գլուխը. Վոփխանեին աղբիւրն ալ իրեն շինել տուածն է, բայց 'ի ուրիշ շէնքերէն ալ որ շինեց Պօլիս, Սէքքէ ու Սէտինէ: Իր ատենը սկսաւ Վրէապէի ծածկոյթն ալ Արտսանդնուպօլէն երթալ, որ առաջ Ագիպոս կը շինուէր. ու հին ծածկոյթը մնասունքի մը պէս Աճմէտին ընծայ բերին, խոշոր մարդըրտին հետ՝ որ Վրէապէին պատին վրայ տեղաւորած էր, ու կը կոչուէր



Վէ՛լքէպ տիրրէր , այսինքն մարդրիտներուն  
աստղը . վասն զի Մճմէտ ալ անոր տեղը մեծ գո-  
հար մը խրկէր էր , չորս զին 227 ուրիշ գոհարնե-  
րով զարդարած :

Այ թաղաւորիս ատենը եղաւ զօրավար ու  
էտքը վէ՛ղեր , Այալիլ փաշան՝ որ հայ ու կէսաղա-  
ցի էր , քաջ մարդ , որ Սէլիսոս կզգլին վրայ  
գնաց նաւերով ու մեծ յաղթութիւն մը ըրաւ ,  
ու Վարաճէ՛հէննէմ ըսուած նաւը բռնեց , որուն  
մէջը 90 թնդանօթ կար , 500 զինուոր , տեսակ  
տեսակ հրացան զէնքերը 2150 հատ : Այ Այալիլն  
է որ էտքը Այազախներուն ալ յաղթեց , ու Աէ՛հե-  
րուն ու Վերմանապուոց հետ ալ նորէն դաշինք  
հաստատեց : Իսկ Մճմէտ տանը չորս տարի թաւ  
գաւորեղէն էտքը՝ կարճ հիւանդութեամբ մը  
մեռաւ :





## ՍՈՒՒԴԱՆ ՄՈՒՐԱՏ Կ՝

ՍՈՒՒԴԱՆ Մուսղաֆա առաջինին տեղը անցաւ 1623/ին : Այժմ թագաւորս միջահասակ մարդ մըն էր կրոր դէմքով, սեւ մազերով, մեծ աչքով, ու սաստիկ ուժով. բնութեամբ խիստ ու անողորք, ու տեանողը կը վախցըրնէր : Այնչափ ուժով էր որ նեւտած նեւտերը հրացանի զնտակներէն աւելի հեռու կ'իյնային, ու չորս մասնաչափ թանձրութեամբ երկաթ տախտակը կը ծակէին : Այդամ մըն ալ սպատերազմի ատեն Ղէվրէս քաղաքն որ հասան, տեսաւ որ զինուորները իրենց երկրթ գործիքներովն ալ չեն կրնար քաղաքին դուռը կտորել, հրամմեց որ ծառի կոճ մը բերեն. առաւ մինակ ան կոճը՝ որ շատ հողի մէկէն հազիւ կրցեր էին բերել, ու մէկ զարնելուն՝ երկրթէն աւելի ամուր դուռը խորտակեց :

Ասանկ ուժով ըլլալուն՝ որսի ու սպատերազմի

ալ չափէ դուրս սէր մը ունէր : Արսի ելած ժամանակը 30,000 հոգի ալ հետը կ'առնէր : Իրեն քաջութեանը հետ անգութ սիրտ մըն ալ ունէր . կ'ըսէն թէ իր 17 տարի թագաւորելու միջոցը 100,000 մարդ սպաններ է . ինչպէս իր եղբայրներն ալ իր թագաւորութեան ապահովութեանը համար սպաննել տուաւ : Ենգամ մը մարդ մը եկաւ իրեն աւետիս տալու համար թէ որդի մը ունեցեր է . թագաւորը հրամանեց որ ան մարդը բռնեն ու բանտ դնեն . ու երբոր ստուգեց թէ աղջիկ է եղեր ծնածը , մարդը չարաչար սպաննել տուաւ :

Շատ անգամ ալ նոյն իսկ իրեն պատուած պաշտօնատէրներն ու մեծամեծները կախել կուտար : Այլ որ խահուէ , գինի , ծխախոտ ու ափիոն գործածէր , պատիժը մահ էր . անոր համար բոլոր խահուէի խանութները կործանեց . աս խատուութեան պատճառը աւելի ան եղաւ , որ կը կարծուէր թէ իր ատենը եղած Ղուպալիին մեծ կրակը՝ որ Առտանդնուպօլոյ մեծ մասը մոխիր դարձուց՝ ծխախոտ քաշողներու անհոգութիւն եղեր էր : Իմանալով որ իր Ամիր շէլէպի անունով բժիշկն ալ ափիոն կը գործածէ , օր մը հարցուց իրեն թէ ծոցդ ինչ կայ : Են ալ տուիր հանեց՝ ըսաւ , Եփիոն է : (Ը)աւագաւորը բռնութեամբ տուփին մէջ որչափ որ կար՝ բողոյն ալ կլլեցուց խեղճ՝ մարդուն , ուսկից թունաւորուելով՝ քիչ ատենէն մեռաւ : Ենգամ մը վենետիկեցի վաճառական մը իր տանը պատուհա-

նէն զխտակով թագաւորին սրաւտը նայելուն համար սրտուհանէն կախել տուաւ զանիկայ, Վաղղխացւոյ դէսարանին թարգմանն ալ ցիցը հանեց, որովհետեւ զաղղխացի վաճառականի մը կողմը կը բռնէր դատաստանի մէջ: Աւրիշ թարգմանն մըն ալ իր ստույր զլխարկովը կախել տուաւ, որովհետեւ իր տէրը տաճկի մը հետ թնամու թիւն ունեցեր էր:

Սուլդան Սուրատին աստէնը քանի մը անգամ էնիչէրիններն ալ մեծ սպատամբութիւններ հանեցին, ու թագաւորը զանոնք ուրիշ կերպով չկրցաւ խաղաղցրնել՝ բայց էթէ ուզած մնաղղիկնին անոնց ձեռքը տալով որ սարաննէն: Շատ սրտերագմներ բրաւ Պարսից շահին ու Վսից Տաճկաստանին մէջ եղած սպատամբ իշխաններուն հետ. ու ամէն անգամ ինքը կ'ըլլար զօրքին առաջ նորդը ու սիրտ տուողը: Վայց իր յաղթութիւն ներուն մէջ ամենէն երևելին Պաղտատը Պարսից ձեռքէն առնելն է:

Սուլդան Սուրատ արդէն 1635ին շատ զօրքով զնացեր էր Պարսից վրայ՝ անոնց ձեռքէն Պաղտատ քաղաքը առնելու, բայց չէր յաջողած. անոր համար միայն Արևան ու Վալլիէժ քաղաքները առնելը բաւական սեպեց ու ետ դարձաւ: Վայց քանի մը տարիէն ետեւ Պարսիկները Վալլիէժը նորէն ետ առին, ու ( )անմոցւոյ հարաւաններուն ալ շատ նեղութիւն կուտային: Վս քանիս համար սուլդան Սուրատ նորէն անհա-

մար զօրք ժողովեց, եկաւ նորէն Պաղտատը պաշարեց, ու սկստ մեծամեծ թնդանօթներով աւոր պարիսպները քանդել: շատ ջարդ ըլլալէն ետքը թէ իրեն և թէ թշնամեաց կողմէն, վերջապէս 1638ին վերջէրը քաղաքը աւանուեցաւ, ու թաղաւորը հրամմեց որ որչափ Պարսից աղանդէն մարդ կար՝ բոլորն ալ թրէ անցընեն: Աւտի կ'ըսեն թէ, 30,000 բնակիչներէն հազիւ թէ, 300 հոգի փախան ու ազատեցան: Մանասպէս որչափ սրտախի որ եկեր ու ( )աննցւոց բանակը ապաւիներ էին՝ բոլորն ալ ջարդուեցան: Սուլթան Սուբատ հրամմեց որ անոնցմէ հազար հոգի ղխնացը շարեն, ու ամէն մէկուն ետեն ալ մէյմէկ դահիճ կեցուց, և աչքով նշան մը ընելուն՝ հազարաւոր զլուխ մէկէն ղետին թօթախեցան:

Եւ յշափ կոտորածէն ետե ինքը Աստանդուպօլիս դարձաւ ու հոն սփի աթափ վրաց նստած ընդունեցաւ եւրոպական տերութեանց ղետալանները: Պարսից հետ ալ դաշինք դրաւ Երևանը անոնց տալով ու Պաղտատը իրեն պահելով: Են օրերը սփրիկեցի մարդուն մէկը ձայն հանեց թէ ինքը սփի շինելուն կերպը ղխտէր: Թաղաւորը իր առջևը փորձն ընել տալով, երբօր ջաջողեցաւ՝ աչք բրաւ բալիններուն, ու մէկէն իր ղխնացը խղղեցին խեղճը, և վղէն քար կապելով՝ ծովը ձգեցին:


Բիչ ատենէն իր ոսնառութեան ցաւը բոնեց, անոր վրաց մէջքի ցաւ մըն ալ ունեցաւ, և իրեն

օգէ և գինիէ չգգուշանալուն համար՝ ծանրացաւ  
 հիւանդութիւնը . ուստի բոլոր բժիշկներուն մահ  
 սպառնացաւ՝ թէ որ գինքը չբժշկեն . բայց վեր-  
 ջապէս 1640ին երեսուն տարեկան մեռաւ : Սեր-  
 ջի հիւանդութեան ատենը ուզեց իր մնացած  
 Սպրահիմ եղբայրն ալ սպաննել, որպէս զի իր  
 գինակիրը թագաւորեցրնէ . բայց մայրը զտղան  
 խալըսեց, ու Սուրատը խաբեց՝ իբրև թէ անոր  
 կամքը կատարուած ըլլար :

Վաջ մարդ էր Սուրատ, և իր քաջութեամբը  
 իր տէրութիւնը արտաքին ու ներքին թշնամի-  
 ներէ ազատեց . բայց անդ թութեամբը իրեն քա-  
 ջութեան փառքը մթնցուց :







# Մ Ո Ւ Լ Դ Ե Ն Մ Ո Ւ Ս Գ Ե Ֆ Ե Ի .

Մ Ո Ւ Լ Դ Ե Ն Մ ուսդաֆա Ի թագաւորեց  
 1695ին . թագաւորելու օրերը յաղթուեցան Ս ե-  
 նետիկեցիները տաճկընէն Սախրզ կղզիին աւ-  
 ջւը , ու կղզին տաճկընէրուն եղաւ : Ի ս յաղթու-  
 թիւնը սիրտ տուաւ Մ ուսդաֆային որ Գերմա-  
 նացոց դէմ երթայ . 45 հազար զօրքով Լ յտիր-  
 նէէն ելաւ , քանի մը քաղաք ալ առնէլէն ետև՝  
 Ս արատինու առջին մեծ ջարդ մը տուաւ անոնց ,  
 ու յաղթանակով Պօլիս դարձաւ : Հետեւեալ  
 տարին նորէն վրանին վաղեց , ու Գամվարի մօտ  
 ջարդ մըն ալ տալէն ետքը՝ ամրոցուց Գամվար ու  
 Պելլրատ քաղքըները , ու դարձաւ Լ յտիրնէ :  
 Ի այց միւս տարին նորէն որ ելաւ պատերազմի  
 թիսսա գետին մօտ յաղթուեցաւ , վէզիրը ու մե-  
 ծերն ընկան , ամէն ունեցածը չունեցածը Գեր-

մանասցւոց ձեռքն ընկաւ, ինչուան Թագաւորա-  
կան կնիքն ալ, որ Սէննա արքունի դանձին մէջ  
պահեցին:

Թագաւորը՝ Վարչլար հասածին պէս՝ նոր վե-  
զիր ու իշխաններ դրաւ, ու իր յուսահատու-  
թիւնը դրսուանց չիցուցնելու համար նորէն  
պատրաստութիւն կը տեսնէր, բայց ան ձմեռը  
հաշտութիւն ըրաւ: Սարատինու մօտ Վար-  
լու վիչ գեղը ժողվեցան 1699ին քրիստոնեայ տե-  
րութեանց դեսպանները զօրքով, ( )աննցիք ալ  
անոնց դիմացը. ժողովարան մըն ալ շինեցին հոն,  
ու եօթանասուն օր խորհուրդ ընելէն ետքը՝ հաս-  
տատուեցաւ դաշինքը: Սաճառներուն երկիրը  
ու Թիւրանսիլվանիա բոլոր մնաց Ղերմանացոց,  
Սուա ու Տալմացիա Սէնետկեցոց, Աամենից,  
Փոտոլիա ու Ուքրանիա Սէհերուն: Սուաները  
միայն գոհ չեղան, ինչու որ Ղախիին բերդը ու  
Աերչը ուզէր էին, Սուսդաֆային գործակալը  
Ռէիս Էֆէնտին յանձ չառաւ տալ. անոր համար  
անոնց հետ զինադադարում միայն ըրաւ, իսկ մէ-  
կալ տերութեանց հետ քսանըհինգ տարուան  
հաշտութիւն:

Ղբ անուանի հաշտութեամբս սկսաւ տաճկը-  
ներուն մէջ աւելի քաղաքականութիւն մտնել,  
Եւրոպական տերութեանց հետ հաղորդակցու-  
թեամբ: Թագաւորը Ատիրնէէն ելաւ Պօլիս  
գնաց՝ դաշնակից տերութեանց դեսպաններն ըն-  
դունելու. ու թէ ինքը և թէ ուրիշ տերու-

Թեանց դետպանները անանկ հանդիսով ու բազմաթեանք մտան Պօլիս, որ քիչ եղած է անոր նման հանդէս: Ըն առենը Վերմանացոց դետպանը Արուսաղէմ եղած Ֆրանչիսկեան կրօնաւորներուն համար ազատութիւններ խնդրեց ու առաւ. արեւելցի ազգերէն ալ դետպաններ եկան ու լատակցութեան համար, ու ամենուն հետ խաղաղութիւն հաստատուեցաւ:


Այսպէս թեան հետեանքը եղաւ աշխարհքին բարեկարգութիւնը, մաքսերուն ու քրիստոնէից տուրքերուն թեթեւութիւնը, ու Պօլիս ու Աշտիւրնէ քաղքներուն շէնքերով զարդարուիլը: Ըն առենը շիւսէին փոշա աշխարհաշէն վէզիրը մեռաւ, ու անոր տեղը անցաւ Տաղապան Սուղաֆա անունով Սրբի մը, որ արգիլեց քրիստոնէից ու հրեաներուն դեղին ստից աման ու կարմիր գլխարկ հագնիլը, կնիկներուն ալ լայն ֆէրաձէ հագցընել տուաւ, լաչակնին ալ հաստը ուցուց: Տաղապան ռիսակալ մարդ մըն էր, սկտաւ մէկուն մէկալին կենացը դարանիլ խնայաւ թագաւորը, զինքը վէզիրութենէ ձգեց, ու մէկ քանի օրէն գլխատել տուաւ. անոր տեղը դրաւ Բամի Սէհէմէտ, որ շատ խաղաղասէր ու աշխարհաշէն մարդ մըն էր. աղբիւրները Աշտիւրնէի մէջ շատցուց, Սէլանիկի բրդեղէններն ու Պուրայի մետաքսեղէնները բարակցուց, Արարիայէն ալ խահուէի հոնա բերաւ, ու ջանաց որ Պօլիս անկէ շտոյրնէ, բայց կլիման ձեռք չտուաւ:

Ընդ միջոցիս մեծ խռովութիւնն հանեցին Լեւոնի շէրինները, շատ տժգոհութեանց հետ՝ թագաւորին ու վէզիրին վրայ ալ զոհ չէին : Այսովարարները բազմութեամբ Սահմէտին դրօշ ստջնաւուն 7000 զօրքով 900 էմիր հետերնին, թագաւորն սոթներով, ուրիշ հրազէններով, վառօղի տակաւներով, ու 70 հազար սրատերազմական դործիքներով վաղեցին Ատիրնէ պաշարելու, ուր էին թագաւորն ու վէզիրը : Ալ էզիրը խմանալուն պէս՝ ութսուն հազար զօրք Ատիրնէին դաւար հանեց, անանկ որ եթէ սրատերազմելու ըլլար՝ խռովութարները չէին կրնար դէմ կենալ. բայց ինքը հրամանաց որ սուլտամբները երեցածնուն պէս՝ զօրքերը քաղաքը քաշուին :

Աստամբները Ալիիլիի հասան, խորհուրդ ըրին, թագաւորին եղբայրը սուլդան Սահմէտ Պ. թագաւոր ընտրեցին : Ատքը ծածուկ իրենց հետ միաբանեցին թագաւորին զօրքը. անանկ որ վէզիրը երբոր սրատերազմ հրամանաց, ճնազանդեցան : Ընդ որ տեսաւ վէզիրը, փախաւ գնաց երեսը ծածկեց. թագաւորն ալ մէկէն Ատիրնէ դարձաւ, դտաւ իր եղբայրն ու ըտաւ. Աղբայր իմ, ժողովուրդը քեզ կ'ուզէ թագաւոր. ու անոր թողուց թագաւորութիւնը : Իրաւ ուրիշ կերպ չէր կրնար ընել, բայց ան ատենի ուրիշ թագաւորներուն բռնած կերպին նայելով՝ որ յուսահատութեան մէջ ինչ բաներ ըրին, կ'խնայուի մէկէն Սուղաֆային խաղաղասէր բնութիւնը : Ընտ.

պէս իր Թագաւորութենէն ընկած, ու արդեւա-  
րանին մէջ՝ 1703ին վերջի օրը մեռաւ :

Ինքը գեղեցիկ տեսքով մարդ մըն էր, և հարա-  
տակներուն աղէկ կը նայէր, բայց շատերուն ալ  
ինչքը գրաւեց, կեանքերնուն ալ չխնայելով :





## ՍՈՒԼՊԵՆ ՄԱՏՄՈՒՏ Ե.

ՄԱՏՄՈՒՏ Լ. 35 տարուան կտրիճ մըն էր  
երբոր թագաւորեց 1730ին, ու առջի գործքը է-  
ղաւ զինուորներուն առատ բաշխոյքը՝ որ 7500  
քսակի կը հասնէր, որով քիչ մը ատեն անոնց խոռ-  
վու թիւնը զսպեց: Եւ այց ետքը տեսնելով թէ  
քանի որ անոնց զլիսաւորները կենդանի են՝ սպըւ-  
տամբու թիւնը պիտի չգաղբի, հրամանեց որ ան-  
ոնց առաջնորդները սպաննուին, որ էին Փա-  
ղրոնա Խաղիլ ու Սուսու: Եւ այն ատենները՝ Եւ-  
տրը շահ շատ բռնու թիւններով ու անգթու-  
թիւններով Լ'սիայի մէջ ( ) ամանցուոց երկիրնե-  
րուն կը տիրէր, և մէկ կողմանէ ալ Պօլիա գետաբան  
կը զրկէր, ըսելով թէ հաշտու թիւնը կ'ընէ՝ թէ  
որ տաճկերները իրենց Ղաֆլերի աղանդն ալ ճշմա-  
րիտ ճանչնան, ու թողուն որ Պարսիկներն ալ



Մէքքէ ու Մէտինէ, ու խափ էր թան : Վատրը  
 էրբոր տեսաւ որ ( )աննցիք իրեն զբաժ պայման  
 ները շէն ուղեր հաստատուէ, գնաց Պաղտատ  
 քաղաքը սաշարեց . և կարծելով թէ քաղաքացիք  
 տարակուսեր են ու շէն գիտեր ընելիքնին, զի-  
 բենք ծաղրելու համար սայլ մը ձմերուկ խառ-  
 րեց Վուլատ Մճմէտ փաշային, որ ան ատեն  
 քաղաքին կուսակալն էր : Մճմէտ փաշան անոր  
 միտքը խնայաւ, ու ինքն ալ նոյն սայլը ձերմակ  
 ալիւրէ շինած հացով լեցուց ու Վատրին խառ-  
 րեց, խնայընելով թէ ոչ միայն սովէ վախ չունին,  
 հասկա նաև այնպիսի սրատուական հաց էր կե-  
 րածնին :

( )աննցիք Պաղտատու սաշարուելը լսելով  
 իրենց համբաւաւոր Վոփալ ( )աման փաշան խառ-  
 րեցին, որ եկաւ Պարսիկներուն մեծ ջարդ տա-  
 լով մտաւ Պաղտատ քաղաքը, ազատեց սաշար-  
 մանքէն : Սուլղան Մահմուտ սա յաղթու թիւ-  
 նը լրածին պէս, հրամեց որ իրէք օր լուսաւորու-  
 թիւն ընեն քաղաքը . ետքը Մճմէտ ու ( )աման  
 փաշաներուն ալ շատ սրատիւներ ու ընծաներ զրը  
 կեց, և անկեց ետև իրեն անունն ալ Վաղի ը-  
 սուէցաւ : Իսայց իրէք տարիէն Պարսիկները նո-  
 ըն յարձակեցան ու ( )աննցեոց բանակը ջարդե-  
 ցին, ուր տեղ Վոփալ ( )ամանն ալ ընկաւ մե-  
 ուաւ : Եւ որովհետև ան ատենները ( )աննցիք  
 Սուսաց գէմ ալ սրատերազմի կը սրատրտատուէ-  
 ին, անոր համար Վատրը շահին ու Պարսից հետ

հաշտութիւն ըրին, անոնց ուղածներէն շատին հաւանելով:

Իսկ Ռուսաց պատերազմին պատճառը առեղաւ որ Սրիմու խանը՝ Վասրը շահին դէմ զօրք հանել ուղելով, հարկ էր որ Վովկասու երկրէն անցնէին. Ռուսներն ալ առ բանա չուղելով, բանի մը անգամ ( )սմանցուց բողոքեցին. և տեսնելով որ անոնք մտիկ չեն ըներ՝ պատերազմի պատրաստուեցան. ուստի յարձակեցան Սրիմի վրայ, ու Վշ զախ բերդը սաշարեցին: Ահգիրը Վասէյա Սէհէմէտ մէկէն զօրքը ժողվեց, ու սովորական քաղաքական հանդէսներով ճամբայ ընկաւ. և որովհետեւ Ռուսները արդէն շատ տեղերու տիրեր էին, կ'ուզէր որ պատերազմը հաշտութեամբ ու խաղաղութեամբ ըննայ: Վայց երբոր ( )սմանցիք տեսան քրիստոնէից դրած ծանր պայմանները, նորէն պատերազմի պատրաստուեցան, ու Ռուսներուն, Վհերուն ու Վերմանացուց երկայն ատեն շատ նեղութիւն տալէն ետեւ, և երկու կողմէն ալ շատ մարդ կորսուելէն ետեւ՝ վերջապէս ծանր պայմաններ յանձն առնելով, Պելկրատու ժողովքին մէջ 27 տարուան համար հաշտութիւն սահմանեցին: Արբոր վեղիրը Պոլիս դարձաւ, շատ մեծ հանդիսով զինքը ընդունեցան, թագաւորն ալ մանաւոր կերպով զինքը փառաւորեց:

Ռուսաց ու Վերմանացուց պատերազմէն ետեւ Սուլդան Սահմուտ ուղելով ժողովուրդը զբաղեցնել, 1340ին իրեն իրեք աղջկանց հարսնիքը

կատարեց շատ տեսակ քաղաքական հանդէսներով: Բայց ժողովուրդը ուտելիքի սղութեան համար մեծ խռովութիւն հանեցին. այնպէս որ հազիւ վեղիբր ու Լեւիւրիներուն զօրավարը մէկ եղած՝ կրցան զանոնք հանդարտեցնել: Արցն օրերը Վերմանացոց դեսպանն ալ Պօլիս հաստ շատ ընծաներով. բայց չէ թէ միայն ուզած սրայմանները չկրցաւ առաջ տանիլ, հասա նաև պատիւ չդոնալէն զատ՝ շատ անարդուեցաւ: Արցն ատենները հասաւ նաև Վատրը շահին դեսպանը, որ շատ փառօք ընդունեցան, այնպէս որ արբունիքը մտած ատեն դրան երկու կողմէն շարուած էին թագաւորին երեսուն ձիանքը՝ բոլոր ոսկիով մարդրտով ու գոհարներով զարդարած. նմանապէս թագաւորին թիկնապահներն ալ բոլոր ոսկեղկիպակ զգեստներով, ու արծաթ ոսկի սաղաւարտներով: Վեսպանը այնչափ ձօխութիւնը տեսնելուն արդէն շիտթած՝ ուրիշ բան չկրցաւ ըսել, բայց եթէ՝ Տէր արքայ, ու մէկէն Վատրի թուղթը հանեց ու թագաւորին տուաւ: Ետև ամենայնիւ խոհեմ թագաւորը խնցաւ թէ Վատրի միտքը չար էր, բայց ջանաց որ ժողովուրդն ալ աս բանիս վրայ կասկած չունենայ. ուստի մեծ հանդիսով Սէտինէ ու Արուսաղէմ ընծաներ զրկեց:

Բայց ետեւէ ետև դեսպաններ կուգային ըսելով թէ Վատրը շատ զօրքով սրատրաստուեր է Պաղտատ ու Տիգրանակերտ քաղաքները առնել:

լու, և թէ Վարին քաղաքն ալ արդէն պաշա-  
 րած է: Հոն տեղը եղած կուսակալները երկայն  
 ատեն ան բռնաւորին դէմ կէցան, շատ անգամ  
 ջարդուելով, շատ անգամ ալ յաղթելով. բայց  
 երբոր Պօլսէն ալ անհամար զօրքով ձառնայ ըն-  
 հաւ հէքխնդատէ Մլի փաշան՝ Վատրբի վրայ եր  
 թաղու համար, Պարսիկները դարձեալ դետպան  
 դրկեցին առջի ուզած պայմանները նորէն առա-  
 ջարկելով: Ալ երջապէս կէս մը ( ) ամանցիք կէս  
 մըն ալ Պարսիկները իրենց ուզածէն ետ կե-  
 նալով՝ հաշտութիւն եղաւ մէջերնին: Բայ ձայնը  
 զամէնքը ուրախացուց, և սկսան Պարսկաստան  
 խաւրելու ընծաներու պատրաստութիւնը տես-  
 նել: Եւ որովհետեւ լսեցին թէ՛ Վատրբ օսկիկ  
 գահ մը կը դրկէ թագաւորին բոլոր մարդրիտնե-  
 լով ու գահարներով զարդարած, ( ) ամանցիք ալ  
 անոնցմէ վար չմնա՞նք ըսելով՝ անհամար ծախք  
 րին դրկելու ընծաներուն, որոնց մէջ կային գու-  
 հարազարդ դանակներ, սուրեր, աղեղներ, կա-  
 պարձներ, օսկի տուփեր, ժամացոյցներ, գիպակ-  
 ներ ու զէնքեր. ասոնցմէ զատ երեսուն ալ ձի՛ փա-  
 ռաւոր կազմուածքով, որոնց ամենուն գինը  
 400,000 զուրուշի կը հասնէր: Բայ ընծաները  
 տանողն ալ որոշուեցաւ Վէսրիէլի Մհմէտ փա-  
 շա, իրեն հետ Քահմի ու Վիւման Էֆէնտինե-  
 րը: Բայց ասոնք հաղիւ թէ Պարսից սահմանը  
 անցեր էին, լսելով՝ Վատրբ շահին սպաննուիլը՝  
 փախան Պաղտատ գնացին: Պօլիս շատ մեծ

ուրախութեամբ ինչն եղաւ այնպիսի բռնաւորի մը սպաննութիւր . մանաւանդ որ ան ատենները բռնուէլով սպաննուեցան նաև Աղխատտի բռնակալ նախարարները , որ Մէմլուք կ'ըսուէին :

Սուլդան Սահմուտ իր թշնամիներէն ազատելով , հրամայեց որ իրեն աղջկանց հարսնիքը ամենայն փառաւորութեամբ կատարուի : Բայց որովհետև ան օրերը լուսնի ու արևու խաւարումն սբատահեցաւ , և ժողովուրդը տեսնելով որ Սէյիտ Բագտուլահ փաշան վէզիրութենէ ընկաւ , սկսան ըսել թէ լուսնի խաւարումը վէզիրին իյնալուն նըշանն էր , ու անտարակոյս թագաւորին գլխուն ալ գալիք մը կայ : Սմանաւանդ որ ան օրերը ասդին անդին ալ կրակները շատցեր էին , ուսկից չար գուշակութիւններ կ'ընէին ժողովուրդը : Սուլդան Սահմուտ ալ աս խօսքերս վերջացրնելու համար , սկսաւ այրած տեղերը նօրէն շինել տալ ու նոր շէնքեր հաստատել . Աւրուպացոց դեսպաններէն եկած շատ ընծաներն ալ աս բաներուս կը ծախէր : Բայց աս խոտլութեանց գլխաւոր պատճառը Պէշիր անունով ներքինապետն էր , որ թագաւորին սիրելի ըլլալով՝ ուզածը առաջ կը տանէր ու մեծամեծ պաշտօնատէրներն ալ ուզածին պէս փոփոխել կուտար . այնչափ որ բոլոր պաղատականներն ու գլխաւորներն ալ անոր հետ թշնամացան , և դէնպետն ալ թագաւորին խնայուց թէ ինչուան որ Պէշիրը չմեռցրնէ , ժողովուրդը չհանդարտիր : ( )ը մը թագաւորը Պէշիրին հետ

մէկտեղ ուզէց Սոսորի վրայ եղած սրալաներէն մէկը երթալ . ինքը դուրս ելլելով նաւակէն՝ աչք բրաւ սրածանձիպաշինն որ Պէշիրը Վրդ զուլէսին տանի ձգէ , ուզելով որ անկէց ալ Ազգիպտոս արքորէ զանխկայ : Լայց երբոր խնացաւ որ ասով ալ գոհ չեն մեծերը , սորաննէլ տուաւ զինքը , որուն քովէն բաց անհամար հարստութենէ , 50,000,000 ալ զուռուշ գանուեցաւ : Պէշիրին սիրելիներէն մէկն էր նաև մեր ազգէն Աստղուպ անունով մէկը , որ նոյն ատենը սորանուեցաւ :

Լն տարին , որ էր 1752 , մեծամեծ երկրաշարժներ ու փոթորիկներ եղան . այնպէս որ Ասիրնէի մզկիթներէն շատը փլան , ու Պօլսոյ Լյա Սոփիա ու սուլդան Սէհէմմէտ մզկիթներն ալ շատ փնատուեցան . նմանապէս քաղաքին հին սարսափաց մէկ մտար ու Ասի զուլէին մէկ աշտարակը կործանեցաւ . Վեազատխանէի գետը աստիկ բարձրացաւ , ու տուներ ու ջրաղայներ քչեց տարաւ , և շատ մարդիկ վրատակներու տակ մնացին : Լս չար դուշակութիւններն ու ստիկին աւերորդապաշտութիւնը կարծես թէ արդարացուց սուլդան Սահմուտին հիւանդութիւնը , որ դեկտեմբերի 13ին ուրբաթ օրը հազիւ թէ մզկիթ կրցաւ երթալ , ու դառնալու ատեն արքունիքը հասաւ չհասաւ՝ ընկաւ մեռաւ 1753ին : Սէհէն ՚ի մէկ արքունեաց թնգանութիւններն արձրիուեցան , որ նշան էր թագաւորին մահուանը :




Մահմուտ յիսուն տարուան էր երբոր մեռաւ ,  
 ու 24 տարի թագաւորեց խաղաղութեամբ ու  
 արդարութեամբ : Իր օրերը զիտու թիւններն ու  
 վաճառականութիւնը ծաղկեցան . քաջութեան  
 անունն ալ բոլոր Աւրոսա հռչակուելով՝ ամէն  
 տերութիւններ իրեն զեապան կը գրկէին , ( ) անն  
 ցոյց նիզակակցութիւնն ու օգնականութիւնը ու  
 զելով : Իսկ իրեն մեծագործութիւններուն մէջ  
 անուանի են Պիւլիքաթէի մէջ շինել տուած  
 մեծամեծ ջրչիղջները , որոնցմէ ջուրը գեանի  
 տակէն ու մեծամեծ կամարներու վրայէն անցը  
 նելով՝ Պէյօղլու ու Վալաթիա բերել տուաւ :  
 Ընտանի շինուեցաւ նաև Պէյօղլուի (Թագսիմ  
 լուած ջրաբաշխը , որուն ջուրը կը բաժնուի 40  
 աղբիւր , ու ամէն տեղ կը տարածուի :

Սուլթան Մահմուտի մեծանունութիւնն ու վր  
 սեմութիւնն ալ ազելի կ'երևնայ աս հետագայ զի  
 սուածիս մէջ : Ընդամ մը երբոր պոսթանաճիպա  
 շինն հեա ծպտեալ կը պտըտէր Սոսիսի մէջ ,  
 տեսաւ որ անդիէն նաւակ մը կ'անցնէր չորս  
 թիով , և մէջն ալ հրեայ մը ազնիւ կերպաններու  
 ու ոսկեթել զիպակ բարձերու վրայ կռթնած ,  
 ոսկուով ու սաթով պատած ծիտախայտէ մը ծուխ  
 կը քաշէր : Ըստ հրեան ենիչերիններուն սրաշարը  
 ինքը կը սրատրտաւէր ու պոսթանաճիպաշին անոր  
 սաստիկ թշնամի ըլլալով , աս տեսածին պէս՝ սկը  
 տաւ վրան չարախօսութիւններ ընել : Իսկ թա  
 գաւորը ոչ միայն ականջ չկախեց անոր լսածնե-

բուն, հասարակ խնամարար մը բուսաւ : Հայ անխելք,  
 քնձի փառք չէ ասիկայ որ մինչև հրեաներն ալ  
 որ ամէն տեղ անարդուած են՝ խմ տէրութեանս  
 մէջ ասանկ ազատութիւն ու ճոխութիւն կը  
 վայելէն :





## ՄՈՒԼԳԱՆ ՄՈՒՍԳԱՆՖԱԿ Գ.

ՄՈՒԼԳԱՆ Մուսղաֆա Գ. երբոր Թագաւո-  
րեց 1758ին, իր առջի հրատմանը առ եղաւ ընդ  
էֆէնտիին՝ որ Արտապապուց զեապանները երբոր  
զան՝ զուրցէ իրենց թէ ամէն ընծայէն աւելի  
հաճոցական է իրեն՝ որ տաճիկ զերինները արձը-  
կեն։ Պարտրի համար բռնուողներուն համար ալ  
ստակ սահմանեց սղատելու։ Շատ անգամ  
ճպտեալ կը ստորտէր քաղաքը՝ ինքիւրեն զիտելու  
տեսնելու ամէն բան. շատ խիստ էր քրիստոնե-  
ներուն ու հրեից հազուստին, չէր ուզէր որ կնիկ  
մարդիկ ամենեւին անէն դուրս ելլեն. ուրիշ շատ  
կարգաւորութիւններ ալ ըրաւ իր հարատակնե-  
րուն հանդատութեանը համար։ Պօլսոց բնա-  
կիւնները այնչափ աճեցան իր օրը, որ հարկ եղաւ  
նոր ցորեննոցներ շինել, որ հարիւր հազար զաւ-  
ցորեն կ'աւանդին՝ ու թը հազարին տեղը։

Շատ թագաւորներ իրմէ առաջ փորձեր էին  
 Սև ծովը Իզնիսի տի ծոցին հետ միացնել Սա-  
 պանձայի ծովակովը . նախ Բիւթանացոց թա-  
 գաւորները, ետքը Տրայիանոս Հռովմայեցոց  
 կայսրը, ետքը Սիւլէյման օրէնսդիր թագաւորը,  
 ետքը Սուրատ Գ., ու Սէհէմէտ Գ.: Այն  
 փորձը Սուղաֆա ալ ուղեց ընել՝ վեց հազար  
 քսակ սահմանելով աս բանխ համար . Անգղիա-  
 ցոց ու Գաղղիացոց դեսպաններն ալ շատ օգնե-  
 ցին խորհուրդ տալով . բայց ջրանցքը փորելու  
 ատենը այնչափ ջուր սկսաւ ելլել որ քաղաքը  
 տրտելու վախէն գործքը ետ մնաց :

Տարիներով առաջ պատերազմի նշան մը կար  
 ( )սմանցոց ու Ռուսներուն մէջ . 1768ին աւել-  
 ցաւ աս ձայնը, բայց հասարակ մարդիկ չէին զի-  
 տեր, մեծերուն մէջը կը պտըտէր փախուքը :  
 Միայն թագաւորին բժիշկը Աոպիս անունով  
 որուն հետ տեսնուողները մինչև հիմա կան ու  
 իր բաները կը պատմեն, լսած էր թագաւորէն աս  
 բանը ծածուկ . մինչև ան ատեն ( )սմանեան  
 դուռը Տաճկի գիտունները բժշկութիւն կ'ը-  
 նէին, օտարազգի բժիշկ չէր մաներ . Սուղաֆա  
 եղաւ առջինը որ չէ թէ միայն իրեն՝ այլ և իր  
 կանանցը բժիշկ բրաւ Աոպիսը . որովհետեւ եւ-  
 ըտպացի բժիշկները շատ կը յարգէր : ( )ը մը  
 թագաւորը Ռուսաց դէմ տարցած՝ սկսաւ ըսել  
 Աոպիսին . Շար չկայ, պէտք է որ ծեծ մը տամ  
 Ռուսներուն որ դաշինքնին չեն պահեր, ու Վե-

Հաստան, Սրաստան, Վարաստաղ խմիրաւունքս  
առքի տակ կ'անեն :

Ընկեց ետև Սուպարիա իր բողոքները ըրաւ  
Սուսայ դեսպանին . շատ խօսքեր անցնելէն ետ  
քը Սուսայ ու Վլանդ մէջը, սկսան պատերազմի  
պատրաստութիւն տեսնել : ( ) ամանցուց ամէն մե-  
ծերը իրենց զօրքերովը Ղախրնէ քաղաքը ժողվե-  
ցան, ու անկեց ամէն Հարկաւոր տեղուանք զօրք  
ու ստակ զրկուեցաւ : Ըն միջոցին լուր մը ելաւ  
որ Սուսները, Պրուշները, Վերաննացիք ու Ընդ-  
դիացիք մէկտեղ միացել էին . սա բանս վախցուց  
Թագաւորը, ու վեղիբը ջանացաւ ստուգել սա  
լուրը, ու գտնէ Վերաննացիները բաժնել ան  
միաբանութենէն : Բայց ինքը դեսպանին հետ  
սա ջանքը ընելու օրերը՝ թիւրքէ մահալէսիին  
խնամը, էնիւրիները և ուրիշ տաճիւրներ մեծ  
անարգանք ու նեղութիւն տուին դեսպանին ու  
իր ընտանեացը՝ որ հոն տեղուանքը անի մը մե-  
ջէն զօրքին անցնելը հետաքրքրաբար կը նայէին :  
Վեանքերնին ալ վտանգի մէջ էր՝ թէ որ Տաճկաց  
մեծերէն մէկը իր զօրքովը հասած չըլլար զիրենք  
խաղթուելու համար . ինչպէս որ ուրիշ ամէն մե-  
ծերն ալ սա բանիս վրայ շիտթեր էին : Արիւ  
օրէն դեսպանը վեղիբին դնաց՝ մնաս բարով լու-  
լու . բայց եղած բաներուն վրայ ամեննին բան  
մը չ'իշխեց : Ընտ զարմացաւ վեղիբը անոր համ-  
բերութեանը վրայ, ու մեծ պատիւ ընելով իրեն  
և իր կնոջը՝ սամուրենի և ուրիշ մեծացին ըն-

ծաներ տալէն ետքը՝ ( )ամանցւոց Վերսինացւոց  
հետ ըրած հաշտութեան թղթին մէջ աւելցր.  
նել տուաւ մշանջէնաւոր խաղաղութիւն, որ Վեր  
մանացւոց առջի դեսարմաները շատ ետեւէ ընկեր  
էին աւելցընել տալու Վրանը, ու չէին կրցեր:

(Թագաւորը հրաման ղրկած էր Խրիմու խա  
նին՝ | Եհաստանի կողմը վազել. անխիայ ալ հա  
րիւր հազար թագաւորներով Պուկ գետէն ան  
ցաւ Ռուսաստանի բոլոր հարաւային կողմը թալ  
լեց աւրեց, հազարաւոր հողի ջարդեց, շատերն  
ալ գերի ըրաւ, հարիւրէն աւելի գեղեր անա  
պատ դարձուց, ու բոլոր ցորեննոցները այրեց.  
բայց ամիս մը ետքը իր յոյն բժշկէն թուաւու  
րուելով մեռաւ: Իսկ Ռուսաց թագուհին Վա  
տարինէ Ռ, բոլոր ձմեռը պատերազմի պատրաս  
տութիւն տեսնելէն ետե՛ իր մեծերը իրենց զօր  
քովը ցրուեցան, ամէն դիէն պաշարեցին ( )ս  
մանցւոց երկիրը: Բարիլի մէջ հնետգեր գետը  
անցան ու սկսան զարնել Լյոթուն բերդը. հաճ  
կընէրուն նոր օգնութիւն հասաւ Սելանիլի փա  
շան, ու յաղթեցին վաւրեցին Ռուսները: Բ  
աւեալսը երբոր հասաւ Պօլիս, թագաւորը ու  
իր մեծերը շատ ուրախացան, խնաց ըրին ամէն  
դիի խնամներուն, որ անկեց ետքը ուրբաթ օ  
րուան նամաղին մէջ թագաւորին տխուրանէրուն  
հետ Վ աղի անունն ալ աւելցընէն, որ է ըսել  
հաղթական: Բրդէն ուրիշ անգամ մըն ալ փոր  
ձեցին Ռուսները Լյոթուն բերդը աւնել, ու նա



րէն Խորխոս խանը հասաւ զիրենք հալածեց :  
 Բայց առ յաղթութեան աւետեաց հետը Լամին  
 փաշա վէզիրին անհոգութեանը ամբաստանու-  
 թիւնն ալ հասաւ թագաւորին ականջը, որ բռ-  
 նել ու զլխատել տուաւ զինքը իրեն դաւակն-  
 ներովը, որ էին Սողտաւիայի իշխանը Վալխմաքի  
 ու արքունի թարգմանը Տրաքոյ :

Եւոր տեղը եղաւ վէզիր Սողտուանձի Բլի  
 փաշա իր թշնամին, որ Սուսաց ետեւէն բանա-  
 կին կէսը անցուց Տնեսդերին անդիւի կողմը, հինգ  
 կողմէն պաշարեց Սուսները, ջարդեց անոնցմէ  
 ութհարիւր հոգի, ու շատ թնդանօթներ ուրիշ  
 աւարներու հետ առաւ : Բայց իրեններէն ալ  
 երկու հազար հոգի կորսնցրնելով ետ դարձաւ,  
 ու տասուերկու հազար կորիճ մարդիկ հետը ա-  
 ռած՝ գիշեր ատեն նորէն գետը անցաւ : Բայց  
 գետին ջուրը բարձրացաւ, կամուրջը կտորեց .  
 թէպէտ լաստեր շինեցին գետին վրայ, բայց անօ-  
 գուտ եղաւ . ( )տննցւոցմէ շատը Սուսաց թրին  
 բերանը գնացին, շատը գետը թափեցան խղզուե-  
 ցան, ու քիչ մարդ փախաւ սպրեցաւ : Խորթու-  
 նի մէջ եղող զօրքն ալ յուսահատած՝ ելան փա-  
 խան, ու Սուսները մտան տիրեցին բերդին . ետ-  
 քը առին Ապաղն ալ, Լաշն ալ, Պուքրէշն ալ,  
 թէպէտ հարկ եղաւ որ Տաճկաց վախէն Ապաղը  
 կրակի տան, ու նորէն ետ քաշուին : Եւ միջոցիս  
 Բլի փաշան ընկաւ վէզիրութենէ, ու անոր տեղը  
 անցաւ Խալիլ փաշան որ անփորձ ու տղէտ էր պա-

տերազմական բաներու . պաշտօնատէրներու ալ  
 փոփոխութիւն ընելով՝ Խորհմու խանը ձգեց պաշ-  
 տօնէն , որ քաջ մարդ մըն էր : Սուսները ղխն-  
 ցին Ֆորջան ու Եսրայել , ու Լըկէօկի քաղաքին  
 մօտ իրէք հազար հողի ( ) մաննցւոյմէ սպաննելէն  
 ետքը՝ կրակ տուին քաղաքին , ու յաղթանակով  
 Պուքրէշ մտան : Ետքը Օլաթինա քաղաքն ալ  
 առին Սոլտախայի եկեղեցականներուն մատ-  
 նութեամբ . ու Սայնայի Յոյները ստրկով ու  
 խոտամուքներով իրենց հետ միացուցած , շատ  
 նաւերով Պալթիկ ծովէն մտան Սիջերկրականը  
 ու հասան Յունաստանի ղխնացը . կէս մը Րըշի  
 պեղագոսի կղզիներուն մօտը կէցան , կէս մըն ալ  
 Սայնային կողմերը ցտնաբ թափեցան , ու յիսուն  
 հազար զինեալ զօրք տեղացիներէն իրենց հետը  
 միացուցած՝ զնացին պաշարեցին առին Սիսիթրա  
 ու բոլոր տաճիկ բնակիչները ջարդեցին : Ասա-  
 բին ու Անտարի ու Րըկադիա ալ առին , ու  
 բոլոր Յոյները յորդորեցին աստամբէլու : ( )ս-  
 մանցիք երբոր աս ամէն բանը լսեցին , չկրցան  
 հաւտալ . բայց երբոր խնացան իրաւ ըլլալը , մե-  
 կէն նաւատորմիդը դուրս հանեցին , շէշմէ քա-  
 ղաքին ղխնացը զարնուեցան : Սուսաց ծովակա-  
 լին նաւը զարնուեցաւ Ղէզայիլի հասան նա-  
 ւապետին նաւուն , ու երկուքը մէկտեղ օդը ե-  
 լան . ետքը ուրիշ նաւ մըն ալ զարկին ( ) մանցիք  
 կատրտեցին , որուն մէջ եօթը հարիւր Սուս  
 կար : Բայց հետեւեալ ղիշերը այրեցին Սուսք

( ) ամանցւոց բոլոր նաւահանգիւսք . և որովհետեւ  
 ( ) ուլով զօրսպետին քաջութեամբըր եղաւ սոյաղ  
 թու թիւնը , Սուտաց թագուհին իրեն յաղթաւ  
 կան կամար կանգնել տուաւ Փեղրպուրկ , ու  
 4 Ղէսմէիքի անուանեց զինքը , Ղէշմէ քաղաքին  
 առջևը սրատահելուն համար ան յաղթութիւնը :

( ) ամանցիք շատ խռովեցան սոյ կորստեանը  
 վրայ . փոխեցին ծովապետնին , ու ծերունի Ղա-  
 Ֆէր փաշան զրին : Սէղիրութենէ ընկած Մւկի  
 փաշան ալ զրկեցին շանագ դալէսիին բերդերը  
 պաշտպանելու , որ Սուաները կը զարնէին . բայց  
 հարկ եղաւ որ ետ քաշուին քսան հատ պաշար  
 տանող նաւերէն կորսնցընելով : ( ) ուլով ալ Սեմ-  
 նոս կզգին վաթսուն որ պաշարելէն ետքը երբ-  
 որ առնելու վրայ էր , Ղէզպիրլի հասան կտրիճ  
 նաւապետը , որ իր նաւը այրելու ատեն հաղիւ  
 խալըսած էր , սաստիկ կուռով զինքը վառնտեց :

Ըս միջոցիս Սոլտաւիայի կողմն ալ սաստիկ պա-  
 տերազմեղաւ . Սուաները յաղթեցին , 140 թըն-  
 դանօթ ( ) ամանցւոց ձեռքէն առին ուրիշ շատ  
 սուարներու հետ . Սուաներէն ընկան հաղար  
 հողի , տաճկըններէն երկու հազար : Ետքը երբոր  
 Իսմայիլ քաղաքն ալ ու Պէնտէր բերդն ալ երկու  
 ամիս պաշարելէն ետե՛ տասը ժամ պատերազմե-  
 լով առին , վրէժնին հանելու համար՝ շատ ան-  
 զթութիւն ըրին բնակչաց վրայ , ու ( ) ամանցւոց մե-  
 ծերէն ալ գերիներ բռնեցին . ետքը դեսպան  
 զրկեցին վէզիրին հետ հաշտութիւն խօսելու

համար, առանց ուրիշ տէրութիւնները մէջ մտնելու :

Սկզբը իշխանութիւն չունենալով հաշտութիւն ընելու, Ռուսաց նամակը Պօլիա դրկեց թագաւորին. թէպէտ Ռուսք չէին դադարած ուրիշ քաղաքներ ու բերդեր ալ առնելու, անանկ որ թագաւորն ու բոլոր տաճկները սուզի մէջ էին : Արտագական տէրութեանց դեսպաններն ալ մէկմէկէ աւելի կը ջանային որ միջնորդ հաշտութեան ըլլան . թագաւորը եւելօք կը վստահէր Վերմանացոց դեսպանին, ու անոր ձեռքովը վերջապէս զինադադարում ընել տուաւ Ռուսաց՝ ինչուան որ որոշուին հաշտութեան պայմանները :

Բայց եւրոպական տէրութիւնները աս բանս եփեղ ջանալու տտենը, Ռուսք առին Արկեօկի ու Վուլչա քաղաքները, Իսաղչի եղած ցորեննոցները այրեցին, ու բանի մը տեղ ալ ( )ամանցոց զօրքերը զարկին . բանակէն ալ շտտերը սկսան փախչիլ, անանկ որ աստիկ հրաման եղաւ Սեծովու նաւահանգիստներուն՝ չթողուլ որ մէկը անցնի : Եւ գէշ կ'երթար ( )ամանցոց բանը Խորեմու մօտ . Ռուսք 90,000 զօրքով հասան առին ( )ըզաբու քաղաքը, թիաման բերդը, ու մտան Խորեմ : Սէլիմ Վէրէյ Խորեմու խանը, որ առաջ զեղիսութեան ետեւէ էր, ետքէն ետքը արթնցաւ զխնացնին ելաւ 50,000 զօրքով, բայց հարկ եղաւ որ մինակ փախչի Պաղչէտարայ . հոն ալ երբոր հասան Ռուսք, փախաւ Վաղատաղ ըսուած

լէսները՝ ուր որ ամրացեր էին իր ընտանեացմէ շատերը . ան տեղն ալ ապահով չըլլալով՝ գնաց շխտակ Պօլիս . (Թաթարներն ալ թուլցած՝ շատր փախան Պոնտոսի ծովեզերքը : Սուսք պաշարեցին Վէֆէ քաղաքն ալ , (Թաթարները երգում ըրին հաւատարիմ ըլլալու անոնց թագուհոյն . Սուսք մտան Վէֆէ , ետքը Աերջ , Լինիգալէ , Աեօղլէվէ ու Սուտաղ . Իպրահիմ փաշան ալ՝ որ շատ ուշ հասաւ՝ բռնեցին Փեղրպուրկ տարին . Սէլիմ խանին երկու որդիքն ալ բռնեցին քառասունուերկու իշխաններու հետ , անոնք ալ զրկեցին թագուհին , և ուրիշ խան մը զրին Խրիմ անկախ ( )ամանցիներէն : (Թաղաւորը երբոր աս ամէն բանը տեղեկացաւ , ու խնայաւ ալ որ Լատրնէցիք վէզիրին դէմ էին՝ չէին ուզեր որ զօրքը իրենց քաղաքը ձմերէ , ու մեծ խռովութիւն ելեր էր , վէզիրը ձգեց ու նոր վէզիրը տասը հազար զօրքով զրկեց որ Վանուբ գետին եզերքը ամրացնէ ու ձմերէ ( ումնա : Իրմէ դրուած Խրիմն խանն ալ Սագսուտ Վէրէյ անունով հասաւ միացաւ անոր հետ :

Իսպց երկու գիէն զինադադարում ըրեր էին . Սուտաց դեսպանները եկան հասան Լաշ . ( ) և մանցիք ալ ընտրեցին իրենց դեսպանները . նմանասպէս Վերմանացիք ու Պրուհներն ալ հասուցին իրենցները . եկան ժողվեցան ամէնքը Տորջան քաղաքին մօտ՝ վրաննին զրին : Սխայն թէ Սուտաց դեսպանները չէին ուզեր որ Վերմանացիք ու



Պուշները մէջ մտնեն . անոնց շատ դժարը եկաւ , բայց Տաճկընները կը միտթարէին զանոնք իրենցմէ խորհուրդ հարցընելով . ժողովքին վերջը շատ անցաջող եղաւ . մանաւանդ լծաթարներուն պատճառաւ , զորոնք կ'ուզէին Սուսները ազատ ընել Տաճկըններէն , ու Տաճկընները չէին հաւաներ . անանկ որ՝ քակուեցաւ ժողովքը , Սուսաց դեսպանները ուղղակի վէզիրին հետ սկսան լծը լծակցիլ , մինչև նոր դեսպաններ եկան ( )ամանցիններէն , ու Պուքրէշ նորէն խորհրդի մտան : Սուսք նորէն տասը պայման առաջարկեցին , Տաճկընները ամէնն ալ յանձն առին . բայց լծաթարներուն վրայ երկար խնդիր եղաւ . վերջապէս սահմանեցին որ նախ լծաթարները ինքիրեննուն ընտրեն Արխմու խանը , բայց ( )ամանցեոց լծադաւորը հաստատէ զանիկայ . երկրորդ՝ Արխմու մկկիթներուն մէջը ( )ամանեանց լծադաւորին անունը յիշուի . և երրորդ՝ հաւատքի ու բարեկարգութեան վճիռները բոլորն ալ Պօլիսէն ընդունին լծաթարները :

Վառատուն օրէն Սուսք ուրիշ եօթը պայման ալ դուրս հանեցին՝ Փեղրպուրկէն նոր հասած , որ ( )ամանցեոց անտանելի էին . անանկ որ արիւններուս վերջի կաթին ալ կը թափէնք , յանձնէնք առնուր ըսին : Ետ երթեալ ու խօսակցութիւն եղաւ մէջը զանելու . բայց բան մը չյաջողէրով՝ նորէն պատերազմի պատրաստութիւն տեսան . լծադաւորը հրովարտակ հանեց ամէն



դի զօրածողով ընելու, ու մեծերէն շատերը իրենց ծախքովը զօրք սրատրատեցին հայրենեաց համար: Սուսները անցան մէկէն՝ Վանուր գետը՝ ինչուան Պաղարձըգ ու Վարասու գնացին. բայց Սուսնուգ ալ առնել ուղեւով՝ զարնուեցան չարաչար Տաճկներէն, ու շատ գերի ընկան: Ատրբը Ալիխտրէի բերդը պաշարեցին, եօթանասուն թնդանօթով շարունակ կրակ կը թափէին քաղաքին վրայ. բոլոր բնակիչները դուրս փախան, Սուսը ներս յարձրկեցան. բայց ( )տանն փաշա Տաճկաց սարսապեար քաջութեամբ կռուեցաւ ու վաճառեց զիրենք, ու թ հազար հօգի ապաննեց, հազար ալ վիրաւորեց. անանկ որ Վազի անուն ստացաւ, ու սամուրենի և ականակուռ թուր մըն ալ պարգև ընդունեցաւ, եօթը հազար ալ ձեղենակ՝ իրեն զօրացը բաշխելու:

Ան ատենը Սուսաց երկու բանակը մէկտեղ միացած՝ Վարանուրատ աւանին մօտ սաստիկ զարնուեցան ( )տաննցւոց հետ, ու վաճառեցին զիրենք ինչուան Պալզան ու Շուսնա, բանակին մէջ եղած ամէն բանը յափշտակելով: Այս որ լսեցին ( )տաննցիք, մէջքերնին կոտրեցաւ, թագաւորին հիւանդութիւնն ալ մէկալ զիէն բողբոլին յուսահատութեան մէջ ձգեց զիրենք: ( )ագաւորը անկողնին մէջէն լսելով իր զօրքին յաղթուելը, կ'ուղեր ինքը ելլել երթալ Ատիրնէ. բայց խորհրդակիանները ըսին որ ասանկ ատեն ու ատ հիւանդութեան մէջ աղէկ չէ քեզի հեռանալ

Պօլիսէն , ու արգիլեցին : Արդու ամենն մեռաւ .  
 Թագաւորը 1773ին , եօթը տարի Թագաւորե-  
 լէն ետեւ , ու սպաւերազմը կէս Թողուց , որ ետքը  
 իր եղբօրը Ալտիւլ Համիտին ատենը դադրեցաւ .  
 անս պայմաններով՝ որոնք որ Պուքրէշ Հաստա-  
 տուած էին :

Սուղաֆա ուսումնասէր Թագաւորներէն մէ-  
 կը եղաւ . քամազանին ամէն զիշերները կը Ժող-  
 վէր իր տէրութեանը գիտնականները՝ անոնց խօ-  
 սակցութիւնը լսելու համար : Իր ատենը շինուե-  
 ցաւ Քաղիպ փաշային գրքատունը ու դպրատու-  
 նը՝ ձրի տղաք սորվեցընելու : Շէնքերու ալ սէր  
 ունէր . Այնի գաիուէն դուրս եղած մեծ Թաղը  
 ինքը շինեց , որուն երկայնութիւնը 12,000 կան-  
 գուն է , լայնութիւնը վեց հազար : Ինքը շինեց  
 նաև Ալէլի ըսուած մզկիթը՝ Սուլթան Սէլիմի  
 մզկիթին ձևովը , վեց հատ գեղեցիկ մարմարիոնէ  
 սիւներով որ քաղքին հին աւերակներէն զըտ-  
 նուած էին :





## ՍՈՒԼՒՆ ԵՒ ԵՊՏՈՒԼ ՆՇՄԻՏ Ե.

ԵՊՏՈՒԼ ՆՇՄԻՏ Տինգ տարուան էր երբոր մե-  
ռաւ իր հայրը ԲՏմէտ Գ, բայց 48 տարուան թա-  
գաւորեց. ու տեանելով որ Ռուսաց պատերազմը  
չատ վնասներ ըրեր էր իր տէրութեանը և թա-  
գաւորական գանձը պարպեր էր, մինչև զօրաց  
սովորական թռչակն ալ տալու ստակ չէր մնացեր,  
ուզեց խաղաղութիւն ընել. բայց գիտնական  
ները աս բանիս դէմ կեցան, ու նորէն պատե-  
րազմ բացուեցաւ. որով Ռուսները աւելի առաջ  
անցան, ու հասան ինչուան Լնիպաղար ու  
Շումնա քաղաքները. այնպէս որ Միւհսինգաւ  
տէ վէզիրն ալ ստիպուեցաւ հաշտութիւն ընե-  
լու Ռուսաց հետ, բայց Պօլիս դառնալու ատեն  
մեռաւ. ոմանք կարծեն թէ թունաւորած ըլլան  
զինքը: Իսկ Բպտիւլ Տամիտ որովհետև գիտէր  
որ աս խաղաղութիւնը երկայն պիտի չբըշէ, գաղ-

զիսպի զօրավարներ բերել տուաւ իրեն զօրքին ալ  
 եւրոպական զօրաց կըթու թիւն տալու համար :  
 Եւ իրաւ , բիշ ատենէն երբոր Խրիմու խանը  
 Շահին Վէրէյ տէրու թենէն հրաժարեցաւ ու  
 բոլոր իր երկիրը Ռուսաց թողուց , նորէն առ եր  
 կու ազգաց մէջ մեծ սրատերազմ բացուեցաւ :  
 Բայց որովհետեւ ան ատենը Ռումէլի , Վա  
 մասիոսի , Եգիպտոսի ու Պաղտատու մէջ ալ շատ  
 սպառտամբութիւններ կային , անոր համար աղէկ  
 սեպեց Ղպտիւլ Տամիտ Խրիմու իշխանութենէն  
 հրաժարիլ . թէպէտ և տեննելով որ Սրաց Տե  
 րակը թագաւորն ալ իր տէրութիւնը Ռուսաց  
 յանձներ էր , շատ կը վախնար անոնցմէ : Բայց  
 այսու ամենայնիւ ( ) աննցիք սրատրաստ էին քու  
 ջութեամբ ետ առնելու իրենց կորսնցուցած եր  
 կիրները , թէ որ Ղանաուտի երկրին կուսակալը  
 Մահմուտ փաշան բոլորովին զլուխ քաշած չըլ  
 լար , ու շատ անգամ ( ) աննցուց հետ չզարնուէր :  
 Ղպտիւլ Տամիտ հրաման տուաւ Տասան փաշայ  
 քն՝ որ Եգիպտոսի վրայ գացեր էր , բոլոր նաւա  
 տորմիզը Սե ծովը թափելու , ու Վանուբի բեր  
 դերը անըրցընելու . և թէպէտ Վերմանացուց  
 դեսպանը դէմ կեցաւ ան սրատերազմին , բայց  
 վերջապէս 1787ին ( ) աննցիք խնցընելով ամէն  
 տէրութեանց թէ Ռուսը հաշտութեան սպայման  
 ները չէին պահէր , ու Խրիմն ու Վովկասը իրենց  
 ձեռքին տակը առեր էին , 500 հազար զօրքով  
 սրատերազմի սրատրաստուեցան , թող նաև Խրի

մու (Ս)աթարները որ ( )ամանցւոց օգնական էին :  
 Սուսներն ալ իրենց իրաւունքը հրատարակեցին  
 ու փոթեմբին ու Ռումեանցով զօրավարները  
 հաճկաց դէմ խաւրեցին :

( )ամանցիք անախնկալ դիպուածով մը աւելի  
 սիրտ առին քաջութեամբ սպտերազմելու :  
 Սան զի Սուսաց նաւատորմէն քանի մը նաւեր  
 Սէ ծովուն մէջ փոթորկի հանդիպելով, Մսիայի  
 ծովեզերքները ընկան . ասոնցմէ մէկն ալ որ 40  
 թնդանօթ ունէր, Սոստանդնուպօլսոց կիրճը զար-  
 նուեցաւ : Սաւապետը որ անգղիացի մըն էր, ուզեց  
 վառօգարանին կրակ տալ, բայց քովինները չթռ  
 զուցին . ( )ամանցիք վրայ հասան բռնեցին , ու  
 նորոգեղէն ետքը՝ անունն ալ դրին Սիւտավէրտի ,  
 որ Մստուած տուաւ ըսել է , ու անիկայ իրենց  
 նաւատորմին մէջ խառնեցին :

Սուսները ցամաքի վրայ զարնուեցան ( )ամա  
 նեանց հետ Վերմանացւոց օգնութեամբը . և  
 թէպէտ քանի մը անգամ ( )ամանցիք զանոնք  
 փախուցին , բայց որովհետև անոնց բանակին մէջ  
 ժանտախտ ընկեր էր , չուզեցին շատ ետևնուն  
 իյնալ : Բայց ( )ամանցիք մեծ ջարդ տուին Վեր-  
 մանացւոց , ինչուան որ վերջապէս Սաւտոն զօրա-  
 վարը , որ ան ատեն 70 տարուան էր , Սովի բեր-  
 դը առնելով՝ զանոնք սարսափեցուց : Իսկ Սուսք  
 ծովէ ու ցամաքէ ( )զուն պաշարեցին , ու վերջա-  
 պէս առին՝ իրենցմէ ալ շատ մարդ կորսնցընելով :  
 Մն ատենը մեծամեծ հեղեղներ եղան Սօլ

այ մէջ, բոլոր քաղաքը ջուր կոխեց, անանկ որ շատ տներ ու խանութներ ալ քշուեցան ծովը թափեցան, և լեռներէն իջած հողով մէկ գրկաչափ փողոցին յատակները բարձրացան: Արիշ կողմանէ ալ ստակի նեղութիւնը սաստիկ էր, անանկ որ ամենուն արծաթեղէնները աժան աժան առին որ ստակ կոխեն: Եւ դիպուածներէս քիչ առեւնէն ետքը սուլդան Մարտիկ համիտ ալ մեռաւ: ԱՅ տարի թագաւորելէն ետքը, ու թաղուեցաւ Պահաճէ գափուսու ըսուած տեղը Ալիտէ ճումիսին աղքատանոցին դիմացը:

Եւ թագաւորիս օրը գիւղազնացութիւնը շատ յաճախեց, որովհետեւ ինքը եղաւ որ Առօրի գեղերը ծաղկեցուց. իրեն ատենը ոսկերչութիւն ու բանուածքն ալ մեր աղցին մէջ շատ ծաղկեցաւ, որովհետեւ թագաւորը գահարներով ու մարգրիտներով բանուած բաներ շատ կը սիրէր:

Եւ թագաւորիս ատենը Պօլիս Ալիսիւրկէճի անունով մէկը կար, որ ծխաններ կը մաքրէր, և որչափ ստակ որ վաստըկէր՝ աղքատաց կը բաժնէր: Եւ մարդուս կրօնքը յայտնի չէր, ու երբոր զինքը վէզիրին դիմացը հանեցին՝ պատասխան տուաւ թէ ինքը Մարտիկի կ'ըսուի, իմ Մատուծոյ ծառայ: Այդիրը զինքը սախափեց որ զգեստին վրայ նշան մը դնէ, ու մզկիթ ալ երթայ որ մահմէտական ըլլալը խմացուի. բայց անիկայ վէզիրին դիմացն ելաւ ու խոստովանեցաւ թէ ինքը բրիստոնեաց է. որով մէկէն զլխատեցին:



զինքը : Այս որովհետև առջի օրը յիսուսեանց  
 եկեղեցին գնացեր ու հաղորդուեր էր , անկէջ  
 ոմանք կարծեցին թէ ասիկայ ազնուական մարդ  
 մը պիտի ըլլայ Այսրոպայէն եկած , ու ապաշխա-  
 բու թեան համար ան վիճակը յանձն առած :



ՍԷՆՏԻՄ Գ, ԵՒ ՄՈՒՍԴԵՖԸ Գ.

ՎՍԵՆԸՈՒԹԸ տարեկան էր Սէլիմ Էրբոր  
Թագաւորեց 1789ին, ու Թուր կապելու հանդի-  
սին մէջէն սկսաւ իր խնամքը ցուցընել Ժողովր-  
դեանը վրայ, անձամբ հասնելով կրակը մարելու  
համար, ու վեցամսեայ սովը քաղքէն վերցընելու  
ճարը հոգալով, որուն համար քսան հազար քսակ  
ծախեց իրմէ: Սէլիմ խաղաղասէր Թագաւորնե-  
րէն մէկը եղաւ. Թագաւորածին պէս՝ Շուեա-  
ներուն հետ հաշտութիւն ըրաւ, ու դաշանց  
գիրն ալ իր ձեռքովը ստորագրեց՝ որ մինչև ան ա-  
տենը եղած բան չէր: Իր խաղաղասիրութեանը  
աւելի ալ յորդոր եղաւ ասդիս անդին պատե-  
րազմներուն անյաջող երթալը. Աւտոն Վերմա-  
նացոց Յովսէփ կայսեր զօրավարը առաւ Աբա-  
տիչբա ու Պէլկրատ ամուր քաղքընէրը. Սուլտ-  
րով Աուսաց զօրավարը առաւ Սողտախ ամ-

բողջ. Վեթեմքին դարձեալ Սուսաց ուրիշ զօրաւ վարը առաւ Վիլի բերդը ու անառիկ քաղաքը Լսմայիլ. ուրիշ առաւ զօրաւարներ ալ ուրիշ տեղեր (Սամանցուց ջարդ տուին, ու Վանուբ գեափին քովերը շատ տեղուանք առին : Բայ անյաջողութիւնները տեսնելով Սելիմ, իր թագաւորութեանը երրորդ տարին հաշտութիւն ըրաւ Սուսաց հետ հաստատուն բարեկամութեամբ, իրենց տալով ( ) զու բերդը իր բոլոր երկիրովը, ու տասնէն աւելի ուրիշ ծանր սրացմաններով : Վանասպէս Վերմանացուց հետ ալ հաշտութիւն ըրաւ, հըր շտիա քաղաքը իր սգափ սահմանովը իրենց տալով : ( ) տար ազգաց հետ եղած խաղաղութիւնը՝ (Սամանցուց իրենց մէջ ապստամբութիւններն ալ (Ազխարտա, Բսիա ու Բնաւուտներուն երկիրը) հանդարտեցուց :

Բնիկեց ետքը սկսաւ Սելիմ կարգաւորել իր տերութիւնը. ու ամէն բանէն առաջ իր զօրքը ուզէց կարգաւորել՝ Սուսդաֆա փառչային խորհըրդովը : Երր գունդ մը ժողովեց, նիղամիճէտիտ դրաւ անունը, իրենց բնակարան շինեց, ու գաղղիացի վարպետներ բռնեց՝ իրենց զէնք բանեցընել ու թնդանութ պարպել սորվեցընելու : ( ) օրացը կըթութեան ընդարձակ տեղեր ալ բացաւ Վսփիտանէ, Վեաղատխանէ, Վսփիտար և ուրիշ տեղուանք : Բնարանոցներ ալ շինեց՝ Պօլիա, ու Վանուբ գեափին մօտերը. մեծ վաւօղանոց մըն ալ որ մեր ազգէն ազնուական հաճխատ Բսպէլ

Մշան շատ ծաղիկեցուց գործիքներով . անանկ որ ( )սմանցւոց վառօդը Մնդղիացւոց ու Նողանտացւոց վառօդէն վար չիմնար : Մտոր օրը մեր աղգային մատենագիրը Սուրատձա ( )սմանցւոց պետութեան ու կրօնքին վրայ դաղղիարէն գիրք մը հանեց, որ թագաւորին ալ հաճոյ եղաւ, և բոլոր Աւրոպայի առջի ստոյգ տեղեկութիւն տուողը ինքն եղաւ աս բաներուս վրայ : (Ուղթի գործարան ալ բացաւ թագաւորը Նիւքեար իսկէլէսի . ) Աւկիւտարի տպարանն ալ՝ որ շատոնց գոցուած էր՝ նորէն բացաւ տաճիկերէն գրքեր տպելու :

Մս միջոցիս Աւրոպացւոց տէրութիւնները մէկմէկու անցեր էին Վաղղիացւոց խռովութեանը սրատձառաւ . Վաղղիացիք կ'ուզէին իրենց կողմը ձգել զուռը, Վերմանացիք ու Պրուշներն ալ իրենց կողմը . բայց Սէլիմ խոհեմութեամբ մէկուն կողմն ալ չիբռնեց, իր բանը նայեցաւ : Մնատենը՝ Ասիոլէոն Վաղղիացւոց անուանի զօրավարը իր տիրելու սաստիկ բաղձանացը սրատձառ բռնելով Մրաբացւոց ապստամբիլը Ազիպտոս, շատ նաւերով եկաւ ու Սալթա քաղաքը առաւ, ու երկու օրէն հասաւ Մըքբսանգրիա, տիրեց քաղքին, ըսելով թէ ես ( )սմանցւոց հետ բան չունիմ, Մրաբացիներուն հետ է բանս՝ որ մեր նաւերը կը նեղեն : Բայց ( )սմանցիք չխաբուելով ան խօսքէն, բռնեցին Վաղղիացւոց դեսպանը, Ատիգուլէ փակեցին . նոնաապէս որչափ դաղղիացի որ կը գտնէին՝ կը կողոպտէին, բանտ

կը դնէին . իրենց բոլոր նաւերովն ալ Սուսաց ու Մեգղիացոց հետ միացան Վաղղիացոց դէմ : Աւթիպէտ Մեգղիացիք անոնց նաւերը զարկին կտորտեցին , ու Մարբացիք ալ ամէն ուժովն աւսոնց դէմ կեցան , այսու ամենայնիւ Վաղղիացիք յաղթեցին ու առին Ագիպտոս :

Բայց երկան չիքշեց իրենց հոն տիրելը . Մարբացի փաշան Նեղղար Մհմէտ՝ սուլդան Սելիմին հետ հաշտուելով ու բոլոր ան կողմի փաշաները իրեն հետ միաբանելով , դէմ ելաւ Վաղղիացոց . ժանտախտն ալ մէկալ դիէն ջարդել սկսաւ զանոնք : Ապիոլէոն տեսնելով որ Սուսները ու Մեգղիացիք ալ վրայ կը հասնէին , դարձաւ Վաղղիա , Վլէպէր զօրապետին յանձնելով ամէն բան : Վլէպէր թուղթ գրեց Վաղղիա , բաւակին խեղճութիւնները խնայրնելու . թուղթը Մեգղիացոց ձեռքն ընկաւ , որ աւելի սիրտ առած՝ դիմեցին ( )սմանցոց ու Սուսաց հետ ջնջելու . Վաղղիացիները Ագիպտոսէն : Վլէպէր թղթին պատասխանը չառնելով , մտածեց հաշտութիւն ընել ու ելլել երթալ . բայց Մեգղիացիք ուզեցին գերի ընել Վաղղիացիները : Մնատենը Վլէպէր կատղած՝ պատերազմի ելաւ , ու ջարդեց ( )սմանցիները , Ագիպտացիներն ալ՝ որ անոնց կողմը բռներ էին՝ պատժեց . ասանկով փառաւորապէս հաշտութիւն մը բրաւ , ու տիրեց Ագիպտոսի : Բայց ետքը արեւելեան զգեստով ծպտեալ մարդ մը սպաննեց զինքը դաւաճանութեամբ . ու թէ

պէտ մարդը բռնեցին ու սպաննեցին Վաղղիացիք, բայց Վլէպէրի մեռնելէն ետքը ( )ամանցիք ու Մնգղիացիք իրեք կողմէն յարձրկեցան Ազխատոս, ու վերջապէս հարկ եղաւ Վաղղիացւոց ելլել երթալ Ազխատոսէն իրենց կահ կարասիովը ու տասնըմէկ թնդանօթով միայն :

Իսկ ետքը երբոր Վափօլէոն տիրեց Վաղղիա, սուլդան Սէլիմ հաշտութիւն ըրաւ իրեն հետ, ու բոլոր Ազխատոսը նորէն ետ առաւ : Մն միջոցին սկսաւ Աւրոպա տակնուլրայ ըլլալ : սուլդան Սէլիմ իր երկիրը ամբըցնել սկսաւ, Տնեսդեր ու Վանուք գետերուն կողմերը զօրք դնել, ու մանաւանդ իր զօրացը եւրոպական կրթութիւն տալու խորհուրդը առաջ տանիլ : Մքղէն նիզամի ճէտիտ զօրքը կրթութեամբ էին, բայց ենիչէրիները յանձ չէին առած ամենեւին այն կրթութիւնը, շատերն ալ ծաղր կ'ընէին զօրքին փորձ ըրած ատենը : Բայց Ազխատոսի պատերազմին ատենը աս կրթութեամբ զօրքին ըրած քաջութիւնները երբոր ժողովուրդը սկսաւ գովել, Սէլիմ սիրտ առաւ ու աւելցուց անոնց թիւը : Շէխիսլամին վճռովն ալ հրաման հանեց որ բոլոր փոքր Մսիոյ փաշաներն ալ նիզամի ճէտիտ հաստատեն : անոնք ալ հնազանդեցան, ու օգուտները կը տեսնէին, ենիչէրիներուն չիկրցածը՝ կրթութեամբ զօրքը կրնալով ընել :

(Ը)Վաղաւորը տեսնելով աս բաներս, մանաւանդ Ռամէլի աւազակներուն պակսիլը անոնց քաջու-



Թեամբը, հրովարտակ մը հանեց որ ամէն քաղաք ու գեղ ընտրուին ենիչէրիներէն կտրի՝ մարգիկ մինչև քսանըհինգ տարեկան, ու նիզամի ճէտիտ զօրքին հետ կըթուին: Ըս հրամանը կատողեցուց ենիչէրիները, անանկ որ Թագաւորին հրամանը հրատարակող մունետիկները ծեծեցին, դատաւորներէն մէկ քանին սպաննեցին, ու հարկ եղաւ որ մեծերը լուեն առ ժամն: Բայց երբոր Վաղղիացուց պատերազմը բացուեցաւ Սուսներուն ու Պրուշներուն դէմ, Վատր փաշա Ալիկիկայի իշխանը Թագաւորին հրամանաւը շատցուց նիզամի ճէտիտ զօրքը, ու անոնցմով ճամբայ ելաւ որ Պօլիս դայ. ենիչէրիները երբոր խնացան, ասոնք մեր վրայ կուգան ըսելով՝ ոտք ելան միացան արեւմտեան աւազակներուն հետ, քաշուեցան Լատիրնէ, ու տասը հազար հօգի զրկեցին՝ Լակիպտպա լեռան կիրճը բռնելու: Վատր փաշան չիկրնալով անցնիլ անկէց, դարձաւ Պուրկազ՝ Սուսձուգ երթալու մտքով, ուր էր Սուտաֆիս փաշա՝ բանակին զօրավարը: Բայց ենիչէրիները ան ճամբան ալ արգիլեցին, ու Վատր փաշան վառնտեցին Ալիկիկի: Երբոր ձայնը Պօլիս հասաւ, հոն մնացած ենիչէրիները յոյս առին. ու քիչ մնաց որ բոլոր ժողովուրդը ապստամբէր. բայց շէխիսլամը մէջ մտաւ, խաղաղութիւն ըրաւ երկու զօրաց ու Թագաւորին մէջը: Ըն միջոցին Սուսները Սուլաի երկիրն ու Սուլտաիս յարձրկե-

ցան, սուին Լյաշ ու Պուքրէշ. իրենց դէմ ելաւ Սուսդաֆա փաշան, բայց Սուսները զինքը վաւրնտեցին Սուսձուգ : ( ) ամանցիք առ բանէս նորէն զրգուուեցան Սուսաց դէմ, ու սրատերազմի ձայն տուին, ու Սուսաց դեսպանը Պօլխէն ելլելու առենը՝ մէյմըն ալ Մնգղիացիք նաւերով հասան Չանագ գալէսի : Մնգղիացւոց դեսպանը կը պահանջէր որ ( ) ամանցիք Վաղղիացւոց բարեկամութենէն զատուին, Մնգղիացւոց ձեռքը թողուն Չանագ գալէսին ու իրենց բոլոր նաւերը, Ուլահի երկիրն ու Սողտախան ալ Սուսաց. բայց զխոնարով որ բացասական պատասխան պիտի առնէր՝ ձայն հանեց թէ բոլոր իր ազգայիններուն ուրախութիւն պիտի ընէ նաւու մը մէջ. երբոր եկան ժողվուեցան, առագաստները բացած՝ դուրս ելաւ քաղքէն, հասաւ (Ս)ենետոսի առջև իրենց նաւերուն, ու անկէց սկսաւ թղթով խօսիլ ( ) ամանցւոց հետ, ու այնչափ երկընցուց մինչև որ նաւատորմիդ Չանագ գալէսիին մուտքը հասաւ :

( ) ամանցւոց ծովակալը վստահ ըլլալով որ խօսակցութիւննին չըննցած Մնգղիացիք առաջ չէին գար, անհոյ եղաւ, որովհետև տօնի օր ալ էր իրենց, ու թնդանօթաձիգ զօրքը սններնին ցրուած էին : Բայց երբոր Մնգղիացիք յանկարծ մէկիկ մէկիկ ներս յարձրկիլ սկսան, ընելիքը չէր զիտէր կատաղութենէն : Սաղեցին ենիւլերիները և ուրիշ զօրքերը, երկու դիւ բերդերէն թնդա

նօթներով կրակ թափելով վարնտեցին թշնամեացնաւերը. անոնք ալ մէկալ դիէն թնդանօթները սրարպելով թանձր ծուխին մէջ ծածկուած փախան բերդերուն մէջ եղողներէն: Վայց դժարը ան էր որ ( )ամանցւոց նաւերը կիրճն ալ բռներ էին, անցներու ճար չկար. այսու ամենայնիւ Վնգդիացիք կէս մը քաջութեամբ սրատերազմելով, կէս մըն ալ ( )ամանցւոց ծովակալը հոն չգտնուելուն պատճառաւ, դուրս ելան գնացին:

Թագաւորը առջի բերանը լսելով Վնգդիացւոց ներս մտնելը՝ շատ խռովեցաւ, ու կը մտածէր անոնց ուզածը ընել, Վաղդիացւոց դեսպանին ճամբայ տալ. բայց երբոր տեսաւ որ ժողովուրդը խռովելու տեղ՝ կատղած զէնք առին ու բերդերը կ'աւրացընէին, ինքն ալ սիրտ առած՝ անոնց ամէն պէտք եղածը կը հոգար: Վաղդիացւոց դեսպանն ալ ան միջոցին բոլոր իր ազգայինները բերդերուն պահպանութեան օգնական զրկեց, ոսկի կը բաժնէր օսմանցի աշխատողներուն, ու սիրտ կուտար ամենուն:

Հետեւեալ իրիկունը Վնգդիացւոց բոլոր նաւատորմը երեցաւ հեռուանց, իրեք միոն հեռու երկաթ ձգեց, ու ծովակալը դեսպանին խորհրդով թուղթ զրկեց դրանը՝ անուշութեամբ խնդրելով որ իրենց ուզածները կատարուին: Թղթաբերները սոսկացին ( )ամանցւոց ատենակալներէն՝ որ ժամիքնին կախած ընդունեցան զիրենք. ու չճամարձակելով արբունիքը երթալ, ուր որ կօ-

չուած էին, առին քաղցին իրենց նաւատորմիզը :  
 Իսկ քաղաքացիները տաճիկ, եւրոպացի, յոյն, հայ  
 և հրեայ ամէնքն ալ մէկտեղ կ'աշխատէին մարտ-  
 կոցներ պատրաստելու . կարգ կարգ նաւերը շարե-  
 ցին ամէն դին, ու սոսկ մարտկոցներուն վրայ հա-  
 զար երկու հարիւր թնդանօթ դրին՝ բաց ՚ի նաւե-  
 րուն թնդանօթներէն . անթիւ նաւակներու մէջ  
 ալ դիւրավառ նիւթեր պատրաստեր էին՝ թշնա  
 մեաց նաւերուն կրակ տալու :

Նորէն Ննգղիացիք թուղթ գրեցին, սաստիկ  
 կերպով պահանջելով որ դուռը ուղածնին ընէ .  
 դուռն ալ համարձակ պատասխան տալէն ետև,  
 Իսմայիլ փաշան զօրքով շանագ դալէսի դրկեց :  
 Եւ որ տեսան Ննգղիացիք, նաւերուն քիթը  
 դարձուցին՝ աներևոյթ եղան, և Պօլսոյ բնա-  
 կիչները փառք տուին Նստուծոյ որ ան սոսկալի  
 վտանգէն պահեց զիրենք : Բայց Ննգղիացիք  
 նեղուցէն մտնելու ատեննին երեսուն հոգի կոր-  
 սընցուցին, հարիւր հոգի ալ վիրաւորեցան . իսկ  
 ելլելու ատեննին իրենցմէ հարիւր իննսուներեօ-  
 թը հոգի մեռնող, չորս հարիւր տասուերկու ալ  
 վիրաւոր եղան :

Նն ատենները Նրաբացիք նորէն գլուխ վերու-  
 ցեր ու կ'ուզէին տիրել Նգիպտոսի . թագա-  
 ւորը անոնց դէմ Ննաւուտ զօրքերը դրկեց .  
 առջի բերանը քաջութեամբ պատերազմեցան,  
 բայց ետքը թշնամիներուն կողմը անցան . ետքն  
 ալ նորէն բաժնուեցան, ինքնազուխ եղան : Եւ

սոնց մէջ երևելի էր Սէհէմմէտ Մի հիմնական  
 Լճիկատոսի փաշան , որ դռնէն շատ զօրք ու ստակ  
 առած՝ Մրաբացուց դէմը ելաւ , իր կողմը դար-  
 ձուց իր ազգայինները , զարկաւ փախուց Թնա-  
 միները Լճիկատոսի վերի կողմերը , ու ինքը եղաւ  
 Լճիկատոսի տէր , տարուէ տարի 2500 քսակ վճա-  
 րելով դրանը :

Մնդղիացիք բաղձալով տիրել Լճիկատոսի ,  
 Պօլիսէն հոն վազեցին , առին Մքեքսանդրիա  
 քաղաքը . անկէց զօրավարներուն մէկը 1200  
 զօրքով Ռաչիս քաղաքը մտաւ . բայց քաղաքա-  
 պետը քաղբին նեղ ճամբաներուն մէջ զիրենք  
 ձգելով , Թրէ անցուց զրեւիէ ամէնքն ալ : Սէ-  
 հէմմէտ Մի ալ հասաւ իր զօրքովը , պաշարեց  
 Մնդղիացիք Մքեքսանդրիոյ մէջ : Սէլիմ տեսնե-  
 լով աս բաները , բոլորովին միացաւ Վաղղիացուց  
 հետ , ու Մնդղիացուց դէմ պատերազմ բանալ  
 ուզեց . բայց անոնք մէկէն ետ քաշուեցան իրենց  
 նաւերովը , չուզելով պատերազմիլ : Ետքը ( )ս-  
 մանցիք զՌուսներն ալ Սիջերկրական ծովէն  
 վազնտելով՝ ծովի կողմէն հանգստացան :

Ար մնար վազնտել Ռուսները Ուլահի եր-  
 կրէն ու Սոլտաւիայէն . ատենն ալ յարմար էր՝  
 Վափուէնին առաջ երթալովը արեւմուտք : Պու-  
 նայի փաշային հրամանս եղաւ որ Սըրֆերուն վրայ  
 երթայ՝ Ռուսաց հետ միաբանելուն համար .  
 ետքը ուրիշ զօրավարներն ալ , Սուսդաֆա փա-  
 շան ալ , իրենց զօրքովը Շումնա և Ուլահի եր-



կիրը դիմեցին . վէզիրն ալ ուրիշ մեծերուն հետ  
դուրս ելաւ , մնաց Պօլիս մինակ Սուսա փա-  
շան մէկ քանի մեծերով , նիզամի ճէտիտ զօրքն  
ալ Պօղազ իշիի բերդերը ցրուեցան :

Կն միջոցին մեռաւ Վելիզատէ շէխիսլամը՝  
որ շատ խոհեմ մարդ մըն էր , ու սուլդան Սե-  
լիմ անոր տեղը դրաւ ուրիշ մը՝ որ հաւա-  
տարիմ կը կարծէր , բայց անիկայ վէզիրին փո-  
խանորդը Սուսա փաշան իրեն հետ միաբանե-  
լով , որ փառասէր մարդ մըն էր ու թագաւորին  
սիրելիներուն հակառակ , սկսաւ իր թագաւորին  
ու բարերարին դէմ չարիք մտածել :

Կնգղիացւոց Պօլսէն հեռանալէն ետքը սկսեր  
էր սուլդան Սելիմ ոչ միայն Սարմարայի՝ այլև Սե-  
ծովուն նեղուցը ամրացընել , Պօղազ իշիին երկու  
դիէն մարտիոցներ շինելով , ու նիզամի ճէտիտ զօրք  
դնելով ան տեղուանքը : Կն եղաւ խեղճին թա-  
գաւորութիւնն ալ կեանքն ալ կորսընցընել տու-  
ողը : Կնչու որ , որովհետև ինչուան ան ատենը հոն  
տեղերուն պահապանները էին Կամազ ըսուած  
զօրքերը , քի Սրացիք , Պոսնացիք , Կնաւուտներ  
ու Կազեր , ասոնց շատ դժարը եկաւ . անանկ որ քա-  
նի մը անդամ՝ ձեռք ձեռքի եկան կռուեցան ալ , ու  
հազիւ պօսթանճիպաշին տպառնայլօք ու անու-  
շութեամբ հանդարտեցուց զիրենք . թագաւորն  
ալ պօսթանճիպաշիին սիրտ տալէն ՚ի զատ , ու-  
ղեց որ ան զօրքերուն հագուստին ձևն ալ փոխուի ,  
ու եւրոպացի զօրքերուն պէս կրթուին . ան ալ



զօրքերուն զլիսաօրը կանչեց, հրամայեց իրեն թագաւորին կամօքը :

Արքոր զօրապետը աս հրամանը կատարելու համար՝ ուղեց մէկ քանի անհնազանդներուն կենացը դաշխլ, ամէնքը մէյտեղ վրան յարձը կեցան . զօրապետը ծովը ցատքեց որ լողալով փախչի, բայց ծովուն մէջը զինքը սարաննեցին : Ատքը մէյտեղ եկան, խորհուրդ ըրին, ու թուրի վրայէն ցատքելով՝ երդում ըրին զինի բերաննին չդնելու ինչուան որ խորհուրդնին չկատարեն, բայց առանց վնաս հասցընելու հպատակաց . մտածեցին ալ որ շէխիսլամը խորհուրդնին հաստատէ : Արքոր աս բանս լսեցին մեծերը, պօսթանձի պաշին ծեր ենիչէրիներով վրաննին զրկեցին . բայց ինքը վախցաւ, կէս ճամբէն ետ դարձաւ . իսկ հետը եղողները գնացին, առջի բերանը քիչ մը զիրենք յորդորեւէն ետքը՝ իրենք ալ անոնց կողմը անցան :

Սուլդան Սէլիմ դեռ չէր գիտէր, ու արքունեացը բակին մէջ զօրքին փորձ ընել կուտար, ու թէպէտ ներսի պաշտօնեաներէն մէկը իմացուց, բայց ատենադպիրը բանը պզտիկցուց՝ ըսելով որ պօսթանձիպաշին գնաց ցրուեց ապստամբները . ան միջոցին պօսթանձիպաշին ալ հաստանոցն հաստատեց : Անիչէրիները հետևեալ օրը դրօշը վեր առած՝ հազար ութը հարիւր հոգի շէտակ ելան ցամայեւն <sup>(1)</sup> Սլիս երթալու . երբոր Վապաթաշ հասան, մարդ զրկեցին ու մեծիկ զօրքե-

բուն ձմերոցն ու ըսին . (Ո)ւէ որ մեզի հետ է սրտեր  
 նիդ՝ իմացուցէք . անոնք ալ բարի եկաք ըսին , միա  
 ցան անոնց հետ : (Մ)նկէ (Ո)ւփխանէ եկան , գիշերը  
 հոն կեցան . առտուանց (Վ)ալաթիայէն անցան  
 գնացին (Վ)ալաթիաթ եէրի , ու անկէ նաւակներով  
 դիմացը անցան : (Ե)րթալով ալ բազմութիւնը կը  
 շատնար , մէկ դիէն ալ կը կանչէին . (Ո)ր տաճիկ  
 է՝ դրօշակին տակը դայ . ու ժողով ըդեան՝ (Ս)ի վախ  
 նաք , խանութնիդ մի գոցէք կ'ըսէին : (Ն)այց որուն  
 կ'ըսես . ամէնքը ծակէ ծակ փախան , ահուդողի  
 մէջ՝ ախարհքիս ետքի օրը հասածի պէս : (Ս)լր  
 տամբները ելան Տիվան եօլու գնացին , ու (Վ)թմէյ  
 տանը ութսուն հազար հողիի չափ ժողովեցան :

(Ս)ուղան (Ս)էլիմաս ամէն բանը իմանալով , կը  
 հռոպէր կը մտածէր ու ճար մը չէր կրնար գըտ  
 նել . իր ատենադպիրը (Մ)հմէտ , ու (Ս)ապէյնճի  
 (Մ)հմէտն ալ առին . քաղեցին . մէկալ հաւատարիմ  
 պաշտօնեաները ըսին թագաւորին՝ որ եթէ մէյմը  
 չորս դիէն պաշարեն ապստամբները , կեանքդ  
 կ'երթայ . շուտ ըրէ՝ ներս առ վէզիրին փոխանոր  
 դը ու կարդացողները , որպէս զի ապստամբները  
 անոնց գլուխը ուղելու որ ըլլան՝ տաս իրենց ու  
 քեզ խալըսես : (Ո)ւագաւորը պատասխանեց . (Մ)ն  
 պարտ մարդկանց արիւնը մտնելէն լաւ է որ  
 ես թագաւորութենէս հրաժարիմ : (Ս)պստամբ  
 ները դուրս կանչեցին շէխիսլամը ու մեծամեծ  
 ները . անոնք տեսան որ բանը գէշ է , ցրուե  
 ցան փախան . իսկ կարդացողները ու շէխիս

բամբ հարկաւորեցան դուրս ելլել . հարցուց շէխիսլամը թէ ինչ է ուզածնիդ : Կնոնց մէջէն մէկը սե հաց մը հանեց ծոցէն ու ըսաւ . Աղորմելի աղքատը աս հացը կ'ուտէ . ետքը ուրիշ ձերմակ հաց մըն ալ ծոցէն հանելով՝ ըսաւ . Իսկ մեծերը աս հացը . դուք ինչ պապանձեր կեցեր էք : Ե շէխիսլամը սատասխան տուաւ թէ իրաւունք ունիք : Ատքը ուրիշներն ալ ըսին . Թագաւոր մը որ կը խաբէ Կոստանտին հաւատացեալները , կրնայ աթոռին վրայ կենալ : Չկրնար , ըսաւ շէխիսլամը : Կորէն հարցուցին՝ թէ տասնըութ տարի զաւակ չունեցող Թագաւորը կրնայ աթոռին վրայ կենալ : Չէ , ըսաւ շէխիսլամը : Կնոնք ալ ըսին . Սրբեմն զրէ՛ որուն անունն որ կը զուրցենք . ու սկսան մէկիկ մէկիկ վէզիլըն փոխանորդէն սկսեալ՝ ամէն մեծերուն որոնց վրայ ոխ ունէին՝ անուննին զուրցել որ սպաննուին : Կէկն ալ անդիէն ըսաւ . Չորս հոգի ալ հպատակներէն՝ որ մեծերուն ձեռքովը ուզածնին կ'ընեն , անոնց անունն ալ գրուի . ասոնցմէ մէկն էր ազնուատոհմիկ Զոյհաննէս Չէլէպի Տիւզեան , որ ամենեւին անպարտ էր , ինչպէս մէկալ իրեք ընկերներն ալ : Իայց ապտամբներուն մէկը ըսաւ . մի անոնց արիւնը մտնէք . իրենք հաւատարմութեան համար իրենց հնազանդութեան պարտքը ըրին :

Ըս բաներս ըլլալու առե՛նը՝ Կէլիմ կանչեց պօսթանձիպաչին ու հրամայեց որ իր ձեռքի տակը եղած զօրքը բերէ պալատը : Կսիկայ գնաց

բերելու, բայց զօրքը չհնազանդեցան. դարձաւ ըսաւ թագաւորին՝ թէ չեն ուզեր գալ, կ'ազաւորը բարկութենէն հրամայեց որ պօսթման ճիւղաշինն գլուխը կտրեն ու տանին Եթովպիայի տապատամբներուն տան, Վանապէս գրեց վէզիրին փոխանորդին՝ որ տապատամբներուն ուզած մեծերուն գլուխը կտրէ ու դրկէ իրենց՝ սրտերնին առնելու համար: Վնիկայ որ ինքն էր տապատամբութեան գլխաւորներուն մէկը, իր թշնամիներէն ոխը առնելու համար՝ գլխատեց անոնք ու գլուխնին դրկեց Եթովպիային:

Հետեւեալ օրը ուրբաթ էր, թագաւորը չուզեց ելլել պարատէն՝ մզկիթ երթալու համար. այլ մարդ դրկեց սուլդան Սուսուսիային՝ որ իր հօրեղբորորդին էր, ու ըսաւ. հրամայէ եկուր նստէ աթոռս, ժողովուրդը քեզ կ'ուզէ. Սուսուս յաջողէ թագաւորութիւնդ: Վալատականներէն մէկն ալ բարձրէն հարցուց ժողովրդեան իրեք անգամ թէ կ'ուզէք որ սուլդան Սուսուսիան ըլլայ թագաւոր: Վնոնք ալ կ'ուզէնք ըսին: Վնատենը շէխիսլամը ու վէզիրին փոխանորդը մտան Տէմիր գափուսիէն ներս որ Սուսուսիան թագաւորեցրնեն: Սուսուսիան երբոր աեսաւ աս բանս՝ լալ սկսաւ ըսելով. Եթ ուզեր ասանկ թագաւորել՝ հօրեղբորորդույս խեղճութիւնը տեսնելով. լաւ էր որ մեռնէի քան թէ ասանկ ապրէի. չեմ ելլեր ասկեց, ինչ որ կ'ուզէն՝ ընեն: Եսկ Սուլիմ խաղաղասէր թագաւորը իրեն

ներէն թողութիւն խնդրելով՝ թէ որ իրենց անխառնութիւն մը ըրեր էր, լալով կը յորդորէր զիրենք որ աղէկ ծառայեն նոր թագաւորին։ Անոնք ալ իր ոտքը ընկած՝ լալէն ողբալէն ետեւ, գնացին վերջապէս հաւանեցուցին Սուղաֆան թագաւորելու՝ ըսելով որ չթագաւորելովդ Սէլիմին կեանքը վտանգի մէջ կը դնես։ Այբբոր Սէլիմ ամթոռէն ինջած կ'երթար, ու Սուղաֆան կուգար ամթոռը նստելու, զխմացէ զխմաց հանդիպած ատեննին մէկմէկու պրլլուած՝ շատ արցունք թափեցին, շատ խեղճ խօսքեր զուրցեցին, ու Սէլիմ Սուղաֆային ճակատը սաղաւ, իրեն խրատ տուաւ որ չհաւտայ իր մեծերուն, համարձակութիւն չտայ իրենց։ Սուղաֆան ալ անոր ոտքը սաղաւ։

Այբբոր Սուղաֆային թագաւորելը հրատարակուեցաւ, ժողովուրդը ուրախութեամբ տեղերնին դառնալու ատենը՝ նորէն ասպատակները խռովութիւն մը հանեցին, ու մեծերէն մէկքանին բռնեցին կտոր կտոր ըրին. ետքը դուռը գնացին հինգշաբթի իրիկուընէ, դրօշակնին բացած, զէնքերնին ուսերնին, երկու զին շարուած կեցան մինչև սուլդան Մհմէտին մզկիթը, ուր որ թագաւորը ուրբաթ օրը աղօթք ընելու պիտոր երթար։ Ահա օրուան մօտ թագաւորը սալատէն ելաւ. ու երբոր սկսան ամէնքը մէկտեղ կեցցէ արքայ կանչելու, այլայլեցաւ, դողալ սկսաւ վախէն։ Ատքը երկու օրէն եկան ասպատակները ։



երդում առին թաղաւորէն ու մեծերէն՝ որ նորելուկ կարգերը վերնան. ու ասանկով դադրեցաւ խոռովութիւնը առանց մնաս մը ըլլալու ժողովրդեան :

Վայց ասպտամբններուն զօրանալովը ամէն բան խառնափնդոր էր քաղքին մէջ. կարդացողները վէզիրին փոխանորդին հետ կը մտածէին կերպը գտնել ասպտամբները նուաձելու. անոնք ալ աս բանս որ խնացան, երկու ամսէն Սիւլէյմանիէի մզկիթին բակը ժողվուած՝ ուզեցին որ շէխիւլամը, վէզիրին փոխանորդը, ու մէկ քանի ուրիշ մեծերը իյնան իշխանութենէ : (Թ)աղաւորը ձգեց զանոնք, բայց ասպտամբները դարձեալ գոհ չեղան, ուզեցին որ նոր փոխանորդն ալ փոխուի, ու տեղը անցնի Վայեար փաշա, որ թշնամի էր նոր կարգերուն :

Սուղաֆա փաշան՝ որ ան ատենը Սուսձուգի իշխանն էր, կ'ախոտար իր բարերար Սէլիմին խեղձութեանը վրայ : Վրկեց Վաիրնէ քաջ ու Սէլիմին հաւատարիմ եղողներէն մէկը Պէհիճէֆէնտի՝ թշնամի ենիչերիններուն, որպէս զի վէզիրին սիրտը որսալէն ետև՝ Պօլիս անցնի ու Սէլիմին բարեկամներուն հետ մտածէ թէ ինչ կերպով խորհուրդնին առաջ կրնային տանիլ, ենիչէրինները վերցնելու ու նորէն Սէլիմը թագաւորեցնելու : Նոր ետևէն ինքն ալ չորս հազար ջօրքով դիմեց դէպ 'ի Պօլիս, մէկալ ջօրքերուն ալ՝ որ տասուերկու հազար էին՝ հրամանեց որ



ետևէն զան հեռուանց : Արբոր Ատիրնէի մօտ  
 հասաւ , իր հետը եղող զօրքը գեղերը ցրուեց ,  
 ու ինքը քանի մը հագւով մտաւ քաղաքը : Հոն  
 խորհուրդ ըրին որ վէզիրը իրենց սրբազան դրօ-  
 շակաւը մտնէ Պօլիս , Սուսդաֆան ալ ետե-  
 վէն հասնի . բայց Ռամիզ էֆէնտին խորհրդովը  
 իրենցմէ առաջ ալ Հաճի Ղլի անուշով ճարտար  
 մարդ մը դրկեցին Ֆէնէն , որ Վասպագճը Սուս-  
 դաֆան տէրութեան ու Սէլիմին առջի թշնա  
 մին սպաննէ ու Պօղաղ իշխին բերդերը առնէ :

Արբոր ենիչերիները լսեցին կանանց ճիչն ու ա-  
 ղաղակը Վասպագճը Սուսդաֆային սպաննուած  
 ատենը , մէկէն զէնք աւին . բոլոր քաղաքը շփոթ  
 խօսքեր ելան , մեծերն ալ ստոյգը չէին գիտեր ,  
 գիտէին միայն որ վէզիրը ու Սուսդաֆա փա-  
 շան Պօլիս կուգային : Արբոր մօտեցան , վէ-  
 զիրը դրկեց Ռէիս էֆէնտին սուլդան Սուսդա-  
 ֆային ու ըսաւ . Սուսդաֆա փաշային հետ  
 կուգանք քեզ ու ժողովուրդը ենիչերիներուն  
 անօրէնութիւններէն խալըսելու , որ ալ չտիր  
 անցուցին . ծածուկ պահէնիս ալ յաջողութեան  
 համար էր , որ անօրէններուն գլխաւորները  
 կարենանք վերցընել . ուրեմն փոխէ շէխիսլա-  
 մը , ու սանձէ անօրէնները : (Վազաւորը երբոր  
 լսեց որ աս էր իրենց ուզածը , մէկէն կատարեց  
 անոնց կամքը , ու հետևեալ օրը ելաւ զնաց  
 հանդիսով սրբազան դրօշակը տեսնելու Սուս-  
 դաֆային բանակը : Սուսդաֆան ալ վստա-

հացուց զինքը իր հաւատարիմ ծառայութեանը վրայ :

Սուղաֆային զօրքերը կրթուած էին զինուորական կարգով, ու ժողովրդեան ամենեւին նեղութիւն մը չէին տար : Սէկ քանի օրէն Սուղաֆա հինգ վեց հազար զօրքով վէզիրին դնաց, ու շատ խօսքերէն ետքը՝ երբոր տեսաւ որ անոր միտքը իրենց խորհուրդը առաջ տանիլ չէր, կնիքը ձեռքէն առաւ չառուշպաշին յանձնեց . ու քաղքին չորս դին պահապաններ դնելէն ետեւ, վեց հազար զինեալ զօրքով մտաւ արքունեաց մէջի հրատարակը, դնաց նստաւ Ղա աղա զափուսուին դիմացը : Կանչեց Թազաւորին զինակիրը, ու կնիքը իրեն հետ ներս դրկեց . քիչ մը ատենէն զինակիրը շէխիսլամին ու ներքինապետին հետ դուրս եկան, ու ըսին . (Թազաւորը քեզի կուտայ աս կնիքը : Պատասխանեց Սուղաֆա . Ես ատ բանիդ համար չեմ եկած . վէզիր ըլլալու մարդ չպակսիր . հապա իմ բարերարիս սուլդան Սէլիմին ոտքը պագնել կ'ուզեմ : Ղա որ լսեցին, շիռ Թեցան ու ներս դարձան : Սուղաֆա քանի մը ժամ սպասելէն ետեւ, երբոր մէկը չէր երեւնար՝ բարկացաւ, կանչեց ներքինապետն ու ըսաւ . Չի մացար ըսածս, սուլդան Սէլիմը դուրս պիտոր ելլէ : Պատասխանեց ներքինապետը . Չուզեր ելլել : Ղն ատենը Սուղաֆա յայտնեց իր միտքն, ու ըսաւ . Կնա ըսէ Թազաւորիդ որ իջնի աթուէն, հիմըկու հիմնց Թազաւորնիս սուլդան :

Սէլիմն է . կարգը երբոր իրեն գայ՝ ան ատենը ինքն ալ կը թագաւորէ : Ատքը դարձաւ հարցուց հետը եղողներուն . Սուզէք որ Սէլիմ թագաւորէ : Բնէնքը մէկ բերան ըտին . Սէլիմը կ'ուզէնք : Սուտաֆան ալ ըսաւ ներքինապետին . Չնա ուրեմն բէր Սէլիմը :

Արբոր ներքինապետներս դարձաւ , ու դռները դոցուեցան , կատղեցաւ Սուտաֆա փաշան ու սրուալով ըսաւ . Ինչո՞ւ կը դոցէք դռները . ու սկսաւ երեսնին զարնել Սէլիմին դէմ ըրած անիրաւութիւննին : Բայց անիկայ դուրսը աս բաւները խօսելու ատեն , ներսը ստակալի խեղճ տեսարան մըն էր : Թագաւորը չէր ուզեր մէյմը թագաւորելէն ետեւ իջնալ աթուէն ու խոյտառակ ըլլալ . իսկ Սէլիմ որ ամենեւին անպարտ ու անդէտ էր եղած բաներուն՝ յանկարծ եկաւ ներքինապետը , ու ժողովուրդը քեզ տեսնել կ'ուզէ ըսելով բռնադատեց որ դուրս գայ . դուրսն ալ տասուերկու հոգի մեծերէն կը սպասէին . խցէն ելածին պէս՝ վրայ հասան , ու ներքինապետը դանակը սիրտը խոթեց . ետքը չարաչար տանջանքով խղղեցին զինքը հոն : Բը ընելէն ետեւ ներքինապետը դուրս ելաւ , ու ըսաւ Սուտաֆա փաշային որ Սէլիմը հիւանդ է , դուրս չուզեր ելլել : Բն ատենը Սուտաֆա փաշան կատղած՝ սպառնացաւ երդմունքով որ եթէ բան մը ընէք Սէլիմին , ամէնքնիդ ալ թրէ կ'անցընեմ բաց 'ի սուլղան Սահմուտէն : Սէյմը

նալ ներսէն կանանց վայնասունը լսածին պէս՝  
 կրակ կտրեցաւ . դռները կոտորեց, կայծակի  
 պէս ներս մտաւ, հասաւ Մարգ օտափն . ու  
 երբոր բերին ձգեցին առջին խեղճ թագաւոր  
 րին դիակը կապերտի մը մէջ սլլած, ան կտրիճ՝  
 մարդը սրտին ցաւէն կորիւնները յախշտակուած  
 առիւծի մը պէս սկսաւ մոնչել, ու հրամմեց զամբ  
 մէնքը թրէ անցնել : Մն միջոցին խեղճ սուլդան  
 Սահմուտը շիոթած՝ իր դաստիարակին հետ  
 ասդիս անդին կը վազէր, վասն զի Սելիմը սպան  
 նողները զինքն ալ կ'ուզէին սպաննել . երբոր տե  
 սաւ զՍուսդաֆա փաշան զէնքերովը՝ սարսափե  
 ցաւ, շանչնալով զինքը . բայց անիկայ մէկէն ին  
 կաւ ոտքը սլլլրուեցաւ, Վու ծառագ եմ, դուն  
 իմ թագաւորս ես՝ ըսելով : Իր հետը եղողներն  
 ալ մէկէն սկսան կանչել Վեցցէ Սահմուտ արքայ :  
 Իսկ սուլդան Սուսդաֆա կարծելով որ իր  
 սրտի եղբայրը Սահմուտն ալ սպաննեցին, հրամ  
 մեց մնացածներուն որ զէնք աւնուն՝ Սուսդաֆա  
 փաշային հետ ծեծկուելու : Բայց երբոր շե  
 խիւրամը մտաւ ու ըսաւ՝ հրամմէ վանդակը, սուլ  
 դան Սահմուտը թագաւորեց, յուսահատե  
 ցաւ . ու առին տարին զինքը Չիսէիրիկի : Հետե  
 եալ օրը բոլոր մեծերն ու կարդացողները ժողվե  
 ցան սրալատը, Սուսդաֆա փաշան ալ իր զօր  
 բովը, ու առօր փառօք տարին թագեցին սուլ  
 դան Սելիմին մարմինը Սպէլի ճամիսին իր հօրը  
 բովը :

Ըսանկ մեռաւ խեղացի, արդար ու խաղաղասէր  
Թագաւորը Սէլիմ քառասունըեօթը տարեկան,  
տասնութը տարի Թագաւորելէն ետքը: ( )ս-  
մանցիք լացին՝ իրենց փառքը անոր հետը կորսն-  
ցընելով. ցաւեցան ուրիշ ազգերն ալ, բայց անոնց-  
մէ աւելի իրեն հպատակ ազգերը, որոնք մինչև  
հիմայ գտնուել կը յիշէն իր անունը:

Իսկ սուլդան Սահմուտ երախտագէտ ըլլա-  
լով Սուղաֆա փաշային, զինքը վեզիր դրաւ,  
և իշխանութիւն տուաւ իրեն որ անզգամներէն  
վրէժը առնէ: Սուղաֆան ուզեց ենիչերի-  
ները վերցընել. լաւ կարգով կանոնով սկսաւ իր  
խորհուրդը գործադրել, բայց ետքը իր ան-  
զգուշութեամբը զոհ եղաւ ենիչերիներուն: Ըն-  
միջոցին յայանուեցաւ սուլդան Սուղաֆային  
ենիչերիներուն հետ ունեցած համախոհութիւ-  
նը. և որովհետև կ'ուզէին անոնք սպաննել սուլ-  
դան Սահմուտը, ու նորէն զինքը Թագաւորեցը-  
նել, Սահմուտին քովի մեծերը իրենց շատ ա-  
տենէ ՚ի վեր տուած խորհուրդը նորէն տալով  
իրեն՝ հրաման առին, գնացին սպաննեցին վան-  
դակին մէջ սուլդան Սուղաֆան: Ատքը եր-  
բոր ենիչերիները հանդարտեցան, առին տարին  
Սուղաֆային մարմինը Թաղեցին հօրը քովը:





## ՍՈՒՎԳՐԱՆ ՄԱՏՄՈՒՑ Բ.

ՄԵԾԱԳՈՐԾ, քաջ և անուանի թագաւորներէն մէկը եղաւ սուլդան Սահմուտ որ կըրնանք ըսել թէ ( )ամանեան տէրութիւնը կերպարանափոխ ըրաւ ու Լաւրոպայի մէկալ տէրութեանց նմանցընել սկսաւ : Վսանուիրէք տարեկան երիտասարդ էր երբոր թագաւորեց 1808ին օգոստոսի 11ին . ու թուր կապած օրը կարգէ դուրս բան մը պատահեցաւ , որ շատերուն գուշակութեան սրտաճառ եղաւ , և ըրած գուշակութիւննին ալ սուտ չէլաւ : Պայրաքտար կամ Ղլէմտար Սուղաֆա փաշան որ ան ատեն վէզիր էր , 300 առնաւուտ զօրքով բոլորն ալ զինուած՝ հանդիսին ներկայ ըլլալու եկաւ . առ բանս Տաճկաց օրինաց դէմ էր . վասն զի հասարակաց հանդէմներու մէջ ոչ ոք զինուած կըրնայ ըլլալ : Արեւնայ թէ Սուղաֆա ասով իր



միտքը ուրիշներուն խնայքնէլ կ'ուզէր . վասն զի կը փափաքէր որ իր զօրաց մէջն ալ եւրոպական կարգ ու կրթութիւն մտցնէ . անոր համար առաջուց որոնց վրայ որ կասկած ունէր թէ աս բանիս պիտի հակառակին՝ սպաննեց . ետքը ամէն տեղի մեծամեծաց թուղթ գրեց որ զան ժողովուն Առատանդնուպօլիս տէրութեան կարօտութեանց վրայ խորհուրդ պիտի ընենք բտելով : Արբոր ժողովուեցան ամէնքը բաց ՚ի քանի մը փաշաներէն , յայտնեց անոնց թէ ինչ հարկաւոր բան է զօրաց մէջ կարգ կանոն հաստատելը . և որովհետեւ ատեանին մէջ մարդ չկար որ չգիտնար ենիչերիններուն աներեսութիւնը ու անկարգութիւնները , ամէնքը միաբան անոր խորհուրդը հաստատեցին , թաղաւորին հրամանը ստորագրելով որոշեցին որ ենիչերիններուն մէջէն ամենէն քաջերը ընտրուին , և քաղաքացւոցմէ ալ ով որ ուզէ եւրոպական կարգով կրթութիւն ետքը՝ Մէյմէն ըսուած զօրքին կարգը անցնի :

Խորհուրդը խիստ ազէկ առաջ գնաց , բայց Սուսդաֆա գործադրութեան մէջ սխալեցաւ . վասն զի փոխանակ ենիչերիններուն զլիսաւորներն ալ իր կողմը որսալու , բռնութեամբ անոնց գլուխը տաքցուց , ժողովրդեան վրայ ալ հարկերը ծանրացրնելով՝ զանոնք ալ ոտք հանեց : Եւ զովուրդն ու ենիչերինները ալ աւելի կատգեցան երբոր տեսան որ ան նոր հաստատուած զօրքը փոխանակ իրենց զինուորանոցները բնակելու ,

սուղղանս Սէլիմի ատեն հաստատուած զօրքին տեղերը բռներ են : Դայ ասոնցմէ՝ դրսի երկկրներուն մէկ քանի փաշաներն որ սա փոփոխութիւններուս դէմ էին , Սուղաֆային դէմ ունեցած ատելութիւնն յայտնելով , ապստամբեցան . ուստի Սուղաֆա ալ քովը եղած նոր զօրքերը վրանին խաւրեց . ու երբոր Գատրը կէճէսիին նախընթաց իրիկունը 200 հոգիով դէնպետը բարեւելու գացեր էր , դուրս ելլելու ատեն տեսաւ որ բոլոր հրապարակը մարդով լեցուեր է , ու իրեններուն հրամանս տուաւ որ բռնութեամբ ժողովուրդը հալածեն : Եւ բանիս վրայ ամենուն գլուխը տաքցաւ . ու ենիւերինները , կարդացողներն ու ռամիկը մէկ եղած յարձրկեցան Սուղաֆայի սալատին վրայ , սահապանները ջարդեցին ու տանն ալ կրակ տուին : Եւ ահադին շինուածքին բոլոր ինչուան երկինք կը բարձրանար , ներսը եղողներուն վայնասունը ու դրսիններուն աղաղակն ալ աշխարհք կը փլցընէր : Սուղաֆա տեմնելով որ ուրիշ ճար չկայ ու բոլոր սալատն եղողները կայրին կը մրկին , հետը երկու հոգի առաւ և գոհարեղինաց սընտուկը և քանի մը քսակ օսկի ալ ուսը զարկած՝ փախաւ սահուրտեցաւ տանը սարտիղին մէջ եղած պզտի աշտարակին մէջ :

Երկրորդ օրը կը կարծէին ենիւերինները թէ Սուղաֆան ալ սալատին մէջ անշուշտ այրած սկիտի ըլլայ . բայց երբոր տեսան ան աշտարակը

որ դեռ ամբողջ անվնաս մնացեր էր, սկսան սբա-  
տուհաններէն հրացաններ ներս թափել: Մուս-  
դաֆա հետը եղած մարդիկներովը երկայն ա-  
տեն քաջութեամբ դէմ դնելէն երբոր ետքը տե-  
տաւ որ ենիչերիք մեծ թնդանօթ մը կը բերեն,  
ինքն իր ձեռքովը ականը բռնակցուց, ու անան-  
կով ահագին ձայնով մոնչրով աշտարակը, պաշա-  
րողներն ու սաշարուողները ամէնն ալ օդը ե-  
լան, Մուսդաֆա ալ փրատակին տակը թաղուե-  
ցաւ:

Եւ խոռովութեան ժամանակը շատ քաջու-  
թիւն ցյուցին Վատը ու Ռամիզ փաշաները. մա-  
նուանդ Ռամիզ փաշան, որ երբոր եղածները լսեց  
մէկէն նոր զօրքն ու թնդանօթաձիւղները միա-  
ցուց, և անոնցմէ մէկ մասը բոլոր քաղաքին դրո-  
ները զրկեց որ որչափ փախստական ենիչերի զըտ-  
նեն սպաննեն, մէկ մասն ալ սպալատին սրարխալ-  
ներուն վրայ դրաւ որ առտըւնէ ինչուան իրի-  
կուն կրակ կը թափէին ենիչերիներուն վրայ.  
ձայն ալ հանեց թէ Մուսդաֆան կնկան զգես-  
տով փախեր ազատեր է ու շատ զօրքով նորէն  
Պօլիս կուգայ. ասկէց զատ երկու ալ խոշոր նա-  
ւեր կայնեցուց ենիչերիներուն զօրավարին սպ-  
լատին գիտնացը, որ թնդանօթներով անդադար  
կը ծեծէին ան սոսկալի շէնքը: Վատը փաշային  
զօրքն ալ բոլոր քաղաքը տարածուած՝ սոսկալի  
ջարդ կ'ընէին, անանկ որ փողոյները մեռելնե-  
րով լեցուեցաւ: Ռայց ետքը երբոր սկսան անոնք

յափշտակու թեանն ձեռք զարնել ու ցրուիլ ու  
 ենիչերինները նորէն զօրացան ու զանոնք ինչուան  
 թագաւորական սպառաք Քչեցին , Մայ Սո-  
 ֆիային ձմերոցին ալ կրակ տալով այրեցին . ժո-  
 ղովուրդն ալ զբզուելով սկսան կանչել թէ մենք  
 նորէն Սուսդաֆան կ'ուզենք մեզի թագաւոր :  
 Սեծամեծները խրատ տուին սուլդան Սահ-  
 մուտին՝ որ եղբայրը Սուսդաֆան սպաննել տայ .  
 առջի բերան շատ դէմ կեցաւ թագաւորը , բայց  
 երբոր թղթերը գտաւ խնայաւ որ աս խոռվու-  
 թեանց մեծ պատճառը Սուսդաֆան է՝ Տրաման  
 տուաւ որ սպաննեն զանիկայ :

Նոյն միջոցին երբոր ժողովուրդը Սուսդաֆա  
 Պայրաքտարին այրած սպառախն մէջ օսկի ար-  
 ծաթ փնտրուելու հետ էր , աշտարակին վարի  
 դին երկաթ դուռ մը գտան , բայցն տեսան  
 որ խուցի մը մէջ իրեք մեռել կային , անոնց  
 մէ մէկն էր Սուսդաֆայինը , քովն ալ կեցած  
 էին իրեն գահարեղէններուն անտուկը ու ու-  
 կիի քսակները : Ննիչերիններն որ ինչուան ան  
 ատենը կարծէին թէ իրաւցրնէ Մէմտարը փա-  
 խեր է , աս լրածնուն պէս աւելի սիրտ առին , ու  
 օտքին չուան մը կապելով ինչուան Սթմէյտա-  
 նին քչեցին տարին , և հինգ ժամ օտքէն կախե-  
 լէն ետե՛ Նաթի դուլէէն դուքս փոսի մը մէջ նե-  
 տեցին : Մամիզ փաշան աս բանս լրածին պէս  
 Սուստատան փախաւ . Վատը փաշան ալ Վիո-  
 նիոն փախչելու ատեն ձեռք ընկաւ ու չարաչար

սարաննուէցաւ . սասանկով ան ահագին խռովու-  
թիւնը դադրեցաւ :

Արհրորդ օրը ուրբաթ ըլլալուն՝ թագաւորը  
պէտք էր որ մղկիթ երթար . ուստի կանչեց Էնիւ  
չերինեքուն զօրավարը , ու զօրքին ըրած յանդըզ-  
նութիւնն ու անօրէնութիւնը երեսին զարնե-  
լով , Աս աղէկ զիտեմ՝ ըսաւ , ձեր միտքը . Սէլիմն  
ու Սուսդաֆան սարաննել տուիք , Հիմն կ'ուզէք  
զիս ալ սարաննել որ ուզածնիդ կարենաք ընել-  
բայց աւելի աղէկ է որ ես իմ ձեռքովս մեռնիմ  
ու ժողովրդեանս դժբաղդութիւնը չտեսնեմ , ը-  
սելով ձեռքը առաւ օջարակին գաւաթը , ձեւ-  
ցընելով թէ թոյն է : Սէկէն վազեց զօրավարը  
ու գաւաթը ձեռքէն յստիշտակելով դետին զար-  
կաւ , ու ոտքը սրագնելով թողութիւն ուզեց :  
Թագաւորն ալ դարձաւ ըսաւ . Աս Հիմն կ'ու-  
զեմ մղկիթ երթալ , բայց թէ որ ձանձան զի-  
նեալ մը տեսնեմ՝ կը մեռնիմ : Օջրավարը  
մէկէն դուրս ելաւ , ու սկսաւ մունեախիկներուն  
կանչել տալ թէ Քամիզ ու Վաար փաշաները  
բռնեցինք , ու Աթմէյտանին ցիցը պիտի հանենք .  
ով որ Էնիւերի է թող հոն ժողվուի : Մասնկով  
ամէնքը հոն սկսան վաղել . և թագաւորը ելաւ  
մղկիթ դնաց ու առանց մէկը տեսնելու նօրէն իր  
արբունիքը դարձաւ : Մնկեց Էաւ Էնիւերիներն  
առին թաղեցին Սուսդաֆայի մարմինը իրեն  
հօրը քովը , ու թագաւորէն ալ թողութիւն ու-  
զեցին ըրածներնուն համար , ու հաստարմու-



Թեան երդմունք ալ ըրին : Վեհապետն ու կարգացողներն ալ ուրախակցութիւն ընելու զացին Թաղաւորին՝ այնպիսի խռովութենէ մը ազատելուն համար :

Ըստ խռովութենէն ետքը Տաճկները ուղեցին հաշտութիւն ընել Առևսայ հետ , բայց սոյնմանները սաստիկ ըլլալուն՝ ( )ամանցիք յանձ չառին , ու նորէն պատերազմի սրատրաստուեցան : Առևսները մէկ կողմանէ առաջ կուգային , ու 1809ին Սիլիստրէն առնելով Վէհչիվան փաշան ալ գերի տարին , ու Շումնայի մօտ վէզիրին մեծ բանակն ալ պաշարեցին : Ըմէնքը յուսահատեր էին և ընելիքնին չէին գիտեր , մանաւանդ որ նոյն տարին ուտելիքի կարօտութիւն կար , ու Պէյօղլու ալ մեծ կրակ ըլլալով՝ երկու հազար տունէն աւելի այրեր էին : Սիայն սուլթան Սահմուտ ամենևին չհաստատով նորէն զօրք ժողովեց , ու խոստացաւ որ ինքն ըլլայ անոնց զօրավարը . դայց ետքը դէնպետին ու մեծամեծաց խորհրդովը ետ կեցաւ : Ըստ զօրքերը շատ անդամ զարնուեցան ու ջարդուեցան . ուստի վէզիրն ալ , որ էր Մահտ փաշան , ուղեց հաշտութիւն ընել : Առևսներն ալ տեննելով որ Սախովէն վրանին կուգայ , իրենց պահանջմունքներէն ետ կեցան , ու 1812ին Պաքրէշի մէջ հաշտութիւն եղաւ , թէպէտ և սա բանտ սուլթան Սահմուտի կամայք հակառակ էր : Սոյն օրերը Սախովէն ալ Ընարէոսի զօրավարը Պօլիս դեսպան դրկեց ,



որուն շատ մեծ պատիւ ցցուց Թագաւորն ու Վաղղիացւոց հետ ունեցած բարեկամութիւնը նորոգեց: Այն տարին Պօլիս, Օմիւռնիա ու Սելանիկ սաստիկ ժանտամահ եղաւ ու յիսուն հազարէն աւելի մարդ մեռաւ:

Այս խռովութիւններէն ու պատերազմներէն ետեւ սուլդան Վահմուտ նորէն սկսաւ իր ժողովրդեան երջանկութեանը հոգ տանիլ: Շատ անգամ ծպտեալ կ'ելլէր կը պտըտէր, որպէս զի ժողովրդեան պիտոյքն ու տրտունջներն խմանայ, և բանի մը հրաման մը չէր տար ինչուան որ ինքն առաջ աղէկ մը չքններ ու յիմանար, և զիանալով ալ իր ժողովրդեան անհանդարտ ու ըմբոստ բնաւորութիւնը, օրինաց սղտի զանցառութիւնն ալ սաստիկ կը պատժէր: Թէպէտ և ինքը այսչափ արթնութեամբ իր տէրութեան հոգ կը տանէր, բայց հալէթ անունով իր խարդախ ու չարագործ պաշտօնեայէն մեծապէս խաբուեցաւ, և անոր խօսքին հաւտալով թէ տէրութեան և թէ մեր ազգին ալ շատ վնաս հասցուց: Մեծամեծ ու արդարասէր մարդկանց սխալմունքը չէ թէ միայն կը յորդորէ զմեզ որ անմեղազիր ու ցաւակից ըլլանք իրենց, հապանակ կը խրատէ թէ մարդ որչափ ալ արդարասէր ըլլայ ու արթուն, յանկարծական կիրքն ու չար մարդկանց խօսքին ականջ կախելը մեծամեծ փորձանքներու ու վրտանդներու մէջ մարդս կրնան ձգել: Իսկ ընդհակառակն երբոր չար մարդկանց վերջի դժ-

բաղդու թիւնը կը տեսնենք՝ կ'իմանանք թէ աշխարհքիս մէջ չարութիւնն ու անօրէնութիւնը առանց սրտովոյ չեն մնար, և վերջապէս ինքն ալ ուրիշի համար փորած փոսին մէջ կ'իյնայ կը կորսուի. ինչպէս որ Հայէթին ալ եղաւ. որուն պատմութիւնը թէ որ հոս մեր նպատակէն դուրս չըլլար ու տեղն 'ի տեղը պատմէինք, իր չարաչար կատարածովը աղէկ օրինակ մը կ'ըլլար ըսածներնուս :

1814ին Երբոր Վաղդիացիք Վերաննիայի մէջ յաղթուելով Յոնիական կողմները թողուցին քաշուեցան ու Վաղդիացիք զանոնք իրենց պաշտարանութեան տակը առին, սուլդան Սահմաւտ ամենեւին դէմ չկեցաւ, հասրա աւելի աղէկ սեպեց իր տէրութիւնը բարեկարգելը: Վար համար հրաման հանեց որ ամէն գունդէն յիսուն հողի զատուին ու մնանաւոր կըթուծին ընեն պատերազմի, խոտանալով որ անոնց ռոճիկն ալ կ'աւելցնէ: Վս բանէս յորդորուած շատ ենիչերինէր ինքնիրեննուն գացին գրուեցան. և կանոց կանոց Եւրոպական խոտութեանց սկսան վարժիլատանկով քաղաքն ալ հանդարտեցաւ: Վայց ան իրէք տարին ստիպելի ժանտախտ եղաւ, ու շատ մարդ ջարդեց. իսկ պատահած կրակներուն համբանքը չկար. կ'ըսեն թէ Երկու տարուան մէջ, այսինքն 1816էն ինչուան 1817, Պօլսոյ մէջ հարիւր անգամ կրակ եղեր է. մէկ անգամ մըն ալ Պէշիկթարի պալատը այրելով, թողաւորին ել

կու տարուան աղջիկն ու անոր դայեակն ալ հոն տեղը մեռան : Ըս բանիս համար վեղիրը հրաման հանեց որ գիշերները առանց լապտերի մարդ դուրս չելլէ , ենիչերիններուն զօրավարներէն մէկքանին ալ բշէլ տուաւ , ու շատերն ալ սարաննեց , որովհետեւ աս դժբաղդու թեան սրատ ճառը իրենք էին :

Նոյն ատենները Այանեայի Տէփետէլէնլի Ըլի փաշան գլուխ բաշեց ( յամանցուցմէ , ու Տէփետէլէնի մեծամեծները ջարդելով ունեցածնին յախշտակեց : Ընկեց Վորմուլոյ աւանն ալ անցաւ , ու զամէնքը թրէ անցուց . և մէկն ալ իր մօրը նախատինք մը ընելուն համար՝ շամիուրի զարկաւ , ու կրակի վրայ խորվեց : Այանեայի մէջ ալ բերդ մը շինելով , բոլոր իր յախշտակած մեծութիւնը հոն տեղը հաւաքեց . Վաղդիա ու Մուղդիա ալ դեսպան գրկելով , շատ զէնք ծախու առաւ անոնցմէ : Արբօր լսեց թէ թագաւորն ալ հրաման տուեր է որ սրատերազմ բացուի իրեն դէմ , բոլոր Յոյները որ արդէն սպարաստուեր էին աստատմէն ռոտը հանեց . մանաւանդ որ ան ատենները Սուլտախոյ ու Սլա հաց յոյն իշխանները յորդորելով բոլոր Պեղապոնէս ու քանի մը կղզիները աստատմէնուցին : Հարկ թ որ աս բանիս մէջ ալ ձեռք ունէր , ինքզինքը արդարացրնելու ու Յոյները աւելի կատգեցրնելու համար՝ անոնց Վրիգորիոս սպարիարդը , Ափեսոսի մեարասօլիար և ուրիշ երկու ե-

պիտեկորացիներ մէկտեղ կախել տուաւ . ազգին երևելի իշխաններէն շատն ալ, ու Վատիկնէի Վիւրեղ մետրապօլիտն ալ սպաննեց : Լ'ս բաներս Յոյները աւելի կատգեցուց, և բոլոր (Թ)րա կիան, Սակեղոնիան ու Փոքր Լ'սիան խռովութեամբ ու արիւնհեղութեամբ լցուեցաւ : Սուսաց դեսպանին ալ խօսքը բանի չեկաւ, ինչու որ Յունաց կողմը կը բռնէր . ուստի ինքն ալ Պէյօղլուէն ելաւ Պէյիւքտերէ քաղաքացաւ : Տաճկերները շատ զօրքով մտան ապստամբաց երկիրը ու մեծ ջարդ տուին անոնց, որովհետեւ Յունաց զօրավարներուն մէջ ալ անմիաբանութիւն մտեր էր : Լաց ասկէց Վիպրոսի, Սէլանիկի ու Օմիւրնիոյ մէջ ալ անհամար անմեղ մարդիկ սպաննեցին :

Երբ միջոցին Լ'ի փաշան քիչ մը արգելք էր իրենց Յունաց դէմ կուտին, բայց երբոր անոնցի մը մէջ պաշարուած, վերջին քաջութեամբ շատ զօրք ջարդելէն ետեւ ինքն ալ ընկաւ մեռաւ, ան ատենը ( )ամանցիք բոլոր ութերնին դարձուցին Յունաց վրայ ու 1822ին առին Վիտա կղզին կամ Սազըզ ատասին, ու այնպէս անխնայ ջարդեցին ու գերեցին որ 100,000 բնակէն 20,000 միայն մնացին, բայց Յոյները ծովու վրայ շատ մեծ քաջութիւն ցրցուցին, ( )սմանեանց ծովահալին նաւը այրեցին ու նաւաւատորմին ալ ցիրուցան ըրին : Լ'նկէց ետեւ թագաւորը հրաման հանեց որ տտանըհինգ տա-

բուլնէ ինչուան յիսուն տարուան մնորդիկ զէնք  
առնեն . ասանկով ցտնարով Հունաց հետ զար-  
նուեցան , ու Սիստղունկի բերդը անոնց ձեռքէն  
առին , Վիսարա կղզիին բնակիչքն ալ թրէ ան-  
ցուցին : Սիստղունկիին առնուիլը թէպէտ և  
շատ ուրախութիւն եղաւ քաղաքացւոյ , բայց  
սուլդան Սահմուտ տեսնելով որ ենիչերիններուն  
աներես լրբութիւնն ու անկարգութիւնը օրէ օր  
կ'աւելնայ՝ շատ չուրախացաւ եղած յաղթու-  
թեանը վրայ , և աւելի մեծ գործողութեան մը  
ձեռք զարկաւ , որ էր ենիչերինները ջնջել : Ըս-  
գործողութիւնս ալ թէպէտ աս միջոցին կ'իյնայ ,  
բայց մենք Հունաց աղատամբութեանը պատմու-  
թիւնը չկարելու համար ետքը պիտի պատմենք :

Սիստղունկին առնուելէն ետև Հունաց զօ-  
րավարները տեսնելով որ ( ) ամանցիք ստակալի  
ջարդով առաջ կ'երթան , Մագդիսացւոյմէ օգնու-  
թիւն ուղեցին : Մն առենը իրէք երևելի տե-  
րութեանց զեսարանները՝ այսինքն Մագդիսցին ,  
Վագդիսցին ու Սուսը սուլդան Սահմուտին  
առաջարկեցին որ Հունաց աղատութիւն սոց .  
բայց երբոր անիկայ իր միտքը չիտխեց , նոյն տե-  
րութիւնները իրենց նաւերը ծով թափեցին ու  
եկան Վաւարինին ծոցը մտան , ուր էր նաև  
( ) ամանեանց նաւատորմիղը : Չգիտցուիլ ինչ  
սրտաճառաւ խռովութիւն մը ինկաւ մէջերնին ,  
ու սկսան իրարու վրայ կրակ թափել . ստակալի  
էր ան սղախ ծոցին մէջ եղած պատերազմը , նա-



ւերուն իրարու զարնուիլն ու վառօդարանին բռն-  
 կելով երկինք ելլելը չխուերու ու չտեսնուելու  
 բան մըն էր, և միայն բռնկիած նաւերուն ծուխը  
 ան սոսկալի տեսարանը կը ծածկէր. վերջապէս  
 ( )ամանեանց 60 մեծամեծ նաւերէն քսան հաս-  
 պղտի նաւեր միայն խալըսեցան : Արբոր աս լու-  
 ըր Պօլիս հասաւ, մեծամեծները տակնուվրայ  
 եղան. խի սուլդան Սահմուտ չէ թէ միայն եւ-  
 ըտարեկան դեսպաններուն մտիկ չըրաւ՝ որ Յո-  
 ները ազատէ կ'ըսէին, հապա նաև Սուսաց դէմ  
 պատերազմ բանալու հրտման տուաւ : Յոյնք  
 էրբոր լսեցին աս բանս, աւելի սիրտ առին . թէ-  
 պէտ և սուլդան Սահմուտ խոտտայեր էր անոնց  
 ըրածին ներելու, թէ որ նորէն հնազանդէին :  
 Բայց վերջապէս Սուսաց պատերազմէն ետքը  
 եղած հաշտութեան մէջ որոշուեցաւ որ Յունաց  
 ալ ազատութիւն տրուի, ու զատ Թաղաորու-  
 թիւն ըլլան . բայց անոնց սահմաններուն ու  
 ( )ամանցւոց անոնց վրայ ունենալու իշխանու-  
 թեանը վրայօք որոշ բան մը չլճուեցաւ . ու այս  
 պէս 1820ին սկսած պատերազմը 1829ին լը-  
 մընցաւ :

Սուլդան Սահմուտ աղէկ գիտեր թէ տէրու-  
 թեան մը յառաջադիմութեան ու հաստատու-  
 թեան գլխաւոր պատճառներէն մէկն ալ կանոնա-  
 ւոր կը թեալ զօրք ունենալն է . բայց գիտեր ալ  
 որ ստանկ մեծ գործողութեան մը մէջ ամենէն  
 հարկաւոր բանն ալ խոհեմութիւնն ու արխու-



Թիւնն է : Մտոր համար նախ ենիչերինեւրուն զօրաւարացը սիրար շահելով, անոնց ալ իմացուց աս բանիս հարկաւորութիւնը, և իրենցմէ զիր ալ առաւ՝ որ աս բանիս իրենք ալ օգնական ըլլան : Ատքը վէզիրը խորհուրդ ընելով՝ կարդաց նաև Թագաւորին հրովարտակը, ու նոր զօրքին գրուելու կարգն ու կանոնը, ու դէնպետը և ենիչերինեւրուն զօրաւարները հաստատեցին ու կրնքեցին ու զրկեցին որ ենիչերի սպայից առջևն ալ կարդան : Արբոր անոնք ալ յանձն առին աս բանս, ան առեն մէկէն 5000 հողի ընտրուեցան, ու անոնց նոր զգեստ ու զէնք բաժնեցին, ու նոր գունդ մը ձևացան Աչքինձի անունաւ : Անիչերինեւրուն սպայներէն ու զօրապետներէն ուննք Թէպէտ և զսուանց հաւանութիւն ջուլընելով ստորագրեր էին Թագաւորին հրովարտակին, բայց սրտով աս նորութեան Թշնամի ըլլալով, մէկը մէկալը զրգուեցին որ աս բանս արդիլէն. և վերջապէս 1826ին յունիսի 15ին եւան ապստամբները իրենց տեղերէն, ու իրենց կատսանելովը Աթմէյտանին լցուեցան. զինազործներուն կատսաներն ալ յափշտակեցին, ու զանոնք ալ իրենց հետ միացուցին : Իրենցմէ մէկ մասը եւան զացին զօրաւարին տունը՝ որ սպաննեն զինքը. բայց անիկայ տունը չգանուելուն, տունը Թալլեցին ու կրակ տուին : Մէկ մասն ալ գնացին վէզիրին սալատը կողոպտեցին, ու բիշներն ալ փողոյներուն ու հրապարակներուն մէջ կը սօ-

ուային . Սէռնի դէնպետը , մեռնին կարգացող  
ները . ու անոնց կանայքը , տղաքն ու ստացուած  
քը յափշտակուին , կրպակները բացուին ու վա  
ճառականները ամենեւին վախ չունենան . թէ որ  
սաբակիի կտոր մը գողցուի՝ աղամանդ կը հատու  
ցանենք տեղը , թէ որ մէկը զրկում մը ընէ՝ պա  
տառ պատառ կ'ընենք զանիկայ : Ըս բաներովս  
բոլոր քաղաքը տակնուվրայ եղեր էր , վէզիլին ալ  
որ Պէօյիւքտերէ էր , աս բանս լսելով՝ մէկէն հա  
տաւ Եալը քէօջիւ ըսուած տեղը , ուր տեղ ժող  
վուեր էին մեծամեծները , ուստի գանձապետն  
ալ թագաւորին զրկեցին՝ որ նուիրական դրօշը  
առնէ ու զօրքին երեւոյ : Սէզիլին ելաւ Ըսրան  
խանէ ըսուած տեղը գնաց , հոն հասաւ նաև թըն  
դանօթածիւզ զօրաց գլուխը , որ Վարաձէհէնէմ  
կ'ըսուէր : Սագաւորն ալ մէկէն Պէշիկթաշէն  
իջաւ եկաւ Ստիգափու . և դրօշը հանելով վէզի  
լին ձեռքը յանձնեց , և մէկէն ամէն տեղ սկսան  
կանչել թէ Սիլ որ ճմարիտ մահմէտական է՝  
Սահմէտին դրօշին ետեւէն երթայ : Ըսով քիչ ա  
տենուան մէջ անհամար մարդիկ ժողվուեցան , և  
ամէնուն ալ զէնք բաժնուեցաւ . ու Ըսրահ ալլահ ,  
ալլահ էքպեր կանչելով՝ ելան գացին սուլդան Ըհ  
մէտի մզիկիթը : Հոն խորհուրդ ընելով իրենցմէ  
չատը վազեցին գացին աստատմբներուն վրայ :  
Իսկ ենիչերիները երբոր լսեցին թէ դրօշը գուրս  
հաներ են , և թէ ժողվուրդը յորձանքի պէս  
Ըթմէյտանի կը վազեն , վախնալով փախան Ըթ-

մէյտանի որ իրենց գլխաւոր ապաստանարանն էր, ու հրապարակին մեծ դուռն ալ գոցելով՝ ետեւը քարեր դիզեցին: յողովուրդն ու զօրքն ալ սկսան դէս ՚ի հոն վաղել, ու բոլոր հրապարակն ու ձմերոցը պաշարեցին: Վարաձէհէննէմն ալ նորէն յիշեցուց ապստամբներուն իրենց պարտքը, ու ըսաւ ալ որ եթէ հնազանդելու ըլլան՝ թագաւորը իրենց կրներէ: Վայց երբոր անոնք մտիկ չըրին, հրամմեց որ թնդանօթները առաջ քաշեն. նոյն ատենը բոլոր ապստամբները հրապարակին դրան ետեւը դիզուեր էին, թնդանօթին մէկը նետուելուն պէս՝ զնաց դրան մէկ փեղկը կոտորեց, ու հազարաւոր մարդիկ մէկ ատեղ մեռցուց: Սէկէն զինուորներէն մէկը ցատքեց մէկալ դուռն ալ բացաւ, ու բոլոր ժողովուրդը հրապարակը թափեցաւ: Վարաձէհէննէմին ոտքը թէպէտ հրացանի զնտակէ մը վիրաւորեր էր, բայց ինքը դարձեալ սուրը ձեռքը՝ ամենուն սիրտ կուտար: Նսիւերիններն ալ փախան ապաւինեցան իրենց ձմերոցները, ու հրապարակին մէջի (մ)էքքէ ըսուած տեղը: Ըն միջոցին տասուերկու թնդանօթներէն ընկած զնտակները ձմերոցը չորս դիէն բռնկցուցին, ու քիչ ատենուան մէջ ան սոսկալի շէնքը մէջի եղած բիւրաւոր մարդիկներովը մոխիր դարձաւ: Սէկէն սուլդան Նճմէտի մղկիթը մարդ զրկեցին որ վէզիրին ու թագաւորին աւետիս տայ եղած յաղթութեանը համար:

Մասնակով ենիչերիններուն մեծ մասը հոն տեղը  
 կորսուեցան . իսկ բռնուածներն ալ հրամեց վե-  
 զիրը որ բանաը դնեն , որպէս զի վրանին քննու-  
 թիւն ըլլայ : Մասնի բռնուեցաւ նաև ենիչերի-  
 ներուն զօրագլուխը Ղ'ելալէտտին Ս'էհէմմէտ ա-  
 զան . մէկէն 'ի մէկ գունդ գունդ զօրքեր դուռե-  
 ցան քաղաքին ամէն մէկ դռներուն , ու ամէն տե-  
 զի բնակիչներուն ալ հրամանն եղաւ՝ որ իրենց  
 թաղին ու փողոցին պահպանութիւն ընեն : Այն  
 գիշերը վեզիրը , գէնպետը ու ուրիշ մեծամեծ-  
 ները սուլթան Մհմէտի մզկիթը անցուցին . իսկ  
 երկրորդ օրը վեզիրը մէկիկ մէկիկ բռնուած զօ-  
 րագլուխներն ու սպայները դիմացը կանչեց , ու  
 անոնց անհաւատարմութիւնը երեսնին զարնելով՝  
 զամէնքն ալ խղզել տուաւ : Այն գիշերը թագա-  
 ւորական կնքով հրովարտակ մին ալ ելաւ , որուն  
 մէջ կը ծանուցանէին ենիչերիններուն վերնալուն  
 պատճառը ու նոր զօրքին հաստատուիլը , որ  
 Ս'ուալլէմ ասաքիբի մանսուրէի մուհամմէտիյէ  
 պիտի կոչուէին : Այլրորդ օրը նուիրական դրօշը  
 վերցուցին ու մեծ հանդիսով նորէն պալատը  
 դարձուցին . թագաւորն ալ ատենաբանութիւն  
 մը ըրաւ նախ փառք տալով Մստուծոյ և ետքը  
 գովելով մեծամեծները՝ որ այսպիսի մեծ գործը  
 զութեան մը օգնական եղան իրեն . ու ամէն մէ-  
 կուն պաշտօններ ու պատիւներ բաժնելով , ա-  
 ուջարկեց իրենց տէրութեան քանի մը պիտոյի-  
 ցը վրայօք խորհուրդ ընելու : Այն խորհրդով

որոշուեցաւ որ քաղաքին մէջ եղած դրսեցիները որ ենիչերիներուն օգնական եղեր էին, բռնորն ալ իրենց երկիրը դառնան. Պէհթաշի ըսուած տէրվիչներուն կարգը ջնջեցին ու անոնց վանքերն ու գերեզմանները աւերեցին. նաննապէս Սիւրհաշի, Լուլուֆէճի ու Վուրէպս ըսուած ձիաւոր զօրքը վերցուցին. և ուրիշ զինուորացիներուն անունը, զգեստն ու սովորութիւնները վերցուցին, ու եւրոպական զգեստ ու կրթութիւն մտցուցին: Շատ անգամ սուլդան Սահմուտ ալ անոնց կրթութեան ատենը կուգար զիրենք քաջալերելու ու սիրտ տալու. նաև զինուորութեան ու բժշկութեան դպրոց, զէնքի գործարաններ ու մեծաշէն ձմերոցներ հաստատեց:

Նոյն ատենները Պահաճէ գափուսու մեծ կրակ մը եղաւ, որ քաղաքին ութերորդ մասը ու Պէզէսթէնն ալ այրեց, ու գրեթէ 300,000,000 զուրուշի փնաս ըրաւ: Սուլդան Սահմուտ հրամայեց որ արքունեաց դռներն ու ուրիշ պալատները բացուին՝ որ խեղճերը հոն ապաւինին. ետքը շատ մը ստակ ալ տուաւ՝ որ վաճառանոցը նորէն շինեն: Այլ որպէս զի կրակին պատճառովը խռովութիւն մը չելլէ, նոր զօրքը ասդիս անդին ցրուեց, ու ով որ քաղաքական տեսչութեան վրայ տրտունջ ըներ, գլխատել կուտար: Շատ կնիկներ ալ նոյն սրատճառի համար սրակերու մէջ կարել ու ծով նետել տուաւ: Վիչ ատենն Պէյօղլու ալ մեծ կրակ ըլլալով 10,000 տուն



այրեց . բայց անսկեց ժանտամահէ ու քղերայէ ալ շատ մնարդիկ մեռան : Ըստ ամէն թշուառութեանց մէջ սուղիան Սահմուտ իր սրտին արիութիւնը ամենեւին չթողուց . ախան որ իր քաջութեանը համեմատ չէր ոչ տէրութեանը ուժը և ոչ ալ սրաշտօնէից քաջութիւնը . անոր համար թէպէտ կտրճութեամբ Սուտաց դէմ նորէն պատերազմ բացաւ՝ բայց Սուսները զօրացան ու մինչև Ալիխաօլու ու Վիւչիւք Չէքմէճէ եկան . քիչ մնաց որ մայրաքաղաքն ալ պիտոր մտնէին . ուստի պէտք եղաւ ու հաշտութիւն ընէ : Ազխատոսի Սէհէմմէտ Սլի փաշային հետ ալ պատերազմի ելաւ , բայց չկրցաւ նուաճել . ուստի Ազխատոս զատ տէրութիւն մը ձևացաւ թէպէտ և հարկատու ( )ամանցւոց : Ըստնցմով իմացաւ սուղիան Սահմուտ որ տէրութեանը ներքին ուժը աւելցնելու է . անոր համար իր երկրին մէջ զանազան դպրոցներ հաստատելէն ետև , Փարիզ ու Սեննա ալ ընտիր տղաքներ զըրկեց որ երթան զինուորութիւն , գիտութիւն , ու քաղաքականութիւն սորվին , ու 1830ին Պօլսոյ մէջ ալ լրագիր մը հրատարակել տալ սկսաւ տաճիկերէն ու գաղղիերէն :

Ըսկէ զատ՝ Արուսայի երևելի մայրաքաղաքներն ալ գեապաններ հաստատեց , Սուդաֆա Ռէշիա փաշան Փարիզ զրկելով , Ֆէթիհ Սէմէտ փաշան Սեննա , Սէհէմմէտ Վեամիլ փաշան Պէպին , և ուրիշներն ալ ընտրաւ ու Փե-




Թրպուրի : Սէկ կողմանէ ալ ժանտախտին տարուէ տարի ըրած ջարդին առջևը առնելու համար ճարտարութեամբ հանդէպ մեծերը ու 1838ին հրամանեց որ արդէլանոցներ շինուին , ու եկող գացողին զգուշութիւն ըլլուի : Աւրոպական տէրութեանց դեսպաններուն ալ արդիւնց որ իրենց հպատակաց ձեռքը հրամանագիր ջրտան . վասն զի շատ անկարգութիւններու պատճառ կ'ըլլար սա բանա : Վիչ առենէն աստեան մըն ալ սահմանեց , որոնց պաշտօնն էր արուեստները , վաճառականութիւնն ու երկրագործութիւնը ծաղկեցընել . Պէյօղլու ալ վերձանութեան Թանգարան մը հաստատեց՝ Աւրոպայի ամէն տեսակ լրագիրներն ու օրագիրները հոն տեղը շատցընելով :

Բնակ Թագաւոր մը պէտք էր որ դեռ շատ ապրէր , բայց Ազխալտաի պատերազմը դեռ զբմընցած՝ սուլդան Սահմուտ անյայտ հիւանդութեամբ օր օրուան վրայ կը հիւժէր , և կ'ըսէն թէ սա հիւանդութեանս պատճառը և ոչ իր սիրելիներուն խնացուցեր էր : Ուստի 1839ին յուլիսի առջի օրը Չամլըճա իր քրոջը տունը գացած ըլլալով , հոն տեղը առաւօտեան դէմ մեռաւ . և կէսօրուան մօտ մունեաթիկներէն ու Թնդանօթներուն ձայնէն խնացուեցաւ Թագաւորին մեռնիլը : Սէկէն 'ի մէկ Այսորով փաշան Այալիլ ու Սայխտ փաշաներուն հետ գնաց անդրանկին խնացընելու , ու հրաւիրեց որ գայ նրա-

տի իր հօրը աթուր : Արբոր Աստիւ Ա՛հա  
լեց աս բանս՝ սխաւ ըալ ու ողբալ, ու վերջապէս  
էլաւ եկաւ բուն արբունիքը : Այն միջոցին թա-  
գաւորին մարմինն ալ ուրիշ դռնէ մը բերին  
դրին Ա՛րդ օտաւր ըսուած սրահը . հին տեղը նա  
րէն ողբաց ու աղօթեց իր հօրը մարմնոյն վրայ .  
էտքը զնաց նստաւ թագաւորական դահլը, ու ա-  
մէն մեծերն ալ ընկան երկրպագութիւն ըրին :

Արիկուան դէմ թաղման հանդէսը կատարուե-  
ցաւ . անհամար մարդիկ բոլոր փողոցները լցուած  
հանդէսը տեսնելու եկեր էին . բայց այսու ա-  
մենայնիւ այնչափ բազմութեան մէջ ամենեկին  
խոռովութիւն մը չէրաւ : (Վաստորին առջևէն կ'եր-  
թային սաշտօնատէրները ու թագաւորին ներ-  
քին խորհրդականները, անոնցմէ ետև Այսարով  
փաշան ու ուրիշ մեծամեծները : Ա՛նոնց ետևէն  
ալ թագաւորին զագաղը ծանրապին ծածկոցով  
մը միայն գոցուած, ու զլիսուն կողմն ականա-  
կուռ ճեղանակով զարդարած Ֆէսը : Շատ  
սպայներ ալ ձիերու վրայ նստած վեր վար ժուռ  
կուգային, ու ժողովրդեան ստակ կը ցրուէին :  
Ա՛սանկով տարին զետեղեցին թագաւորին մար-  
մինը Ֆազլը փաշա ըսուած տեղը, ուր որ էտքը  
փառաւոր շիրիմ մը կանգնել տուաւ որդին Ա՛ս-  
տիւ Ա՛հա :





# ՓՈՒՆՐՔԵՆՅՔ

Կ Ա Մ

ՔԼԵՉՈՒՐՔ ՕՍՄԵՆԵՆՆՅ

ԸՆՈՒՆԵՒՔ

ԱԼԱՅԵՏՏԻՆ ՓԱՇԱ

**Տ**ԻՐՈՒԹԵԱՆ նոր սկսած ժամանակը անոր ապագայ յառաջադիմութեանը մեծ պատճառ կ'ըլլան խոհեմ ու քաղաքագէտ մարդիկ: Այսպիսի անուանի իշխանաց մէկն է Ալայէտտին փաշան ( ) ամանեան տէրութեան սկզբնաւորութեան ատենը:

Սուլդան ( ) ամանին մեծ որդին էր Ալայէտտին. և որովհետեւ Սուրբաց մէջ սուլորութիւն էր որ մեծ որդւոց չաշխ կ'ըսէին պատուոց համար, ինչպէս նաև ինչուան հիսն իրենցմէ ամանք մեծ եղբօրը աշխ կ'ըսեն, ասկէ ոչ միայն Ալայէտտին փաշա ըսուեցաւ, հապա նաև իր յաջորդները,

և ինչուան ուրիշ մեծ իշխաններն ալ փաշա կ'ըսուին :

Մայէտտին փաշան իր հօրը տէրութեան ըսկիզբները շատ կտրճութիւններ բրաւ , և հպատակները աղէկ գիտնալով իր խոհեմ ու արդարասէր և միանգամայն զթասիրտ բնաւորութիւնը , իրենց ամէն պիտոյիցը համար համարձակ իրեն կը գիմէին , թէպէտ և ինքը փոխարքայ կամ վէզիր անունը և պաշտօնը չէր առած : Աւ թէ որ շատ աւելի գովեստի արժանի է այն մարդն որ առանց պաշտօնին պատուանունը ունենալու՝ անոր պարտքերը գովելի կերպով կը կատարէ , քան թէ անիկայ որ պաշտօնին ու պատուոյն պահանջած գործողութիւնները անհողութեամբ կ'ընէ , Մայէտտին փաշան իրաւամբ պէտք է միշտ վեր սեպուի իր յաջորդներուն շատին , և ուրիշ նման պաշտօն ունեցող իշխաններէն :

Արբոր սուլդան ( )աննին տեղը թագաւորեց անոր պզտիկ որդին սուլդան ( )բիան , Մայէտտին փաշան թերեւս զգուշանալով որ կասկած մը չտայ թէ ինքը ետեւէ էր հօրը յաջորդելու , ինքնակամ ձեռքը քաշեց տէրութեան գործողութիւններէն ու առանձնացաւ : Մայց սուլդան ( )բիան երբոր իր հօրը տէրութիւնը աւելի ընդարձակեց ու Նիկոմիդիա քաղաքին ալ տիրեց , շատ աղաչանքով տոխպեց հաւանեցուց իր մեծ եղբայրն որ յանձն առնու իրեն օգնելու , և Քէլէբ անուանեց զինքը , որ Մարտացուց բա-

առլ բեռնակիր կընշանակէ, իբր թէ տէրութեան ծանր գործողութիւնները իր վրան առնող:

Մայէտտին փաշան շատ տեսակ կարգադրութիւններ ըրաւ ( ) օմանեան տէրութեան մէջ. բայց գլխաւորները ասոնք են: Վնչուան ան ատենը ( ) օմանայիւր ալ Վկոնիոնի Սելճուզեան թագաւորաց ստակները կը բանեցընէին. Մայէտտին որոշեց որ անկէց ետքը օմանեան թագաւորաց անունովը կոխուին ամէն տեսակ ստակներ: Մէն վիճակի մարդկանց համար մանաւոր հագուստ որոշեց. ձիաւոր ու հետեակ զօրաց մէջ կարգեր դրաւ, ու բրիտանեկից տղաքը ժողվելով՝ նոր գունդ մը կազմելը ինքը հնարեց. աս գունդն է որ ան ատենէն Էնիշէրի ըսուեցաւ, և ինչուան վերջի ատեններս բոլոր աշխարհք դողացուց. բայց ետքերը շատ անգամ ապստամբութեան ու անգթութեան գործքեր ընելուն համար՝ 1826ին բոլորովին ջնջուեցաւ օմանեան տէրութենէն:

Իսկ Մայէտտին փաշան իր ծերութեան ժամանակը յիշելով սուանձնական կենաց հանգիստ հանդարտութիւնը, նորէն բաշուեցաւ Պիղաքաղաքը ու հոն մեռաւ:

## ՃԷՆՏԵՐԷԼԻ ԳԱՐԱ ԽԱԼԻԼ

## ԽԱՅՐԷՏՏԻՆ ՓԱՇԱ

ՍՈՒԼԴԱՆ ( ) ամանին աներոջը Լատեպալի ծերունայն ազգական էր առ Գարա Խալիլը՝ Լր ասենի կարդացողներուն մէջ անուանի ըլլալով սուլղան ( ) ըխան զինքը դատաւոր դրաւ Լգնիգ ու Պիլէճիկ քաղաքներուն, ետքն ալ Պրուտայի :

( ) ըխանին յաջորդը սուլղան Սուրատ Լ, տեսնելով ասոր ոչ միայն քաջ օրէնադէտ, հապա նաև խոհեմ խորհրդական ու կտրիճ զօրավար ըլլալը, սուսջ գաղխաբէր՝ այսինքն դատաւոր զօրաց անուանեց, ետքն ալ վէզիլը ըրաւ, ու անունը դրաւ Խայրէտտին փաշա :

Տամնուլթը տարի վէզիլու թիւն ըրաւ ասիկայ, և օսմանեան տէրու թեան օրինաւոր վէզիլներու առաջինը կը սեպուի : Երբոր 1386ին Լնիլէհիլը քաղաքը առնելու կ'երթար, ճամբան Լնիլէհիլրան ըսուած տեղը մեռաւ :



## ԻՊՐԱՏԻՄ ՓԱՇԱ

ԹԻՊԵՏ Խայրէտտին փառայէն ետքը անոր որդին Մ. Լի փառա տեղը անցաւ, բայց իր որդին (կամ ինչպէս ուրիշները կ'ըսեն՝ եղբայրը) Խայրաճիմ փառա աւելի լաւ անուն ձգեց իբրև գիտուն, խոհեմ ու կառավարութիւն գիտցող մարդ:

Երբ ըտրբում Պայէզիտին ատենը զազխաքէր ըլլալէն ետքը, երբոր անոր որդին Սուսա չէլէսի յաղթեց իր Սիւլէյման եղբօրը, Խայրաճիմ փառա Սուսային օգնելէն ետքը՝ զնաց Պրուսա 1411ին, ու հոն սուլդան Սէհէմէտ Մ. Թաղաւորին հետ տեսնուելուն պէս՝ անոր վէզիրն եղաւ:

Մ.ս վէզիրին մեծ գովեստը ան է որ սուլդան Սէհէմէտին մեռնելէն ետքը Խարէնէ քաղաքին մէջ ինչուան որ անոր որդին սուլդան Սուրատ Բ. եկաւ Մմասխայէն ու հօրը աթուր նշատաւ՝ Խայրաճիմ փառան կառավարեց խաղաղութեամբ տէրութիւնը, այնպէս որ նոր Թաղաւորն ալ հաստատեց զինքը առջի սրաշտօնին մէջ:

Խայրաճիմ փառան տասնըհինգ տարիէն աւելի վէզիրութիւն ընելէն ետքը, 1427ին մեռաւ:

## ԽԱԼԻԼ ՓԱՇԱ

Այլ վեղիւրը անուլ անուանի եղած է որ իր հօրը Իպրահիմ փաշային յաջորդելով, ոչ միայն քսանըչորս տարի ան դժուար պաշտօնը կատարեց, հապա յթաթիւս սուլդան Սէհէմմէտին պէս ահարկու թագաւորին կրցաւ հաճոյանալ՝ գէթ առջի բերանը :

Իսկ 1453ին, երբոր սուլդան Սէհէմմէտ Արստանդնուպօլիսը Յունաց ձեռքէն առնելու կ'երթար, կասկած մը առաւ թէ Խալիլ փաշան կաշառք առեր է Յունաց կայսերէն . ուստի Արստանդնուպօլսոյ առնուած օրը պաշտօնէն ձգեց ու բանտ դրաւ զինքը . քառասուն օրէն ետքն ալ սպաննեց : Իրմով վերջացաւ Ղէնտերէլի Վարա Խալիլին ցեղը, որոնք որդւոց որդի անուանի վեղիւրներ եղեր էին . և սա Խալիլ փաշան եղաւ առաջինն որ թագաւորական հրամանով սպաննուեցաւ :

ԳԱՐԱՄԱՆԻ ՆԻՇԱՆՃԻ ՄԷՀԷՄՄԷՏ  
ՓԱՇԱ

( ) ՍՄԱՆՑԻ վեզիրներուն մէջ քիչ մարդ է զլած է ասոր պէս կարգացող ու հանձարեղ, և միանգամայն վեհանձն, խոնարհամիտ ու ազնուական : Արևեսն թէ ասիկայ Սոնլա Հինքեար կամ Սեվլանա Ղեչուկտափն Սեհեմէտի ցեղէն կուգար, որ 1273ին մեռած կը սեպուի, ու Սեվլեվի բուռած տեղիչներուն հիմնադիրն է :

Սեհեմէտ փաշան չորս տարիի չափ միայն ըրաւ վեզիրութիւնը, ու երբոր 1481ին Ֆաթիհ սուլդան Սեհեմէտը Աեկվիզէ հասած առեներ մեռաւ, ենիչերիները օտք ելան ու Աիշան ճի Սեհեմէտ փաշան սպաննեցին :

ՆԱՍՈՒՀ ՓԱՇԱ

ՓԱՓԱԲԵԼԻ բան էր որ ամէն մեծամեծ մարդիկ իրենց աղէկութեամբը միայն անուանի ըլլային. բայց աս բանս կարծես թէ ամենուն չէ տրուած, և շատը իրենց սպակասութիւններովն ալ անուն հաներ են՝ որպէս զի խեղացի մարդիկ

անոնց չարութիւնները տեսնելով զգուշանան անոնց հետեող ըլլալէն : Աստուհ փաշան ալ շատ անուանի է ( )անանցուոց մէջ իր անդթութիւններովն ու փառասիրութեամբը :

Մտիկայ Արամիլճինէ աւանէն էր, ու պալթաճի ըսուած զօրաց միջ մտնելէն ետքը չառու էր զաւ, ետքը Օ իլէի վոյվոտա, անիկեց ետքը թագաւորական ակտուսպետ, Հալէպու կուսակալ, Տիարալէքիի կուսակալ, ետքն ալ թագաւորին փեսայ ու վէզիր : Մն ամէն պաշտօններուն մէջ ալ Աստուհ փաշան յայտնի երեցուց մէկ կողմանէ իր գործունեաց աչքաբացութիւնը, առատաձեւութիւնը, և օրինաց տեղեակ ըլլալը, բայց միանգամայն նաև իր անյազ փառասիրութիւնը, ինքնահասան ամբարտաւանութիւնը, անխիղճ խորանանկութիւնը, և բարկասիրտ սխակալութիւնը : Մտնցմով բոլոր օսմանեան տէրութեան մեծամեծ մնասներ հասուց, ու մեծի պզտիկի ատելի եղաւ . անանկ որ սուլղան Մհմէտ իմանալով ասոր ըրածները, գլխատել տուաւ զինքը 1614ին :

## ԷԼԻՄԱՍ ՄԷՀԵՄՄԷՏ ՓԱՇԱ

ՍԻՆՈՊ քաղաքին Խօշալայ ըսուած գեղէն էր  
 աս անուանի վէղիբը, որ թէ իր դրսի տեսքին  
 համար և թէ մանաւանդ շատ բարոյական կա-  
 տարելու թիւններուն համար Էլմաս ըսուեցաւ :  
 Սուլդան Սէհեմէտ Գ Երեւել տուաւ զինքը իր  
 սպալատը, ու տասնըեօթը տարուան մէջ այնչափ  
 մեծցաւ որ ինչուան վէղիբ եղաւ սուլդան Սու-  
 դաֆային օրերը, այսինքն 1694ին : Այլ թէպէտ  
 իրէք տարի միայն վէղիբու թիւն ըրաւ, ու Գեր-  
 մանացոց զէմ բացուած սրատերազմին մէջ ըն-  
 կաւ մեռաւ 36 տարեկան, բայց ուրիշ շատ եր-  
 կարակեաց վէղիբներէն անուանի եղաւ իր խ-  
 հեմ կառաւարու թեամբը :

## ԲԱՂԻՊ ՄԷՀԵՄՄԷՏ ՓԱՇԱ

ԲՍԿԷՑ հարիւր տարիի չափ առաջ թէ որ  
 մէկ վէղիբ մը կար որ հիմնադուան հանճարեղ ու  
 հայրենասէր վէղիբներուն համեմատի, աս Բա-  
 դիպ փաշան է :

Վէղիբ ըլլալէն առաջ ալ ինչ սպառօններու  
 մէջ որ մտաւ՝ ամէնն ալ զովու թեամբ կատա-

րեց: Իսկ երբոր սուլդանն ( )ամանն Վ զինքը վե-  
զիր ըրաւ 1757ին, մանապէս երբոր անոր յա-  
ջորդը սուլդանն Սուսդաֆա Վ Տաստատեց զինքը  
նոյն պաշտօնին մէջ, Բաղիպ փաշան աւելի յայտ-  
նեց իր բարակամտութիւնն ու հայրենասիրու-  
թիւնը:

Ըստ օգտակար բարեկարգութիւններ ըրաւ  
( )ամանեան տէրութեան մէջ. և զարմանալին  
աս է որ այնպիսի ատեններ ետեւէ եղաւ որ ( )ս-  
մանեան երկրին մէջ քառանօրեայ մաքրարան  
հաստատէ ժամտախտին դէմ. բայց իր աս փա-  
փաքը անկատար մնաց:

Իր արթուն ու սրամիտ հանձնարը ասով ալ  
յայանի է որ ոչ միայն իր ազգին մէջի կարգա-  
յողներուն մէջ առաջին էր, այլ և գովելի հե-  
տաքրքրութեամբ մեծ սէր ունէր օտար ազգաց  
վրայ տեղեկութիւններ առնելու: Չինաց պատ-  
մութիւն մը շարադրել տուաւ տաճիկերէն, ինքն  
ալ զանազան բարոյական նիւթերու վրայ զիրք  
մը շարադրեց. ուրիշ զիրք մըն ալ խելացի խօս-  
քերու և ընտիր առաճներու: Վրաստուն մըն ալ  
չինեց Աստանդնուպօլսոյ մէջ շատ փառաւոր՝  
Լալէլի չէչմէին մօտ:

Բաղիպ փաշային կտրած ճարտար ու արդար  
դատաստանները այնչափ անուանի են որ ինչուան  
հիմա Տաճիկաց մէջ կը պատմուին: Կեքը մեռաւ  
1768ին, 66 տարեկան, և իր շինած զրատանը  
քով թաղուեցաւ:



Կնկէց ինչուան մեր օրերը եղան ուրիշ երեւե-  
 լի վէզիւրներ ալ որ օսմանեան տէրութեան սրա-  
 տիւ ըրին . բայց ամենէն աւելի անսնոանալի յի-  
 շատակաց արժանի է հիմնական մեծ վէզիւրը  
 Սուղաֆա Սէշիտ Փաշա, որուն կատարեալ  
 և արժանի գովեստ իր խոհեմ ու բարակամիտ  
 կառավարութեան գործքերն են՝ որ աս մեր հա-  
 մառօտ գրուածքէն շատ աւելի ճարտասանու-  
 թեամբ կը խօսին մեր ժամանակակից մարդկանց  
 հետ, ու մեզմէ ետքն ալ օսմանեան տէրութեան  
 սրատնութիւնը շարունակողներուն առատ ու փա-  
 ռաւոր նիւթ սլիտի ըլլան շարագրելու :





Է Լ Զ Ա Ճ Մ ՈՒ Ս Գ Ա Ֆ Ա

Ք Ե Ա Թ Ի Գ Չ Լ Լ Լ Գ Ի

Հ Ա Ճ Ի Խ Ա Լ Ի Ֆ Ի

( ) Ս Մ Ա Ն Ե Ա Ն գրականութեան եղական սպառ-  
ծանքն ու սրատիւր արժանապէս աս բազմահմուտ  
մատենագիրն ըլլալով, իրեն և իր գրուածոցը վը-  
րայ համառօտ տեղեկութիւն մը տալը հոս հար-  
կաւոր կը սեպենք :

Առտանդնուպօլիս ծնած ու մեծցած ըլլալէն  
էտքը, իր սրամիտ աջողակութիւնն ու գովելի  
ուսումնասիրութիւնը քանի գնաց աւելցուց ճա-  
նապարհորդութիւններ ընելով, ասիական ու եւ-  
րոպական լեզուներ սորվելով, երևելի վարժա-  
պետներու աշակերտութիւն ընելով, և անհամար  
գրքեր կարդալով : Իր վարքը գրողները կ'ըսեն  
թէ իրէք հարիւր տեսակ գիտութենէ աւելի  
կարդացեր է արաբերէն, սարսկերէն ու տաճկե-  
րէն գրքերու մէջ : Գիտութիւն ըսելով ինչ ալ  
հասկընան անոնք, աս յայտնի է հաճի Խալի-  
ֆէին ինչուան հիմա մնացած գրուածքներէն որ  
իրեն պէս բազմահմուտ մատենագիր չէ եղած

օսմանեան տէրութեան մէջ : Ինքը մեռաւ 1647ին . բայց իր աշխատանքները անմահացողն իր անունը ոչ միայն Տաճկաստան , այլ և Լաբուսայի խմասանոց մէջ որ անոր մէկ քանի գրուածքները իրենց լեզուներովը թարգմանեցին ու տպեցին :

Վ. Բեաթիպ չէլէպիին զլիսաւոր գրքերը ասոնք են .

Ա . Վ. Է. Շ. Փ - Ի. Ի. Զ. - Զ. Ի. Կ. Ո. Ի. Կ. , այսինքն Բաշայապուր-Է-ն Էթերեայ : Ըստիկայ այբուբենական կարգով Սատենադարան մըն է գիտութեանց և արուեստից՝ արաբերէն . մէջը գրեթէ տասնըութը հազար արաբերէն , սրբսկերէն ու տաճկերէն գրքերու անունը ղնելէն ետեւ , անոնց հեղինակներուն ալ անուններն ու վարքերը կը գրէ : Ըսոր քանի մը ձեռագիր օրինակները կը գտնուին նաև Փարիզու ազգային գրատունը , և համընթաց գերմանացի արևելագէտը ասոր համառօտութիւնը հրատարակեց :

Բ . Թ. Է. Օ. Տ. Փ. Է. Թ - Ի. Ի. Լ. - Բ. Ի. Պ. Ա. Բ. , որ ըսել է Բաշայ Էթերեայ : Ըստիկայ ( ) ամանցւոց ծովական պատերազմներու պատմութիւնն է՝ Սոստանդնուսյօլիս տպուած 1728ին :

Գ . Թ. Է. Օ. Տ. Փ. Է. Թ - Ի. Ի. Լ. - Ա. Ե. Պ. Ա. Բ. . Պատմական , փիլիսոփայական ու բանաստեղծական խրատներ են :

Դ . Պ. Օ. Ս. Դ. Ա. Ն. Դ. Ի. Ն. Ի. Յ. Է. Թ. Ա. Բ. Ի. Թ. Ի. . Սոստանդնուսյօլսոյ առնուելուն պատմութիւնն է :

Ե • ՖԷՉԼԻՔԷ • Բնդհանուր պատմութիւն՝  
արարելէն գրուած, աշխարհիս սկիզբէն ինչուան  
հիշքէթի 1065 թուականը, որ է Վրբիստտաի  
թուականին 1654: Բնոր համառօտն ալ ինքը շի  
նած է, որ հիշքէթի 1000 թուականէն ինչուան  
1065 կը հասնի:

Զ • ԹԱԳՎԻՄ-ԻԻԹ-ԹԷՎԱՐԻՍ • յամանակա  
գրութիւն է պարսկերէն և տաճկերէն՝ աշխար-  
հիս սկիզբէն ինչուան Վրբիստտաի 1640 թուա-  
կանը: Բն գրուածքը եւրօպական լեզուներ ալ  
թարգմանուած ու տպուած է:

Է • ԱՆՆԵՆԻՄԱ, պոսինքն հայեւի աշխար-  
հի: Շատ յարգի աշխարհագրութիւն է արա-  
բերէն շարագրած ու ետքը տաճկերէն ալ թարգ-  
մանած ու տպուած: Բնոր լատին թարգմանու-  
թիւնն ալ տպուած է Վերմանիա 1784ին:

Ուրիշ շատ մանր գրուածքներ ալ ունի Վեա  
թիպ չէլէպին որ ամէնն ալ իր խորին հմտու-  
թեանը և սակաւագիւտ հանձարոյն ծնունդն ըւ  
լայնին յայանի կ'երեցրնեն:



## Յ Ե Ն Կ



Սուղան Օսման Ա. . . . .	1
Սուղան Օրխան . . . . .	4
Սուղան Մուրատ Ա . . . . .	7
Սուղան Պայեղիս Ա . . . . .	11
Սուղան Մէհմեթ Ա. . . . .	14
Սուղան Մուրատ Բ. . . . .	18
Սուղան Մէհմեթ Բ. . . . .	22
Սուղան Պայեղիս Բ. . . . .	29
Սուղան Սէլիմ Ա. . . . .	35
Սուղան Սիւլէյման Ա. . . . .	39
Սուղան Սէլիմ Բ. . . . .	46
Սուղան Մուրատ Գ. . . . .	50
Սուղան Ահմետ Ա. . . . .	54
Սուղան Մուրատ Գ. . . . .	58
Սուղան Մուսղաֆա Բ. . . . .	63
Սուղան Մահմուտ Ա. . . . .	68
Սուղան Մուսղաֆա Գ. . . . .	77
Սուղան Ապտուլ Համիտ Ա. . . . .	89
Սուղան Սէլիմ Գ, և Մուսղաֆա Գ. . . . .	94
Սուղան Մահմուտ Բ. . . . .	116
Ալայետտին Փաշա. . . . .	137
Ճէնաերէլի Գարա Խալիլ Խայրետտին Փաշա . . . . .	140

Իսպրահիմ փաշա . . . . .	141
Խալիլ փաշա . . . . .	142
Գարամանի 'Արշանճի Մէհմէտ փաշա . . . . .	143
'Ասուհ փաշա . . . . .	143
Էլմաս Մէհմէտ փաշա . . . . .	145
Բաղիպ Մէհմէտ փաշա . . . . .	145
Էլճաճ Մուսղաֆա Բեաթիպ Չէլէպի չաճի Խալիֆէ .	148











